

ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Բ

ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ ՄԵԾ



ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Բ

ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ ՄԵԾ

Խ Ր Ա Տ Ն Ե Ր

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Ս. ՄԱԿԱՐ ՄԵԾ
Ս – 970 Խրատներ: - Էջմիածին: Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածին, 2007.- 278 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկեմասությամբ՝
.....

ISBN 978-99930-75-53-0
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

Սուրբ Մակար Մեծի կյանքի և գրվածքների մասին

Սուրբ Անտոնի վարդապետական շնորհի մերձավոր ժառանգորդը սուրբ Մակար Եգիպտացին էր: Ավանդույթունները հիշատակում են սուրբ Անտոնին սուրբ Մակարի այցելուության միայն երկու դեպք, բայց պետք է ենթադրել, որ այդ այցելույթունները միակը չեն եղել: Հավանական է, սուրբ Մակարին մեկ անգամ չէ, որ վիճակվել է լսել սուրբ Անտոնի բազմաբառ զրույցները, որոնք, ինչպես վկայում է Կրոնիոսը, դուրս գալով իր մեկուսարանից, անց էր կացնում հաճախ ողջ գիշերվա ընթացքում իրենից խրատներ ստանալու համար հավաքվածների և եկեղեցում սպասող եղբայրների հետ: Դրա համար էլ սուրբ Մակարի զրույցներում գրեթե բառ առ բառ լսվում են սուրբ Անտոնի որոշ խրատները: Դրանք և մյուս զրույցներն իրար հետևից կարգացողն իսկույն ևեթ դա կարող է նկատել: Եվ չի կարելի չխոստովանել, որ այդ ջահը՝ սուրբ Մակարը, վառվել է այդ մեծ լուսատուից՝ սուրբ Անտոնից:

Սուրբ Մակարի կյանքի մասին ամբողջական պատմություններ չեն հասել: Ողջը, ինչը կարելի է իմանալ նրա մասին, հավաքված է նրա վարքագրության մեջ և զետեղված նրա զրույցների հրատարակության մեջ: Դրանց մեջ մի սքանչելագույն դրվագ է այն, թե նա ի՞նչ համբերությամբ էր արձագանքում իր շուրջ եղած կեղծ ամբաստանություններին, երբ ապրում էր բնակավայրերից ոչ հեռու: Ի՞նչ խոնարհություն, ի՞նչ անձնուրացություն, ի՞նչ նվիրվածություն Աստծո կամքին: Այդ գծերը բնութագրական էին սուրբ Մակարի հետագա ողջ կյանքի ընթացքում: Սատանան իսկ բարձրաձայն խոստովանեց, որ, ի վերջո, պարտված է սուրբ Մակարի խոնարհությունից: Հենց դա էլ եղավ հոգևոր կատարելության այն բարձրագույն աստիճանները և շնորհի պարգևները տանող սանդուղքը, ինչպիսիք տեսնում ենք, ի վերջո, սուրբ Մակարի մեջ:

Սուրբ Մակարի գրվածքներից այստեղ ընտրություն է արված, որը որոշակի կարգով կներկայացնի սուրբ Մակարի խրատները: Քանզի դրանք ներկայացնում են որոշակի ամբողջականություն և հրաշալի են նրանով, որ հանգամանորեն պարզաբանում են

քրիստոնեության գլխավոր գործը՝ լուսավորել և սրբագործել անկյալ հոգին Սուրբ Հոգու շնորհի ներգործությամբ: Այդ գործն էլ գլխավոր կիզակետն է, որին ուղղվում են նրա գրեթե բոլոր դասերը:

Սուրբ Մակարի գրվածքները ճգնակեցություն մանրամասների մասին չեն: Նրանք բոլորն էլ, ում դիմում էր իր զրույցներով, առանց այն էլ ջանադիր մշակներ էին: Այդ պատճառով էլ նա գերազանցապես լուկ հոգում էր հարկ եղած ուղղությունը տալու այդ աշխատանքներին՝ ցույց տալով դրանց վերջնական նպատակը, որին պետք է ձգտել: Դա, ինչպես արդեն նշվել է, հոգու սրբագործումն է Սուրբ Հոգու շնորհով: Հոգեղենացումը հոգու հոգին է: Առանց դրա կյանք չկա: Այն նաև գալիք լուսավոր վիճակի գրավականն է:

Սուրբ Մակարը գործ ունի անկյալ հոգու հետ և նրան ուսուցանում է խավարի այդ վիճակից, ապականությունից, մեռելայնությունից ինչպես դուրս գալ դեպի լույսը, ինչպես բժշկվել, կենդանություն ստանալ: Այդ պատճառով էլ նրա խրատները կարևոր են ոչ միայն աշխարհը մերժողների, այլ ընդհանրապես բոլոր քրիստոնյաների համար,

որովհետև հենց դա է քրիստոնեությունը՝ բարձրանալ անկյալ վիճակից: Հենց դրա համար եկավ Տերը. և Նրա բոլոր փրկարար ավանդները Եկեղեցում դրան էլ ուղղված են: Չնայած ամենուր որպես հաջողություն պայման այդ գործում նա համարում է աշխարհը մերժող կյանքը, սակայն յուրատեսակ աշխարհամերժում պարտադիր է նաև աշխարհիկների համար: Քանզի աշխարհի սերը թշնամանք է առ Աստված: Էլ ի՞նչ փրկություն աշխարհի սիրով:

Խրատներն ընտրելիս կհետևենք այն կարգին, որն ինքնըստինքյան ծագում է մտքում սուրբ Մակարի զրույցները կարդալիս: Սուրբ Մակարը հաճախ է մտքերն ուղղում դեպի մեր սկիզբը և պատկերում, թե ինչ լուսավոր վիճակում է եղել առաջին մարդը, որպեսզի առավել մռայլ թվա անկյալի՝ առանց այն էլ մռայլ տեսքը, որն ի ցույց է դնում վանող պատկերներով: Ե՛վ մեկը, և՛ մյուսը անում է առավել ակնհայտ դարձնելու Աստծո Միածին Որդու մարդեղանալու միջոցով մեր փրկության համար մեզ հայտնված Աստծո անսահման ողորմածությունը և Սուրբ Հոգու շնորհի բարեգթությունը: Այդ երեք իրողությունները նա մեկնում է՝ բոլոր

րի մեջ ցանկություն արթնացնելու կերտել իրենց փրկությունը և տոգորելու արիությունմբ, համբերատար քայլելու նրա բոլոր ճանապարհներով: Այդ ուղին սկսվում է անգամ կյանքի գնով Տիրոջը հետևելու հաստատակամ վճռականության ձևավորմամբ, անցնում է ինքնապարտադրման և ինքնադիմակայման սխրանքների միջով, բայց դրա միջոցով հասցնելով մինչև շնորհի շոշոփելի ներգործության, կամ, ինչպես ինքն է ասում, մինչև նրան, որպեսզի, ի վերջո, Սուրբ Հոգու շնորհը սրտում բացվի գորությունմբ և ներգործությունմբ, մեր Տեր Հիսուս Քրիստոսով տանում է երկրի վրա հնարավոր կատարելություն և ավարտվում է հոգիների երկակի վիճակով ապագա կյանքում:

Այսպիսով, սուրբ Մակար Մեծի բոլոր մտքերը մենք կամփոփենք հետևյալ վերնագրերի տակ.

Ա. Առաջին մարդու լուսավոր վիճակը

Բ. Անկյալի խավար վիճակը

Գ. Մեր միակ փրկությունը Տեր Հիսուս Քրիստոսն է

Դ. Տիրոջը հետևելու հաստատակամ վճռականության ձևավորումը

Ե. Մաքառումների վիճակը

Զ. Շնորհի ներգործությունն ընդունածների վիճակը

Է. Քրիստոնեական հնարավոր կատարելություն երկրի վրա

Ը. Ապագա վիճակը մահից և հարությունից հետո

Սուրբ Մակարի խոսքերն ամենուր մեջ են բերվում բառ առ բառ: Հավաքողը իր կողմից միայն վերնագրեր է դրել:



**Սուրբ Մակար Մեծի
գրույցներից ընտրված խրատներ
քրիստոնեական կյանքի մասին**

**Ա
Նախկին լուսավոր վիճակը**

ա) Մարդու ծայրագույն նպատակը և գերագույն բարիքը Աստվածհաղորդությունն է: Աստված բարեհաճ է հանգչել նրանում, և մարդն էլ ոչ մի տեղ հանգիստ չի գտնում, քան Աստծո մեջ: Մարդն Աստծո հետ այդպիսի հարազատության մեջ էր արարչության նախասկզբնական կոչվածությամբ:

1. Չկա ուրիշ այլ մերձավորութուն և փոխադարձութուն, ինչպես հոգին ունի Աստծո հետ և Աստված՝ հոգու հետ: Աստված ստեղծել է տարբեր արարածներ. ստեղծել է երկինքը և երկիրը, արեգակը, լուսինը, ջրերը, պտղաբեր ծառեր, ամեն տեսակ կենդանիներ: Բայց այդ արարածներից և ոչ մե-

կի մեջ չի հանգչում Տերը: Յուրաքանչյուր արարած Նրա իշխանության տակ է, սակայն Տերը նրանցում չի հաստատել զահ, չի հաստատել նրանց հետ հաղորդակցություն, շնորհ է արել միայն մարդուն, նրա հետ մտնելով հաղորդակցության մեջ և նրա մեջ հանգչելով: Տեսնո՞ւմ ես արդյոք դրանում Աստծո հարազատությունը մարդու հետ և մարդունը՝ Աստծո հետ:

2. Ինչպես երկինքը և երկիրը ստեղծեց Աստված մարդու բնակության համար, այդպես էլ մարդու մարմինը և հոգին ստեղծեց որպես Իր բնակարան, որպեսզի բնակվի և հանգիստ գտնի նրա մարմնում, ինչպես Իր տանը՝ սիրած հոգուն ունենալով որպես սքանչելի հարս՝ ստեղծված Իր պատկերով: Դրա համար էլ Առաքյալն ասում է. Նրա տունը մեզ իսկ էնք (Եբր., 3, 6):

3. Բարձր են մարդու արժանիքները: Նայի՛ր, ինչպիսին են երկինքը, երկիրը, արեգակը և լուսինը. և նրանց մեջ չէ, որ Տերը բարեհաճում է հանգստանալ, այլ լուր մարդու մեջ: Այդ պատճառով էլ մարդն արժանավորն է, թանկ է բոլոր արարածներից, նույնիսկ համարձակվում եմ ասել, ոչ միայն ե-

րևելի, այլև աներևույթ, այսինքն՝ ծառայող հոգիներից: Քանզի Միքայել և Գաբրիել Հրեշտակապետների մասին չէ, որ ասել է Աստված. ստեղծե՞նք Մեր կերպարանքով ու անանություններ (Ծննդ., 1, 26), այլ ասել է խոհական մարդկային էության մասին՝ նկատի ունենալով անմահ հոգին: Գրված է՝ Հրեշտակաց բանակն Իր երկյուղածների շուրջն է (Սաղմ., 33, 8):

4. Այդ պատճառով էլ խոհեմ և ողջամիտ հոգին, շրջելով ամենայն արարվածների մեջ, ոչ մի տեղ չի գտնում հանգստություն, այլ միայն Միակ Տիրոջ մեջ: Եվ Տերը ոչ մեկին այնպես բարեհաճ չէ, ինչպես մարդուն:

5. Ինչպես մեծահարուստ նշանադրված կույսը մինչ ամուսնությունն ինչպիսի ընծաներ էլ որ ստանա, չի հանգստանում դրանցով, քանի դեռ չի կատարվել ամուսնական միությունը, այդպես էլ հոգին ոչնչով չի հանգստանում, քանի դեռ չի հասել կատարյալ հաղորդության Տիրոջ հետ: Կամ էլ ինչպես մանուկը, երբ քաղցած է, չի նկատում ոչինչ՝ ո՛չ աղամանդները, ո՛չ թանկարժեք հագուստները, այլ ողջ ուշադրությունը դարձնում է սնող պտուկներին,

որպեսզի ըմբռնելի կաթը, այդպես էլ դատիր հոգու մասին (այսինքն՝ ամեն ինչ մի կողմ թողնելով, նա փափագում է ճաշակել Աստծուն և այդ ժամանակ է միայն հանգստանում):

բ) ունենալով այդպիսի կոչվածություն, մարդն ընդունակ էր դրան արարչագործության պահից նեթ: Արարվելիս նա մոտ դրվեց նպատակին:

6. Հոգին մեծասքանչ և հրաշալի կերտվածք է: Արարելիս Աստված այնպիսին ստեղծեց հոգին, որ նրա բնության մեջ դրված չէին արատներ: Ընդհակառակը, ստեղծեց այն Հոգու առաքինությունների պատկերով, դրեց նրանում առաքինության օրենքները՝ խոհականություն, ողջամտություն, ճանաչողություն, հավատ, սեր և այլ առաքինություններ՝ Հոգու պատկերով:

7. Նա նրա մեջ դրեց խորագիտություն, կամք, իշխանական միտք, հաստատեց նրանում մի ուրիշ սքանչելի նրբինություն՝ դարձրեց դյուրաշարժ, թեթևաթուիչ, անխոնջ, շնորհեց նրան հայտնվել և անհետանալ մի ակնթարթում և մտքերով Իրեն ծառայել՝ ըստ Հոգու ցանկություն: Մի խոսքով, արարեց նրան այնպիսին, որպեսզի

դարձնի նրան հարս և հաղորդակից Իրեն, որպեսզի և՛ Ինքը միության մեջ լինի նրա հետ, և՛ նա Իր հետ դառնա մեկ հոգի, ինչպես ասված է՝ Եվ ով մերձեցում է Տիրոջը, մե՛կ հոգի է դառնում նրա հետ (Ա Կորնթ., 6, 17):

8. Ինչպես այր մարդն իր տանը խնամքով ամբարում է ամենայն բարիք, այդպես էլ Տերն է Իր տան մեջ՝ հոգում և մարմնում, ժողովում և ամփոփում Հոգու երկնային հարստությունը:

գ) Այդ պատճառով նախաստեղծներն Աստծո մեջ էին և օժտված էին մեծ առավելություններով և բարիքներով:

9. Մինչ զանցանքը նրանք զգեստավորված էին Աստծո փառքով... Ադամը, քանի դեռ պահում էր պատվիրանները, Աստծո բարեկամն էր և Աստծո հետ դրախտում էր:

10. Ադամի մեջ գոյ էր Բանը, և նա իր մեջ ուներ Աստծո Հոգին:

11. Սկզբնապես մաքուր միտքը իր պաշտածության մեջ լինելով, հայում էր իր Տիրոջը. և Ադամը, լինելով մաքրության մեջ, իշխում էր իր խորհուրդներին վրա և երանելի էր՝ պարուրված աստվածային փառքով:

12. Նրա մեջ գոյեղ Բանը ամեն ինչ էր նրա համար՝ և՛ գիտություն, և՛ զգայություն (երանություն), և՛ ժառանգություն, և՛ վարդապետություն: Նախաստեղծները նաև դրսից էին պարուրված փառքով, այնպես որ, իրենք չէին տեսնում իրենց մերկությունը:

13. Մարդը պատվի և մաքրության մեջ էր, տիրակալն էր ամեն ինչի, սկսած երկնքից մինչև հովիտները, ունակ էր տարբերել կրքերը, օտար էր դեերին, գերծ էր մեղքից և արատներից, Աստծո նմանությունը էր:

դ) Սակայն բարիքների այդ լիութունը չուներ պարտադրողական ոչինչ: Մարդը ազատ էր լինել Աստծո և շնորհի հետ, կամ առանձնաճակ նրանցից: Նա առանձնացավ և ընկավ, ինչպես և ոգիներն ընկան:

14. Բոլոր բանական էակներին, նկատի ունեմ Հրեշտակներին, հոգիներին և դեերին, Արարիչը ստեղծել է մաքուր և շատ պարզ: Իսկ թե դրանցից ոմանք շեղվեցին դեպի չարը, ապա դա տեղի ունեցավ նրանց ինքնակամությունից, քանի որ նրանք իրենց սեփական կամքով խոտորվեցին արժանահարկ խորհրդից:

15. Տեսանելի արարածները կապված են ինչ-որ մի անշարժ բնությունը: Նրանք դուրս գալ չեն կարող այդ վիճակից, ինչպիսին ստեղծվել են, և չունեն կամք: Իսկ դու ստեղծված ես Աստծո պատկերով և նմանությունը: Ինչպես որ Աստված է ազատ և արարում է՝ ըստ կամեցողության, այդպես էլ դու ես ազատ: Բնությունը դու դյուրափոփոխ ես:

16. Մեր բնությունը դյուրընկալ է և՛ բարու, և՛ չարի համար, և՛ Աստծո շնորհի համար, և՛ հակառակ զորության համար: Այն անպարտադրելի է:

17. Այդպես և Ադամն իր սեփական կամքով զանցառեց պատվիրանը և լսեց չարին:

18. Մեծ հարստություն և մեծ ժառանգություն էր նրա համար պատրաստված: Բայց, հենց որ վատթար խորհուրդներ և մտքեր ունեցավ, նա մեռավ Աստծո համար:



Բ Անկյալի խավար վիճակը

ա) Անսալով բանասարկուին, Ադամը իրեն մատնեց նրան, իսկ սա, տիրելով Ադամին, նրան պարուրեց ամենայն չարով:

19. Ադամը, զանցառելով Աստծո պատվիրանը և անսալով նենգ օձին, իրեն մատնեց և հանձնեց բանասարկուի տիրապետութեանը և հոգով, այդ սքանչելի արարածով, զգեստավորվեց չարը: Հոգին կոչվում է սատանայական խավարի մարմին, քանի դեռ նրանում գո է հոգևոր խավարը, քանի որ այն ապրում և պահվում է այնտեղ խավարի սատանայական ժամանակներից ի վեր, ինչպես և Առաքյալը, հիշատակելով մեղանշական մարմնի մասին և մահվան մարմնի մասին, ասում է՝ որպեսզի քայքայվի մեղքի մարմինը (Հռոմ., 6, 6), և կրկին՝ Ո՞վ կփրկի ինձ այս մարմնից, որ մահիցն է (Հռոմ., 7, 24): Հոգին ոչ Աստծո բնությունից է և ոչ էլ սատանայական խավարի բնությունից, այլ բանական արարած է՝ տոգորված վայելչութեամբ, վեհ

է և հրաշալի, սքանչելի նմանությունն ու պատկերն է Աստծո և մութ կրքերի չարությունը նրա մեջ մտավ պատվիրանազանցութեան պատճառով:

20. Չար իշխանը՝ խավարի թագավորությունը, սկզբնապես գերելով մարդուն, այնպես պաշարեց ու պարուրեց հոգին խավարի իշխանութեամբ, ինչպես զգեստավորում են մարդուն, որպեսզի դարձնեն նրան թագավոր և տան նրան ամենայն արքայական հանդերձանք, որպեսզի ոտքից գլուխ կրի ամենայն թագավորականը: Այդպես չարի իշխանը մեղքով պարուրեց հոգին, նրա ողջ բնությունը և նրան ամբողջովին պղծեց, ողջը գերեվարեց և տարավ իր թագավորություն, նրա մեջ իր իշխանությունից ազատ ոչ մի անդամ չթողեց՝ ո՛չ խորհուրդները, ո՛չ միտքը, ո՛չ մարմինը, այլ պատեց այն խավարի պատմուճանով: Ինչպես (հիվանդութեան ժամանակ) մորմոքում է մարմնի ոչ թե մի անդամը, այլ ինքն ամբողջութեամբ ենթարկված է տառապանքների, այդպես էլ հոգին ամբողջութեամբ տառապում էր արատի և մեղքի ծյուրանքից: Սատանան ողջ հոգին՝ մարդու այդ անհրա-

ժեշտ մասը, նրա այդ անհրաժեշտ անդամը, առավ իր չարութեան ճիրանների մեջ, այսինքն՝ մեղքի մեջ, և այդպիսով մարմինը դարձվեց չարչարանքի և ապականման ենթակա:

21. Երբ Առաքյալն ասում է՝ մերկացել եք Ռիմ մարդուց (Կողոս., 3, 9), ապա նկատի ունի կատարյալ մարդուն, որի աչքերին նույնական են իր աչքերը, գլխին՝ իր գլուխը, ականջներին՝ իր ականջները, ձեռքերին՝ իր ձեռքերը, ոտքերին՝ իր ոտքերը: Քանզի սատանան պղծեց և հին, ապականված, անմաքուր, աստվածամարտ, Աստծո օրենքին անհնազանդ մարդուն ամբողջութեամբ ներքաշեց մեղքի մեջ, որպեսզի նա այլևս չնայի, ինչպես վայել է մարդուն, այլ նայի չարութեամբ, լսի չարութեամբ, ոտքերը փութան ոճրագործութեան, ձեռքերը գործեն անօրենս, իսկ սիրտը խորհի չարաբար:

22. Հին մարդն իր վրայից պոկեց-հանեց կատարյալ մարդուն և կրում է խավարի թագավորութեան հազուստը, հայհոյութեան, անհավատութեան, աներկյուղածութեան, փառասիրութեան, հպարտութեան, արծաթասիրութեան, հեշտասիրութեան հազուստը:

տը և խավարի թագավորութեան մնացյալ հանդերձները, անմաքուր, աղտոտ և գարշելի քրջերը:

23. Դրան էլ հենց ձգտում էր թշնամին, որպեսզի Ադամական զանցառութեամբ խոցի և մթագնի ներքին մարդուն, Աստծուն տեսնող իշխանական միտքը: Եվ նրա աչքերը, որոնց համար երբ անհաս դարձան երկնային բարիքները, սկսեցին բացվել արդեն արատների և կրքերի համար:

24. Խավարի շղթաներով չարի ոգիները կապկպում են (անկյալ) հոգին, որի պատճառով ինչքան էլ որ կամենա, չի կարող սիրել Տիրոջը, ինչքան էլ որ կամենա՝ հավատալ, ինչքան էլ որ կամենա՝ աղոթել, քանզի առաջին մարդու մեղքի ժամանակներից հակառակութունը և՛ բացահայտ, և՛ քողարկված, ամբողջովին տիրել է մեզ:

բ) Տեսնելով նման կործանված վիճակը՝ Աստված և Հրեշտակները խղճացին անկյալին:

25. Այն օրը, երբ Ադամն ընկավ, եկավ Աստված և, շրջելով դրախտում և տեսնելով Ադամին, խղճաց, այսպես ասած, և բարբառեց. «Այդպիսի բարիքներ ունենալով, ինչ-

պիսի չարիք ընտրեցիր: Այդպիսի փառքից հետո ի՛նչպիսի անպատվութիւնն ես կրում քո վրա: Ինչո՞ւ ես արդ այդքան մթամած, այդպես այլանդակված, այդպես ապականված: Այդպիսի լույսից հետո ի՛նչպիսի խավար պատեց քեզ»: Երբ ընկավ Ադամը և մեռավ Աստծո համար, կարեկցեց նրան Արարիչը: Հրեշտակները, բոլոր զորութիւնները, երկինքը, երկիրը, բոլոր արարածները սգացին նրա մահը և անկումը: Քանզի արարածները տեսան, որ իրենց համար թագավոր կարգվածը դարձավ հակառակ և սատանայական խավարի ստրուկը: Այսպիսով, խավարով, դառը և նենգ խավարով պարուրեց նա իր հոգին, քանզի թագավորեց նրա վրա խավարի իշխանը: Նա էր (Ադամը) հենց ավազակներից խոցված և կիսամեռ եղածը, երբ իջնում էր Երուսաղեմից Երիքով:

գ) Արդարութիւնը, սակայն, ենթարկեց նրան արդարացի պատժի. և նա լքվեց ինչպես ամայացած տուն:

26. Պատվիրանագանց դառնալով, Ադամն արտաքսվեց դրախտից և հարուցեց իր հանդեպ Աստծո բարկութիւնը: Ինչպես

մի ժամանակ բարկանալով հրեաների վրա, Աստված Երուսաղեմն ի խայտառակութիւն մատնեց թշնամիներին, և նրանց ատողները սկսեցին իշխել նրանց, և այնտեղ արդեն ո՛չ տոնակատարութիւններ, ո՛չ էլ զոհաբերութիւններ արվեցին. ճիշտ այդպես էլ հոգու վրա զայրանալով պատվիրանը զանցառելու համար, մատնեց նրան թշնամիներին, դեբրին և կրքերին, և նրանք, պատրելով նրան, կատարելապես նվաստացրին, և այնտեղ արդեն հոգուց Աստծուն ընծայված ո՛չ տոնակատարութիւն եղավ, ո՛չ խնկարկութիւն, ո՛չ էլ զոհաբերութիւն, քանի որ նրանում դեպի արժանավայելը տանող ուղիները լցվեցին վայրի գազաններով, բնակալեցին նրանում զեռունները, սողունները՝ չար ոգիները: Եվ ինչպես տունը, եթե տերն այնտեղ չի ապրում, պատվում է խավարով, փառազրկությամբ, անարգանքով, լցվում է աղտոտությամբ, շարավով և ժահրով, այդպես էլ հոգին, եթե նրա Տերը այնտեղ չի ցնծում Հրեշտակների հետ, լցվում է մեղսական խավարով, ամոթալի կրքերով և ամենայն անփառունակությամբ:

27. Քանի որ մարդը անհնազանդության

պատճառով անեծք անեծքի վրա ստացավ՝ փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը (Ծննդ., 3, 18), և դարձյալ՝ հողը մշակես և իր պտուղները չտեսնես, ապա նրա սրտի հողում վերակենդանացան և աճեցին փուշ ու տատասկ: Թշնամիները խաբեությամբ հափշտակեցին նրա փառքը և պատեցին նրան ամոթով: Հափշտակվեց նրա լույսը, և պատվեց նա խավարով: Սպանեցին նրա հոգին, ցիրուցան և բաժան-բաժան արեցին նրա խորհուրդները, ցած նետեցին նրա միտքը բարձունքներից, և մարդ-իսրայելը դարձավ ստրուկը իսկական Փարավոնի, և նա կարգեց մարդու վրա գործերի կառավարիչներ և հսկիչներ՝ չար ոգիներ, որոնք հարկադրում են մարդուն կամա թե ակամա կատարել նրա խորամանկ գործերը, պատրաստել շաղախ և աղյուսներ: Մարդուն մտքերի երկնային կերպից հեռացնողները հասցրին նրան չար գործերի՝ նյութական, երկրային, անցողիկ, ունայն խոսքերի, խուլումների և դատողությունների, քանի որ հոգին, ցած ընկնելով իր բարձունքներից, հանդիպեց մարդատյաց թագավորության և դաժան իշխանների, որոնք պարտադրում են

նրան կառուցել իրենց արատների մեղսավոր քաղաքը:

դ) Անկման հետևանքով բոլոր արարածները և մարդկային ողջ ցեղը ենթարկվեցին թշնամուն և կրքերի բռնությանը:

28. Պատկերացրո՛ւ մի թագավոր, որն ունի ունեցվածք, հարստություն և իրեն ծառայելու պատրաստ հպատակներ: Եվ այնպես պատահեց, որ թշնամիները գերեցին նրան և տարան: Հենց որ նա բռնվեց և տարվեց, նրա ծառաներին և կառավարիչներին էլ հարկ է նույնպես հետևել նրան, գնալ նրա հետևից: Այդպես և Ադամը Աստուծոց անարատ ստեղծվեց նրան ծառայելու համար, և Ադամին ծառայելու տրվեցին այդ արարածները, քանզի նա կարգվեց տեր և թագավոր բոլոր արարածների: Բայց հենց որ մուտք գործեց և գրուցեց նրա հետ նենգ խոսքը, Ադամը նրան նախ ընդունեց արտաքին լսելիքով, այնուհետև թափանցեց այն նրա սիրտը և համակեց նրա ողջ էությունը: Եվ այդպիսով նրան գերելով, նրա հետ գերվեցին նաև նրան ծառայող և հնազանդվող արարածները, քանի որ նրա միջոցով մահը

Թագավորեց ամեն մի հոգու վրա, և նրա անհնազանդությամբ այնպես ջնջվեց Ադամի ողջ կերպարանքը, որ մարդիկ կերպարանափոխվեցին և հասան մինչև դեեր երկրպագելուն: Քանզի ահա, Աստուծոց սքանչելիորեն ստեղծված երկրի պտուղներն էլ են մատուցվում դեերին: Նրանց զոհասեղանին դրվում են հաց, գինի, և ձեթ, և կենդանիներ: Անգամ իրենց որդիներին և զուստրերին զոհաբերեցին դեերին:

29. Ադամի պատվիրանազանցության ժամանակներից հոգու խորհուրդները զատվեցին Աստուծո սիրուց, ցրվեցին այս դարում և խառնվեցին նյութական ու երկրային խորհուրդների հետ: Եվ ինչպես պատվիրանազանց Ադամն ընդունեց իր մեջ չարաղետ կրքերի թթխմորը, այդպես էլ նրանից ծնվածները և Ադամի ողջ սերունդը ժառանգաբար հաղորդակից դարձան այդ թթխմորին: Աստիճանաբար հասունանալով և աճելով՝ մարդկանց մեջ այնքան բազմացան մեղսալի կրքերը, որ հասան անգամ հեշտասիրության, անառակություն, կռապաշտության, սպանությունների և այլ ունայն գործերի, մինչև որ ողջ մարդկությունը խմորվեց ա-

րատներով: Չարն այնքան աճեց մարդկանց մեջ, որ մտածեցին, իբր Աստված չկա, սկսեցին երկրպագել անշունչ քարերին: Ամենին չկարողացան անգամ պատկերացում կազմել Աստուծո մասին: Չարաղետ կրքերի թթխմորը այդ աստիճան խմորեց հին Ադամի սերունդը:

30. Այն բանից հետո, երբ մարդը շեղվեց պատվիրանից և ենթարկվեց բարկության դատաստանին, մեղքը նրան առավ իր հպատակության տակ, և ինքը, որպես դառնության մի խորխորատ, խորությամբ և նուրբ կերպով թափանցեց ներս, տիրեց հոգու անդաստանները՝ նրա խորագույն գաղտնաբանները: Այդ կերպ և՛ հոգին, և՛ նրա հետ հունցված մեղքը նմանեցնում ենք վիթխարի ծառի, որը բազմաթիվ ճյուղեր ունի, իսկ արմատները հողի խորքում են: Այդպես և հոգու մեջ թափանցած մեղքը տիրեց նրա ողջ անդաստաններին՝ մինչև խորագույն գաղտնաբանները, վերածվեց սովորության և նախապաշարումի և մանկական հասակից յուրաքանչյուրի մեջ աճում է, փարթամանում և արատների է մղում նրան:

31. Ղազարոսը, որին հարուժյուն տվեց

Տերը, այդ Ղազարոսը՝ լցված սաստիկ գարշահոտությամբ, այնպես որ ոչ ոք չէր կարող մոտենալ նրա դագաղին, Ադամի կերպարանքն ուներ, որի հոգին ընդունել էր սաստիկ գարշահոտություն և լցված էր պղծությամբ ու խավարով: Բայց դու, երբ լսում ես Ադամի՝ ավագակներից խոցվածի մասին և Ղազարոսի մասին, թույլ մի տուր, որ միտքդ սար ու ձոր ընկնի, այլ ամփոփվիր ինքդ քո մեջ, քանզի դու էլ ունես այդ նույն խոցերը, նույն ժանտահոտությունը, նույն խավարը: Մենք բոլորս որդիներն ենք այդ խավարած սերնդի, բոլորս էլ մասնակիցն ենք նույն գարշահոտության: Ինչ արտերով տանջվում էր Ադամը, նույնով էլ տանջվում ենք մենք բոլորս՝ Ադամի սերմից սերվածներս: Քանզի նման տկարություն, ինչպես ասում է Եսային, մեզ էլ հասավ. վերքերի, այտուցների և շարավոտ խոցերի վրա դնելու ո՛չ սպեղանի կա, ո՛չ ձեթ և ո՛չ էլ վիրակապ (Եսայի, 1, 6): Այդպիսի անբուժելի խոցով խոցված ենք մենք:

32. Ինչպես Եգիպտոսում երեքօրյա խավարի ընթացքում որդին հորը չէր տեսնում, եղբայրը՝ եղբորը, ընկերը՝ անկեղծ ընկերօրը, քանզի նրանց ծածկել էր խավարը, այդ-

պես էլ, երբ Ադամը պատվիրանազանց եղավ, ընկավ իր երբեմնի փառքից և ենթարկվեց աշխարհի ոգուն, և մթության քողն իջավ նրա հոգու վրա, սկսած նրանից մինչև վերջին Ադամը՝ մարդը չտեսավ ճշմարիտ Երկնային Հորը, գլխասիրտ և բարի մորը՝ Հոգու շնորհը, կաթոգին և փափագելի եղբորը՝ Տիրոջը, իր անկեղծ բարեկամներին՝ սուրբ Հրեշտակներին, որոնց հետ երբևէ ուրախության մեջ ցնծում և բերկրում էր: Եվ ոչ միայն մինչև վերջին Ադամը, անգամ հիմա էլ, ում համար չի ճառագել արդարության արեգակը՝ Քրիստոսը, ում հոգու աչքերը չեն բացվել, լուսավորվելով ճշմարիտ լույսով, բոլոր նրանք պատված են մեղքի խավարով, իրենց մեջ ունեն նույն ցանկասիրության ներգործությունը, ենթակա են նույն պատժին և աչքեր չունեն, որոնցով կարողանային տեսնել Հորը:

Ե) Անկման շոշափելի հետևանքը աշխարհում ամենուր տիրող խառնաշփոթն է:

33. Այս աշխարհի որդիները նմանվում են այս երկրի մաղի մեջ լցված ցորենի և մաղվում են այս աշխարհի հեղհեղուկ խոր-

հուրդներով՝ երկրային գործերի անդադրում հուզումներից, ցանկություններից, խայտաբեկ նյութական պատկերացումներից: Սատանան ցնցում է հոգիները և մաղով, այսինքն՝ երկրային գործերով մաղում է ողջ մեղսավոր մարդկային ցեղը: Անկման ժամանակներից ի վեր, երբ Ադամը պատվիրանազանց եղավ և ենթարկվեց չար իշխանին, որն իշխանություն ձեռք բերելով նրա վրա, գայթակղող և խռովիչ խորհուրդներով մաղում է այս աշխարհի բոլոր զավակներին և նրանց հարում երկրի մաղում:

34. Ինչպես մաղի մեջ լցված ցորենը մաղվելիս իրար է զարնվում և շարունակ այս ու այն կողմ է տարուբերվում, այդպես էլ չարի իշխանը բոլոր մարդկանց երկրային գործերով տարուբերում է, հասցնում է խուճապի և իրարանցման, ստիպում է տարվել ունայն խորհուրդներով, զազրելի ցանկություններով, երկրային և աշխարհիկ կապերով՝ անդադար գերելով, խռովելով, որսալով Ադամի ողջ մեղսավոր սերունդը: Տերն Ինքը Առաքյալներին կանխավ ասաց նրանց դեմ չարի գալիք ընդվզումի մասին. սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել: Բայց ես աղոթեցի

ձեզ համար Իմ Հորը, որպեսզի քո հավատը չպակասի (Ղուկ., 22, 31-32): Քանզի Արարչի՝ Կայենին ասված խոսքը և վճիռը՝ առ ու ողորի և երեսնան մեջ պիտի լինես երկրի վրա (Ծննդ., 4, 12), խորհրդաբար օրինակ ու նմանություն է ծառայում բոլոր մեղավորների համար, քանի որ Ադամի սերունդը, զանցառելով պատվիրանը և դառնալով մեղսավոր, ծածկաբար իր վրա վերցրեց այդ նմանությունը: Երկչոտության, վախի, այլազան հուզումների, ցանկությունների, խայտաբեկ և տարատեսակ հաճույքների անհաստատ խորհուրդներով մարդիկ հասցվում են խռովքի և անկայունության: Այս աշխարհի իշխանն ալեկոծում, փոթորկում է Աստուծոց չծնված ամեն մի հոգու և մաղի մեջ շարունակ հարվող ցորենի նման այլազան ձևերով ալեկոծում է մարդկային խորհուրդները, բոլորին խռովքի մեջ գցելով և որսալով աշխարհիկ գայթակղություններով, մարմնական հաճույքներով, սարսափներով, հուզումներով (Ղուկ., 22, 31-32):

35. Եվ Տերը, ցույց տալով, որ չարի սաղրանքներին ու ցանկություններին հետևողները կրում են իրենց վրա Կայենի նենգութ-

յան նմանութիւնը, մերկացնելով նրանց, ասաց. Ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել, թեև նա ի սկզբանէ մարդասպան էր և ճշմարտության մէջ չմնաց (Հովհ., 8, 44): Այդ պատճառով էլ Ադամի ողջ մեղսավոր սերունդն իր վրա ծածկաբար կրում է այդ խարանդեակրի մաղով ձեզ մաղող սատանայից ահ ու դողի և երերման մեջ պիտի լինեք: Ինչպես մեկ Ադամից երկրով մեկ տարածվեց ողջ մարդկային ցեղը, այդպես էլ մի ինչ-որ մոլի ախտ թափանցեց ողջ մարդկային մեղսավոր ցեղի մեջ. և չարութեան իշխանը մենակ ի վիճակի է մաղել բոլորին անկայուն, նյութական, սին, խառնակ խորհուրդներով: Եվ ինչպես քամին կարող է շարժել և տարուբերել ողջ բուսականութիւնը և սերմերը, և ինչպես գիշերային խավարն է տարածվում ողջ աշխարհի վրա, այդպես էլ չարի իշխանը, լինելով մեղքի և մահվան ինչ որ սնոտի խավար, ինչ որ անտեսանելի և դաժան հողմով փոթորկում է և քամու բերան է հանում երկրի վրա ողջ մարդկային ցեղը, անհաստատ մտքերով և աշխարհային ցանկութիւններով որսալով մարդկային սրտեր, անգիտութեան, կուրութեան և մոռացութեան

խավարով է համակում ի վերուստ չծնված, և՛ խոհերով, և՛ մտքով այլ կյանք չտեղափոխված ամենայն հոգի, ըստ ասվածի՝ մեր քաղաքացիությունը երկնքում է (Փիլիպ., 3, 20):

զ) Բոլորը զգում էին դա, սակայն ոչ ոք չգիտեր, թե դա ինչ չարիք է և որտեղից է այն, համարելով նման վիճակը բնական:

36. Տեսանելի աշխարհը, արքաներից մինչև թշվառներ, բոլորը խռովքի, խաթարվածութեան, պայքարի մեջ են և նրանցից ոչ մեկը չգիտի դրա պատճառները, այսինքն՝ այդ ակներև չարիքի, որը ներս սարդեց Ադամի պատվիրանազանցութեան՝ մահվան այդ խայթի պատճառով, քանի որ վերահաս մեղքը, հանց բանական մի գորութիւն և սատանայի էութիւն, սերմանեց ամենայն չարիք: Այն գաղտնածածուկ գործում է ներքին մարդու և մտքի վրա, և պայքարում է նրա դեմ խորհուրդներով: Իսկ մարդիկ չգիտեն, որ գործում են ինչ-որ խորթ ուժի դրդմամբ, ընդհակառակն, մտածում են, որ դա բնական է և որ դա անում են իրենց սեփական դատողութեամբ: Սակայն, իրենց մտքում Քրիստոսի խաղաղութիւնը և

Քրիստոսի լույսն ունեցողները գիտեն, թե որտեղից է հարուցվում այդ ամենը:

37. Ինչքան թագավորներ ծնվեցին Ադամի սերունդից, որոնք նվաճեցին ողջ երկիրը և շատ համարեցին իրենց արքայական տիրակալությունը: Եվ ոչ մեկն այդպիսի լիության մեջ չկարողացավ ճանաչել այն խաթարումը, որ առաջին մարդու զանցանքով տեղի ունեցավ հոգում և մթագնեց նրան, ինչի պատճառով նա չի ճանաչում իր մեջ տեղի ունեցած փոփոխությունը, այն է՝ միտքն իր անկման պատճառով արդ պատված է ամոթով, և սրտի աչքերի կուրանալու պատճառով չի տեսնում այն փառքը, որը տեսնում էր մեր հայր Ադամը մինչև պատվիրանազանցությունը:

38. Աշխարհում եղել են պարապ-սարապ իմաստուններ, նրանցից ոմանք իրենց գերազանցությունն են ցույց տվել իմաստասիրությունից մեջ, ուրիշները զարմացրել են սոփեստական վարժանքներով, այլոք իրենց ուժն են ցույց տվել ճարտասանությունից, մյուսներն եղել են քերականներ և բանաստեղծներ ու գրել են պատմություն ընդունված կանոններով: Եղել են և այլևայլ արվեստ

տագետներ՝ վարժված աշխարհիկ արվեստներում... Եվ նրանք բոլորը՝ գերված իրենց մեջ բնակվող օձից և չգիտակցելով իրենց մեջ ապրող մեղքը, դարձան գերիներ և ստրուկներ չարանենգ ուժի և ոչ մի օգուտ չստացան իրենց գիտելիքներից ու արվեստից (45, 2):

Է) Ինչքան էլ որ մեծ է անկման չարիքը, այն մարդուն ամբողջովին չմեռցրեց: Նրա մեջ մնացին հոգևոր կյանքի դրսևորումներ:

39. Չենք խոսում, որ մարդը ամբողջովին կորսվեց, ոչնչացավ, մեռավ: Նա Աստծո համար մեռավ, բայց ապրում է իր սեփական բնությունից:

40. Մարդը կործանվեց հանցանքի պատճառով, դարձավ խոցելի: Սատանան մթագնեց նրա միտքը: Եվ մի մարդու մեջ իրականում մեռած է, իսկ մյուսի մեջ ապրում է, դատում է, ունի կամք:

41. Չանցառությունից հետո մնաց ճանաչողությունը: (Դա շոշափելիորեն տեսանելի է խղճի գործողություններում): Երբ ավագակին դատարան են տանում և սկսում են դատել, իշխանը հարցնում է նրան. երբ

չարիք գործեցիր, միթե՞ չգիտեիր, որ բռնակե-
լու ես ու դատապարտվելու ես մահվան: Եվ
ավագակը չի համարձակվի ասել, թե չգի-
տեր, քանի որ դա հայտնի էր իրեն: Շնացո-
ղը, անառակը միթե՞ չգիտի, որ վատ բան է
անում: Չարագործը միթե՞ չգիտի, որ մեղք
է գործում: Այդպես և մարդիկ, առանց
Գրվածքների, բնական ըմբռնողությունը
չգիտե՞ն միթե, որ Աստված կա: Նրանց հա-
մար անհնարին կլինի վերոհիշյալ օրն ասել՝
մենք չգիտեինք, որ Աստված կա: Քանզի
երկնքից որոտներով և փայլատակումներով
ձայնվում է նրանց. չգիտե՞ք միթե, որ կա
Աստված՝ արարածների կառավարիչը:

42. Կեղծ ուսմունքով մոլորության մեջ
ընկած ոմանք անարդարացի պնդում են, որ
մարդը հաստատապես մեռած է և չի կարող
ոչինչ բարի գործել:

43. Մարդու մեջ մնացել է ազատություն-
ը, որ Աստված տվեց նրան սկզբում: Ինչ-
պես կատարյալը բարու հետ կապված չէ
ինչ-որ անհրաժեշտությունը, այդպես էլ
կապված չէ չարին մեղքերով ապականվածը
և իրեն սատանայի անոթ դարձրածը:

44. Դու ազատ ես: Եվ եթե ուզում ես կոր-

ծանվել, ապա քո բնությունը դուրափո-
փոխ է: Ով կամենում է, նա էլ հնազանդ-
վում է Աստծուն և գնում է արդարության
ճանապարհով ու իշխում է ցանկություննե-
րին, քանզի նրա միտքը հակամարտ է
դրանց ու հաստատուն խորհուրդներով կա-
րող է հաղթահարել արատավոր ձգտում-
ներն ու նողկալի ցանկությունները:

45. Զուր են, սակայն, ամբարտավանանա-
լով, մտածում սեփական ազատությունը վե-
րացնել իրենց միջից հանել մեղսածին ա-
ռիթները: Մարդու համար հնարավոր ազա-
տությունը ուղղված է այն բանին, որպեսզի
ընդդիմանա սատանային, այլ ոչ թե այն բա-
նին, որպեսզի այդ հնարավորությունը ան-
պայմանորեն նաև իշխանություն ունենա
կրքերի վրա: Քանզի ասված է՝ Եթե Տերը
տուն չշինի, իզուր են շարչարվում այն շինողները,
և եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում
պահպանները նրա (Սաղմ., 126, 1):

46. Մեր մեջ չարը գործում է ամբողջ ու-
ժով և շոշափելիությամբ, ներշնչելով ամե-
նայն անմաքուր ցանկություններ, սակայն
չաղախված է մեզ ոչ թե այնպես, ինչպես ու-
մանք ասում են գինին ջրին խառնելու մա-

սին, այլ ինչպես մի դաշտում աճում են և՛ ցորենը ինքն իրեն, և՛ մուխնոտերը իրենք իրենց, կամ էլ ինչպես նույն տանը կողք կողքի գտնվում են ավազակը և տան տերը:

47. Երբ լուսավորում է արեգակը և փչում է քամին, ապա արեգակն ունի իր մարմինը և իր բնությունը, իսկ քամին՝ իր բնությունը և իր մարմինը: Այդպես և մեղքն է խառնվել հոգուն, սակայն և՛ մեղքը, և՛ հոգին ունեն իրենց առանձնահատուկ բնությունը:

48. Աղբյուրից զուլալ ջուր է հոսում, բայց նրա հատակին տիղմ է նստած: Եթե մեկը պղտորի տիղմը, ամբողջ աղբյուրը կդառնա պղտոր: Այդպես է և հոգին, երբ այն կոծվում, վրդովվում է, շաղախվում է արատների, ախտերի հետ: Եվ սատանան հոգու հետ դառնում է մի, երկու հոգիներն էլ անառակության կամ սպանության ժամանակ կազմում են մեկ միություն: Այդ պատճառով էլ, ով մերձեցնում է պոռնիկին, արա հետ մեկ մարմին է դառնում (Ա Կորնթ., 6, 16): Ուրիշ դեպքերում անկախ հոգին գործում է ինքն իրեն և զղջում է իր արարքների համար, լալիս է, աղոթում է և հիշում է Աստծուն: Իսկ եթե հոգին հանապազ թաղվել է չարության մեջ,

ապա ինչպե՞ս կարող է անել դա: Քանի որ սատանան, լինելով կարծրասիրտ, ոչ մի կերպ չի կամենում, որպեսզի մարդիկ ապաշխարանքով դարձի գան:



Գ
Տերը փրկության Տնօրինող

ա) անկյալների համար փրկությունը մեկն է՝ Տերը: Տերը գթաց և մարմնացյալ եկավ մեր փրկության համար: Իր արյամբ Նա լվաց մեր մեղքերը: Սուրբ Յոգու շնորհով նորոգեց մեր հնացած բնությունը և այդպիսով մեզ պիտանի դարձրեց Իր Երկնային Արքայության համար:

49. Աշխարհը նմանեցվում է հարուստ մարդու, որն ունի շքեղաշուք, հսկայական տներ, հարուստ է ոսկով և արծաթով, այլևայլ կարողություններ, տեսակ-տեսակ սպասավորներով, սակայն հանկարծակի բռնվում է հիվանդություններով ու տկարություններով. բոլոր մերձավորները կանգնած առջևը, ամբողջ հարստությունը հանդերձ, չեն կարող նրան ազատել հիվանդությունից: Այդպես, ոչ մի սովորական խնամատարություն, ոչ հարստությունը, ոչ էլ մի այլ բան չեն կարող մեղքերի մեջ թաղված հոգին դուրս բերել մեղքից. և միայն Քրիստոսի գալուստը կարող է մաքրել հոգին և մարմինը:

50. Քանի որ անօրինություններում

հղացված և մեղքերի մեջ ծնված մարդկային ցեղը մոր արգանդից խորթացավ և մոր որովայնից սկսած մոլորություն մեջ հայտնվեց այն բանից հետո, երբ Ադամից սկսեց թագավորել մեղքը, ապա գլխավոր եկավ Աստծո Գառը, որպեսզի իր սեփական գործությամբ վերցնի աշխարհի մեղքը, կապելով նախ հզորին, իսկ հետո հափշտակելով նրա ավար վերցրած անոթները, ինչպես ասված է՝ գերեվարեց գերիներից (Մաղմ., 67, 29):

51. Սատանան և խավարի իշխանը, պատվիրանազանցության ժամանակներից բազմեցին Ադամի սրտում, մտքում և մարմնում, ինչպես իրենց սեփական գահին: Ինչի պատճառով եկավ, ի վերջո, Տերը և մարմին առավ Կույսից, քանզի, եթե Նրան հաճելի լիներ գալ չքողարկված Աստվածություններ, ո՞վ կարող էր տանել դա: Ընդհակառակը, այդ գործիքի՝ մարմնի միջոցով բարբառեց Նա մարդկանց: Եվ վերջապես մարմնում նստած չար ոգիներին, այսինքն՝ հասկացություններին և խորհուրդներին, որոնցով նրանք կառավարում էին, Տերը գահընկեց արեց և մաքրեց խիղճը ու Ինքն Իր գահը դարձրեց միտքը, խորհուրդները և մարմինը:

52. Աստված պատվիրեց Մովսեսին պղնձից օձ սարքել, այն տանել և մեխել ծառի կատարին. և բոլոր օձից խայթվածները, նայելով պղնձե օձին, բժշկուլթյուն էին ստանում: Մեռած օձը հաղթեց կենդանի օձերին, քանի որ Տիրոջ մարմնի նախօրինակն էր: Քանզի Տերը Մարիամից առած էր մարմինը խաչ բարձրացրեց, տարածեց փայտի վրա և մեխեց դրան. և մեռած մարմինը հաղթեց և սպանեց սրտում ապրող և սողացող օձին: Մեծ հրաշք է այս:

53. Սկզբում կորստաբեր կրքերի անբուժելի խոցերով խոցոտված հոգին ոչ ոք չէր կարող բուժել՝ ո՛չ արդարները, ո՛չ հայրերը, ո՛չ մարգարեները, ո՛չ նահապետները: Եկավ Մովսեսը, բայց չկարողացավ տալ կատարյալ բժշկուլթյուն:

Եղել են քահանաներ, ընծաներ, տասանորդ, շաբաթապահուլթյուններ, նորալուսին, լվացումներ, զոհաբերուլթյուն, ողջակիզուլթյուն և ամեն տեսակ արդարուլթյուն կատարվում էր ըստ օրենքի. իսկ հոգին չէր կարող բժշկվել և մաքրվել չար խորհուրդների անմաքուր հոսանքներից, և նրա ողջ արդարուլթյունը ի վիճակի չէր բժշկել մար-

դուն, մինչև որ չեկավ Փրկիչը, ձրի բժշկող և իրեն մարդկային ցեղի համար որպես փրկագին տվող ճշմարիտ Բժիշկը: Նա միայնակ կատարեց հոգու մեծ և փրկարար քավուլթյունը և բժշկուլթյունը. Նա ազատեց նրան ստրկուլթյունից և դուրս հանեց նրան խավարից:

54. Հոգին այդպիսի աներևույթ խոցից չկարողացան բուժել և դարմանել երկրից վերցրած սեփական բժշկուլթյունը, այսինքն՝ արդարուլթյան միմիայն սեփական գործերը. մարդը կարող է ապաքինուլթյուն ստանալ և կյանք ձեռք բերել միմիայն երկնային և Աստվածային բնուլթյան զորուլթյամբ, Սուրբ Հոգու շնորհով՝ այդ միակ բժշկուլթյամբ՝ սիրտը մաքրելով Սուրբ Հոգով:

55. Ինչպես հողագործը, երբ գնում է հողը մշակելու, պետք է մշակման համար վերցնի համապատասխան գործիքներ և հագուստներ, այդպես և Քրիստոսը՝ Երկնային Թագավորը և ճշմարիտ Մշակը, երբ մարմնանալով և գործիքի փոխարեն խաչ կրելով՝ եկավ դեպի արատներից ամայացած մարդկուլթյունը, մշակեց ամայացած հոգին, հանեց նրանից փշերը և տատասկները, պոկեց

մեղքի որոմները և նրա բոլոր մեղքերի մթերումները կրակի մատնեց: Եվ այդ կերպ, մշակելով այն խաչափայտով, տնկեց նրանում սքանչելի հոգևոր այգի, որը բերում է Աստծուն ամեն տեսակ քաղցրահամ և մշակված պտուղներ որպես Տիրոջ:

56. Քրիստոս Տերը նորոգեց Նոր Ուխտը, խաչով և մահով կործանեց դժոխքի և մեղքի դարբասները, կորգեց հավատարիմ հոգիները՝ ներքուստ տալով նրանց Մխիթարիչին, և նրանց տարավ Իր թագավորությունը:

57. Օրենքում քահանային պատվիրված է եղել վերցնել երկու աղավնի, մեկը մորթել, իսկ կենդանի աղավնուն ցողել նրա արյունով և բաց թողնել ազատ ճախրելու: Սույն գործողությունը ճշմարտության օրինակ և ստվեր էր: Քանզի Քրիստոսը մահվան մատնվեց և նրա արյամբ ցողվելով՝ մենք թևավորվեցինք, քանզի մեզ Սուրբ Հոգու թևերը տվեց Աստծո երկնքում անարգել ճախրելու (47, 2):

58. Մեր Տեր Հիսուս Քրիստոսը հենց դրա համար եկավ, որպեսզի փոխի, վերակերտի և նորոգի բնությունը, և պատվիրանազան-

ցության հետևանքով կրքերից գահճնկեց եղած այդ հոգին ստեղծի վերստին, շաղախի այն Աստվածային Հոգով: Նա եկավ, որպեսզի Իրեն հավատացողներին դարձնի նոր միտք, նոր հոգի, նոր աչքեր, նոր լսելիք, նոր հոգևոր լեզու, մի խոսքով՝ դարձնի նոր մարդիկ:

59. Ինչպես թշնամին, վերցնելով իրեն հպատակված մարդուն, նրան իր համար դարձրեց նոր, պատելով վնասակար ախտերով, օծելով մեղքի ոգով, լցնելով նրա մեջ ամենայն անօրենսության գիներն, այդպես և Տերը, նրան ազատելով մեղքից, դարձրեց նոր՝ օծելով Սուրբ Հոգով:

60. Ինչպես տեսանելի աշխարհում ոչ ոք չի կարող ինքն իրեն նավարկելով կտրել անցնել ծովը, եթե չունենա թեթև և դյուրասահ նավ, որը, լինելով փայտաչեն, կարող է սահել ջրերի վրայով, քանզի եթե դուրս գա ծով, ջրասույզ կլինի և կկործանվի, այդպես և հոգին չի կարող ինքնուրույն նավարկել, հաղթահարել և կտրել անցնել մեղքի դառնաղի ծովը, անցնել չար ուժերի և մոլթ կրքերի անանցանելի անդունդը, եթե իր մեջ չընդունի դյուրասահ, երկնային, թեթևաթ-

ուիչ, ամեն տեսակ չարութիւնն կոխոտող և անցնող Սուրբ Հոգին:

բ) Տնօրինելով փրկութիւնը, Տերը ցանկանում է, որ փրկվել ցանկացողները փրկվեն, բայց ոչ մեկին չի պարտադրում:

61. Մեր Տեր Հիսուս Քրիստոսն, իր վրա վերցնելով մարդու փրկութեան խնամքը, կատարեց ողջ տնօրինութիւնը և սկզբից ևեթ խնամատարութիւնն ցուցաբերեց Հայրերի, Նահապետների, Օրենքի և Մարգարեների միջոցով, իսկ հետագայում ինքը գալով և արհամարհելով խաչելութեան անպատվութիւնը, մահվան մատնվեց: Եվ Նրա ողջ վաստակը, ողջ հոգածութիւնը նրա համար էին, որպեսզի իրենից՝ իր բնութիւնից Հոգով ծնի որդիներ, բարեհոգաբերով, որպեսզի նրանք ծնվեն ի վերուստ իր Աստվածութիւնից: Եվ ինչպես երկրի հայրերը տխրում են, եթե զավակ չեն ունենում, այդպես և Տերը, սիրելով մարդկային ցեղը որպես իր սեփական պատկերի, ցանկացավ սերել նրանց իր Աստվածային սերմից: Եվ եթե ոմանք չեն կամենում ընդունել այսպիսի ծնունդ և ծնված լինել Աստծո Հոգու բնութ-

յունից, ապա դա մեծ վիշտ է Քրիստոսի համար, Որը չարչարվել և տոկացել է, որպեսզի փրկի նրանց:

62. Տերը կամենում է, որպեսզի բոլոր մարդիկ արժանանան այդ ծնունդին, քանզի բոլորի համար մեռավ և բոլորին կյանքի կոչեց: Իսկ կյանքը ծնունդն է ի վերուստ՝ Աստծուց: Քանզի առանց այդ ծնունդի հոգին չի կարող ապրել, ինչպես ասում է Տերը՝ եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստուծո Արքայությունը տեսնել (Հովհ., 3, 3): Այդ պատճառով է, որ բոլոր նրանք, ովքեր հավատացին Տիրոջը, և ընդառաջ գնալով, արժանացան այդ ծնունդին, ուրախութիւն և մեծ խնդութիւն են պատճառում երկնքում իրենց ծնող ծնողներին: Բոլոր Հրեշտակները և սուրբ զորութիւնները բերկրում են Հոգուց ծնված և հոգի դարձած հոգու համար:

63. Հողագործը ամեն տեղ սերմ է գցում և ցանկանում է, որպեսզի դրանք բոլորը հասկ դառնալով, պտուղ տան, իսկ հետո գալիս է մանգաղով և տխրում է, եթե չի տեսնում ցանածի արդյունքը: Այդպես և Տերը ցանկանում է, որ իր խոսքը ցանված լինի մարդկանց սրտերում: Եվ ինչպես հո-

ղագործն է տխրում սակավ բերքից, այդպես էլ Տերն է վշտանում աղքատիկ և անպտուղ սրտից:

64. Այնպես, ինչպես մի արքա, տեսնելով մի աղքատ և տկար մարդու, չխորչի նրանից, այլ բժշկական պատրաստուկներով սկսի բուժել նրա վերքերը, և տեղափոխելով իր պալատ, հագցնի ծիրանի պատմուճան և գոհարակուռ վարսակալ ու դարձնի իր խնջույքներին մասնակից, այդպես էլ Երկնային Թագավոր Քրիստոսը, գալով հիվանդ մարդու մոտ, բժշկեց նրան և մասնակից դարձրեց իր Թագավորական խնջույքին, ընդամին չբռնանալով նրա կամքի վրա, այլ խրատներով ու հորդորներով արժանացրեց նրան այդպիսի պատվի:

65. Ավետարանում գրված է, որ Տերը ծառաներին ուղարկեց կանչելու ցանկացողներին և հայտնելու նրանց. ահա իմ ճաշկերույթը պատրաստեցի (Մատթ., 22, 4), բայց հրավիրվածներն իրենք հրաժարվեցին և ասացին. մեկը թե՛ հիմա լուծ եզնեղ գնեցի, մյուսը՝ կի՛ն եմ առել (Ղուկ., 14, 19, 20) Տեսնո՞ւմ ես, կանչողը պատրաստ է, հրաժարվեցին կանչվածները, և, իհարկե, իրենք իրենց դեմ մեղք

գործեցին: Տեսնո՞ւմ ես, Տերն արքայություն պատրաստեց նրանց համար, կանչում է նրանց, որպեսզի մտնեն, բայց նրա՛նք չեն կամենում:

66. Տերն անդադրում թակում է մեր սրտերի դռները, որպեսզի ներս թողնենք Նրան, և Նա մտնի և հանգչի մեր հոգիներում, և օթևան պատրաստի մեզանում: Քանզի ասում է. Ահա՛վասիկ ես դու՛ն առաջ եմ և բախում եմ. եթե մեկը ակամա դնի իմ ձայնիս և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ (Հայտն., 3, 20): Դրա համար էլ Նա կամեցավ շատ չարչարվել, իր մարմինը մահվան մատնելով և փրկելով մեզ ստրկությունից, որպեսզի այցելելով մեր հոգուն, այնտեղ օթևան պատրաստի: Քանզի նրա և՛ կերակուրը, և՛ ըմպելիքը, և՛ հագուստը, և՛ ծածկը, և՛ հանգիստը մեր հոգին է: Այդ պատճառով էլ անդադրում թակում է դուռը, կամենալով ներս մտնել մեզ մոտ: Ընդունենք Նրան և առնենք մեր մեջ, որովհետև մեզ համար էլ Նա է և՛ կերակուր, և՛ ըմպելիք, և՛ հավիտենական կյանք: Եվ արդ, եթե ամեն մի հոգի իր մեջ չի ընդունել և հանգստություն չի տվել Նրան, կամ, ավելի ճիշտ, ինքը չի հանգս-

տացել Նրանում, ժառանգությունն չունի Սրբերի հետ երկնքի Արքայությունում, և չի կարող մտնել երկնային քաղաքը: Տե՛ր Հիսուս Քրիստոս, Դու Ինքդ տա՛ր մեզ այն-տեղ:



Դ Տիրոջով փրկվելու հաստատական վճռականության ձևավորումը

Չոգու շարժումը դեպի փրկություն սկսվում է փրկության տենչի և այն Տիրոջով իրականացնելու հաստատական վճռականության ձևավորմամբ: Տերը կատարեց մեր փրկությունը, ամեն ինչ պատրաստեց դրա համար և կամենում է, որ պեսզի յուրաքանչյուր ոք փրկվի: Սպասվում է միայն, որ մարդը ձեռնամուխ լինի և սկսի իրագործել փրկությունը:

ա) Սպասվում է մեր կամեցողությունը որպես անհրաժեշտ նախապայման:

67. Մարդը բնությամբ ունի իր կոչումը և հենց այդ է հայցում Աստված: Ուստի և պատվիրում է, որպեսզի մարդը նախ հասկանա, հասկանալով սեր տաճի, և սկիզբը դնի կամքով: Իսկ որպեսզի միտքը գործի դնի, կամ աշխատություն թափի, կամ գործ գործի՝ Տիրոջ այդ շնորհը տալիս է ցանկացողին և հավատացողին: Այդ պատճառով էլ մարդկային կամքը էական նախապայման է:

Եթե կամքը չկա, Աստված Ինքը ոչինչ չի անում, թեև կարող է Իր ազատութեամբ: Այդ պատճառով էլ գործի կատարումը Հոգու միջոցով կախված է մարդու կամքից: Դարձյալ, եթե նվիրաբերում ենք մեր ողջ կամքը, ապա ամեն ինչում մեծաքանչ և կատարելապես անիմանալի Աստված մեզ է վերագրում ամբողջ գործը:

68. Ինչպես արյունահոսութիւնն ունեցող կիւնը, թեև չէր կարողանում բժշկվել և մնաց խոցերով պատված, սակայն ուներ ոտքեր, որպեսզի գար Տիրոջ մոտ և գալով՝ ստանար բժշկութիւն, այդպես էլ այն կույրը, թեև չկարողացավ գալ և մոտենալ Տիրոջը, քանի որ չէր տեսնում, սակայն ձայն տվեց, ինչը սուրհանդակներից ավելի շուտ տեղ հասավ. Դավթի՛ Որդի, Հիսու՛ս, ողորմի՛ր ինձ (Մարկ., 10, 47) և այդպիսով, հավատալով, ստացավ բժշկութիւն, երբ Տերը մոտեցավ նրան և տվեց նրան տեսողութիւն. այդպես և հոգին, թեև խոցապատված է անարգ կրքերի խոցերով, թեև կուրացած է մեղսալի խավարով, սակայն կամք ունի աղաղակելու Հիսուսին և կանչելու Նրան, որպեսզի Նա գա և հոգուն հավիտենական ազատութիւն տա:

69. Ինչպես այն կույրը, եթե չաղաղակեր, և արյունահոսութիւնն ունեցող կիւնը, եթե չգար Տիրոջ մոտ, չէին ստանա բժշկութիւն, այդպես էլ եթե մեկը չմոտենա Տիրոջը իր սեփական կամքով և հոժարութեամբ և չաղերսի Նրան աներկբա հավատով, ապա նա բժշկութիւն չի ստանա: Իսկ ինչո՞ւ նրանք իսկույն ևեթ բժշկվեցին, իսկ մենք չենք բժշկվել ծածուկ կրքերից: Մեր անհավատարմութեան համար, մեր տարախոհութեան համար, այն բանի համար, որ Նրան չենք սիրում ամբողջ սրտով և անկեղծորեն չենք հավատում Նրան, դեռ չենք ստացել Հոգևոր բժշկութիւն և փրկութիւն: Ուստի հավատանք Նրան և ճշմարտապես գնանք դեպի Նա, որպեսզի Նա շուտափուլթ ճշարիտ բժշկութիւն կատարի մեր մեջ: Քանզի ուխտեց, որ Սուրբ Հոգին կտա Արամց, որոնք ուզում են Իրեանց (Ղուկ., 11, 13), կբացի դուռը բախողների առաջ, կհայտնվի փնտրողներին (Մատթ., 7, 7) և անսուտ է Նա, Ով խոստացավ (Տիտ., 1, 2):

70. Թեև մանուկը անկարող է ոչինչ անել կամ էլ չի կարող քայլելով գնալ դեպի մայրը, սակայն, փնտրելով մորը, շարժվում է,

ճշուժ, լաց լինուժ: Եվ մայրը խղճուժ է նրան: Նա ուրախ է, որ երեխան ճիգով և ճիջերով փնտրուժ է իրեն: Եվ քանի որ մանուկը չի կարող գնալ նրա մոտ, ապա մայրն ինքը, տեսնելով մանկան երկար որոնուժները և տոգորվելով սիրուց, իրեն երկար փնտրելու պատճառով, մոտենուժ է նրան և մեծ քնքշուժթյամբ վերցնուժ է, գուրգուրուժ և կերակրուժ է նրան: Նույնն է անուժ և մարդասեր Աստվաժը հոգու հետ, որը գալիս է և փնտրուժ է նրան: Սակայն Նա բանական հոգուն փարվուժ է անհամեմատ ավելի շատ միայն իրեն հատուկ սիրով և իր իսկ բարեգթուժթյամբ: Նա, ըստ Առաքյալի խոսքի, մե՛կ հոգի է դառնուժ նրա հետ (Ա Կորնթ., 6, 17):

71. Տերը ողորմուժ և համբերուժ է, սպասելով մեր դարձին, իսկ եթե մեղանջուժ ենք, համբերուժ է, սպասելով մեր ապաշխարուժթյանը, և եթե ընկնուժ ենք, ամոթ չի համարուժ ընդունել մեզ նորից, ինչպես ասել է Մարգարեն. Նա, որ գլորվուժ է, միթե չի՞ ելնուժ, կամ նա, որ շեղվուժ է, հետ չի՞ դառնուժ (Երեմ., 8, 4): Միայն թե սթափվենք, ձեռք բերենք բարեխոհուժիտն, շուտափուժյթ և անկեղժորեն դառնանք դեպի Նա՝ հայցելով նրա օգ-

նուժիտներ: Իսկ Նա պատրաստակամ է փրկելու մեզ, որովհետև սպասուժ է հավատից և ջերմեռանդուժիտներից մեր կարողուժթյան չափով բարի դարձաժ մեր կամքի ջերմագին փափագներին դեպի իրեն, իսկ ամեն մի առաջխաղացուժ ինքն է կատարուժ մեզանուժ: Այդ պատճառով էլ, թոթափելով ամեն տեսակ նախապաշարուժ, ծուլուժիտն, անփուժիտիտն, ձգտուժ ենք դառնալ անվեհեր և պատրաստ՝ նրա ետևից գնալու: Չհետաձգենք դա օր օրի վրա, հրապուրվելով արատներով, քանզի չգիտենք, թե երբ է լինելու մեր ելքը մարմնից:

բ) Ինչպես է ձևավորվուժ ցանկությունը:

ա) Արթնացուժ Աստժուց:

Տերը հոգուն խրատուժ է անտեսանելի կերպով, հաճախ դարժի է բերուժ դժբախտություններով, երբեմն իր անմիջական ազդեցությամբ, ինչպես Պողոս Առաքյալի հետ եղավ, բայց դարժի բերող նուժնետիկն ամենուրեք Աստժո խոսքն է:

72. Աստժուն ցանկալի է մեղքի մեջ գտնվող մարդուն կրկին կյանքի վերադարձնել, և Նա հորդորուժ է նրան, որպեսզի սգա և ապաշխարի: Եվ եթե մարդը շարունակուժ

է դա անել (սգալ իր վրա), ապա իր անցյալ մեղանշումների համար զղջացողին Աստված հորդորում է վերստին սգալ և ապաշխարել (որպեսզի ողջ կյանքը հանգամանորեն ապաշխարի):

73. Երբ Աստծո տնօրինութեամբ լինում ես վշտերի, տառապանքների և խոցերի մեջ, այդժամ ինչը համարում ես քեզ համար նողկալի, ապա դա էլ հենց ծառայում է քո հոգու օգտին: Եթե քեզ ընդառաջ են գալիս դժբախտութիւնները, ապա սկսում ես ինքզինքդ մտածել. դժբախտ եմ այս աշխարհում, գնամ հրաժարվեմ աշխարհից, ծառայեմ Աստծուն: Պատահում է, որ այդ մտքին հասնելով, լսում ես պատվիրանը՝ վաճառի՛ր քո ունեցվածքը (Մատթ., 19, 21), ատի՛ր մարմնական շփումները և ծառայիր Աստծուն: Այդժամ սկսում ես շնորհակալ լինել աշխարհում քո դժբախտ լինելու համար, այն բանի համար, որ այդ առիթով դառնում ես հնազանդ Քրիստոսի պատվիրանին: Վերջապես, եթե միտքդ մասամբ փոխել ես տեսանելի նկատմամբ և հեռացել ես աշխարհից և մարմնական շփումներից, ապա քեզ հարկ է նաև փոխվել մտքով, մարմնական իմաս-

տութիւնդ փոխարինել երկնայինով: Այդժամ սկսում ես մտածել քո լսած այդ նույն պատվիրանի մասին, բայց տակավին հանգիստ չունես, այլ ջանում ու հոգում ես ձեռք բերելու այն, ինչի մասին լսեցիր:

74. Ինչպե՞ս որսաց Աստված սուրբ Պողոսին: Ինչպես խռովարարը, գերի վերցնելով ինչ որ մեկին, տանում է իր մոտ, իսկ հետո ինքն է բռնվում իսկական թագավորից, այդպես և Պողոսը, երբ նրա մեջ գործում էր մեղքի խռովարար ոգին, հալածում ու կողոպտում էր Եկեղեցին: Բայց քանի որ դա անում էր անգիտութեան պատճառով, ոչ թե Աստծուն հակառակվելու, այլ կարծես թե ճամարտութեան համար գործելու, ապա և չանտեսեց, այլ որսաց նրան Տերը: Երկնային և ճամարիտ թագավորը, անասելիորեն քննելով նրան, արժանացրեց իր ձայնը լսելուն և, խփելով դեմքին, ինչպես ստրուկի, ազատութիւն պարգևեց նրան: Տեսնում ես Տիրական բարութիւնը և այն, թե Տերը ինչպես կարող է արատին կառչած և խստասիրտ հոգիները ժամանակի մի ակնթարթում փոխել և նրանց հայտնել իր գթութիւնը և խաղաղութիւնը:

75. Ինչպես մի արքա, հրովարտակ հղե-
լով նրանց, ում ցանկանում է պարզեացրեր
և իր ընծաները տալ, բոլորին իմաց է տալիս.
«Ձանացեք փութով գալ ինձ մոտ և ստանալ
ինձանից արքայական ընծաներ», և եթե չեն
գալիս և չեն ստանում, ապա հրովարտակի
ընթերցումը նրանց օգուտ չի տա, նրանք ա-
վելի շուտ մահապարտ կդառնան այն բանի
համար, որ չցանկացան գալ և արքայական
ձեռքից պատվի արժանանալ: Այդպես և
Աստվածային Գրվածքները Թագավոր-Աստ-
ված որպես հրովարտակ առաջարկեց մարդ-
կանց, ազդարարելով դրանցով, որ Աստծո
մոտ կանչվածները և հավատացածները երկ-
նային պարզե խնդրեն և ստանան Նրա
Աստվածային Անձից: Քանզի գրված է՝ որ-
պեսզի հաղորդակից լինեք Աստվածային բնութ-
յանը (Բ Պետր. 1, 4) եթե մարդը չի գալիս, չի
խնդրում, չի ընդունում, ապա Գրվածքները
ընթերցելուց նրան օգուտ չկա, իսկ հակա-
ռակ դրա, նա մահապարտ է դառնում այն
բանի համար, որ չկամեցավ Երկնային Թա-
գավորից ընդունել կյանքի պարգևը, ա-
ռանց որի անհնար է գտնել անմահություն:

բ) Պայքար ինքն իր հետ կամքը դեպի կանչը
ուղղելու համար:

76. Մարդը, լսելով Աստծո խոսքը, իս-
կույն ևեթ չի դառնում բարի պատվի արժա-
նի: Հակառակը պնդելով, մարդուց խլում ես
կամքը և ժխտում ես մտքին հակամարտող
դիմադարձ ուժի գոյությունը: Մենք ասում
ենք, որ խոսքը լսողը զղջում՝ դարձի է գա-
լիս, իսկ հետո սկսում է վարժվել և սովորել
մարտնչելուն, պայքարում է և գործում է
ընդդեմ սատանայի, և երկարատև ճակատա-
մարտերից ու մաքառումներից հետո հաղ-
թանակ է տանում և դառնում է քրիստոնյա
(այսինքն՝ վճռում է լինել Քրիստոսի ճշգրիտ
հետևորդ):

գ) Կամքի ուղղման վրա ազդող պատկերա-
ցումներ և համոզումներ:

Ինքն իր հետ տարվող այդ պայքարում միտքը
հավաքում է ճշմարտության և համոզումների տար-
բեր դրդիչ և պարտադրող պատկերացումներ՝ ըն-
դունակ տոգորելու և ներշնչելու: Սուրբ Մակարն
այստեղ առաջին տեղում դնում է պատկերացումն
այն բանի, թե Աստված ինչ արեց մեր փրկության
համար և թե ինչպիսի ուխտերով շրջապատեց
այդ գործը: Դրան նա շատ հաճախ է անդրադառ-
նում խոսքի տարբեր դարձվածքներում:

77. Թափանցի՛ր Հոգու բանական էութ-
յան մեջ և թափանցիր ոչ հենց այնպես: Ան-
մահ Հոգին մի թանկարժեք անոթ է: Նայի՛ր,
ինչ մեծ են երկինքը և երկիրը, և դրանց մա-
սին չէ, որ մտածում է Աստված, այլ միայն
քո մասին: Հայիր քո ազնվագարմությանը և
արժանավորությանը, քանզի Հրեշտակնե-
րին չուղարկեց, այլ Տերն Ինքը եկավ քեզ
համար որպես բարեխոս, որպեսզի կանչի
կորստի մատնվածին, խոցերով պատվածին,
վերադարձնի քեզ լուսավոր Ադամի սկզբնա-
կան կերպարանքը: Աստված Ինքն եկավ
քեզ պաշտպան կանգնելու և ազատելու մա-
հից: Արդ, ամուր կանգնի՛ր և պատկերաց-
րո՛ւ, ինչպիսի՛ Հոգածություն քո հանդեպ:

78. Պատկերացրու, թե մի թագավոր,
գտնելով ցնցոտիներ հագած մի պարմանու-
հու, ամոթ չհամարեց, այլ հանեց նրա վրայի
անմաքուր հագուստները, լվաց նրան աղտե-
րից, զարդարեց նրան լուսավոր զգեստներով,
դարձրեց հաղորդակից և մասնակից արքա-
յական ճաշկերույթների և խրախճանքների:
Այդպես և Տերը գտավ բեկված և խոցերով
պատված Հոգին, տվեց նրան բժշկություն,
պոկեց-հանեց նրա վրայից աղտոտված հա-

գուստները և արատի խայտառակությունը,
հազցրեց նրան արքայական, երկնային,
Աստվածային լուսազարդ և փառահեղ հա-
գուստներ, պսակադրեց նրան և սեղանակից
դարձրեց արքայական ճաշկերույթի ուրա-
խությանը և զվարճություններին:

79. Հետևաբար քրիստոնեությունը պա-
կաս կարևորություն ունեցող բան չէ, այն
մեծագույն խորհուրդ է: Ուրեմն ճանաչի՛ր
քո ազնվագարմությունը, այսինքն, որ դու
արժանացել ես արքայական պատվի, որ դու
ընտիր ցեղ ես և սուրբ ազգ (Ա Պետր., 2, 9):
Քրիստոնեության խորհուրդը բացառիկ է
այս աշխարհի համար: Թագավորի տեսանե-
լի փառքը և հարստությունը երկրային,
փուչ, անցողիկ բաներ են: Իսկ այն արքա-
յությունը և այն հարստությունն Աստվա-
ծային են, երկնային են, փառավոր են, եր-
բեք չեն անցնում կամ երբեք չեն դադա-
րում: Քանզի երկնային Եկեղեցում թագա-
վորում են Երկնային Թագավորի հետ, և
ինչպես Նա Ինքը անդրանիկն է մեռելների
միջից (Կողոս., 1, 18), այդպես և Նրա հետ
թագավորողները անդրանիկ են:

80. Մեծ են և անճառելի քրիստոնյանե-

րին տրված խոստումները, և այնքան մեծ են, որ մեկ հոգու հավատքի և հարստության հետ համեմատելի չեն անգամ երկնքի և երկրի ողջ փառքն ու շքեղությունը և մնացյալ նրանց զարդարանքներն ու բազմազանությունը, և՛ հարստությունը, և՛ գեղեցկությունը, և՛ տեսանելի վայելքները: Այսպիսով, Տիրոջ այդչափ հորդորների և խոստումների առկայության դեպքում ինչպես չցանկանանք ամբողջությամբ մերձենալ Տիրոջը, մեզ ընծայաբերել Նրան, ամեն ինչից վեր, ըստ Ավետարանի, ուրանալով անձը և սիրելով միայն Նրան՝ Միակին, ընդամին չսիրելով ուրիշ այլ բան: Ահա այդ ամենը ընծայված է մեզ և դեռ ինչպիսի՛ փառք: Ինչքա՛ն հոգածություն Տիրոջ կողմից մեր մասին Հայրերի և Մարգարեների ժամանակներից: Ինչքա՛ն խոստումներ են ավետված: Ինչքա՛ն ցանկություններ: Որքա՛ն բարեգութ էր Տերը սկզբից և եթ մեր հանդեպ: Ի վերջո, Իր գալուստով Իր անճառելի բարությունը Նա մեր հանդեպ ապացուցեց խաչելությամբ, որպեսզի դարձի եկողներին կյանք մտցնի: Իսկ մենք տակավին չենք հրաժարվում մեր ցանկություններից, աշխարհի սի-

րուց, վատթար հակումներից և սովորություններից և դրա պատճառով էլ դառնում ենք թերահավատ, կամ անհավատ: Սակայն, ահա այս բոլորով հանդերձ Տերն ամբողջովին մեր հանդեպ ողորմած է, անտեսանելիորեն հսկելով և հանգստացնելով մեզ, ամբողջովին չմատնելով մեզ արատներին և աշխարհի գայթակղություններին, մեծ բարությամբ և երկայնամտությամբ չթողնելով, որ կորստյան մատնվենք, տակավին ակնկալելով, որ երբևե դարձի կգանք դեպի Նա:

Ց1. Ի՞նչ է նշանակում սույն խոսքը՝ Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց Իրեն սիրողների համար (Ա Կորնթ., 2, 9): Այն ժամանակ մեծ արդարները, թագավորները և մարգարեները գիտեին, որ գալու է Ազատարարը, բայց չգիտեին, և՛ չէին լսել, և՛ նրանց սրտները չէին վկայում, որ Նա կհարչարվի և կխաչվի, որ արյուն կհեղվի խաչի վրա, որ կլինի մկրտություն հրով և Սուրբ Հոգով, որ եկեղեցում կմատուցվեն հաց և գինի՝ Նրա մարմնի և արյան խորհրդանշանները, որ տեսանելի հացը ճաշակողները հոգեպես ճաշակելու են Տիրոջ մարմինը, որ Առաքյալ-

ներն ու քրիստոնյաները կընդունեն Մխիթարիչին և ի վերուստ կզգեստավորվեն գորությամբ և կարժանանան միավորվելու Սուրբ Հոգու հետ: Մարգարեները և թագավորները դա չգիտեին, և նրանց սրտով դա չանցավ էլ:

82. Քանի որ այդպիսի բարիքներ են մեզ պատրաստված, այսպիսի խոստումներ տրված և այդպիսին է Տիրոջ բարեհաճությունը մեր հանդեպ, ապա չկարծրանանք, չծուլանանք փութալու հավիտենական կյանքին և ամբողջին մեզ նվիրաբերելու Տիրոջ ծառայությանը :

83. Լսելով Հոգու արժանիքների մասին և այն մասին, թե ինչքան թանկարժեք է այդ բանական էությունը, հասկանո՞ւմ ես արդյոք, որ երկինքը և երկիրը անցնում են, իսկ դու կանչված ես որդիության, եղբայրության, հարսը լինելու Քրիստոսի: Տեսանելի աշխարհում փեսայի ողջ ունեցածը պատկանում է նաև հարսին, այդպես էլ Տիրոջը պատկանող ամենայն ինչ վստահվում է քեզ: Քանզի հանուն քեզ բարեխոս լինելու համար եկավ Նա Ինքը, որպեսզի կանչի քեզ: Իսկ դու ոչինչ չես պատկերացնում և

չես գիտակցում քո ազնվագարմությունը: Այդ պատճառով էլ հոգևոր այրը արդարացիորեն ողբում է քո անկումը, ասելով՝ Մարդը պատիվ ունե՞ր՝ և չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու անանվեց նրանց (Սաղմ., 48, 21):

Նրա խրատներում այնուհետև հաջորդում են ուրիշ մղումներ ևս. որ մեր նպատակն է լինել մեզ մեծ, այսինքն՝ լինել Տիրոջ հետ, և հատկապես, որ այն ժամանակ է մեզ համար միայն լավ, երբ հետևում ենք Տիրոջը, և որ չկա ավելի վատ վիճակ, երբ չենք հետևում Նրան:

84. Հայացքդ հառելով արեգակին, տեսնում ես, որ արեգակի սկավառակը երկնքում է, իսկ նրա լույսն ու ճառագայիտները իջնում են երկրի վրա, և լույսի ողջ զորությունն ու փայլը ձգտում են դեպի երկիր: Այդպես և Տերը, նստած է Հոր աջ կողմը, ամենայն աթոռից և իշխանությունից վեր, սակայն Նրա Հայացքը սևեռված է երկրում ապրող մարդկանց սրտերին, որպեսզի Իրենից օգնություն սպասողներին տանի այնտեղ, որտեղ Ինքն է, քանզի ասում է՝ ուր ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան (Հովհ., 12, 26):

Բայց անբան կենդանիները շատ ավելի իմաստուն են մեզանից, քանի որ նրանցից յուրաքանչյուրը միանում է իր սեփական տեսակին. վայրիները՝ վայրիների հետ, իսկ ոչխարները՝ նմանապես իրենց տեսակի հետ: Իսկ դու չես վերադառնում քո երկնային ազգակցությանը, այսինքն՝ Տիրոջը, այլ խորհուրդներով համաձայնվում ես և հակվում ես դեպի չարի խորհուրդները, դառնալով մեղքի գործակից, նրա հետ միասնաբար մարտնչելով ինքդ քո դեմ, և այսպիսով դարձնելով ինքդ քեզ թշնամու կերակուր, նման այն բանին, թե ինչպես արծիվը հոշոտում է իր որսած թռչունին, գայլը՝ ոչխարին, և կամ էլ ինչպես իր ձեռքը օձին պարզած երեխան մահանում է նրա խայթոցից:

85. Հոգին պատկանում է նրան, ում հետ շփման և միության մեջ է իր ցանկություններով: Այդ պատճառով էլ, կա՛մ ունենալով իր մեջ Աստծո լույսը և նրա մեջ ապրելով ու բարեզարդվելով ամեն կարգի առաքիչություններով, հաղորդակից է ամոքիչ լույսին, կա՛մ էլ, ունենալով իր մեջ մեղսալի խավարը, ենթակա է դատապարտության: Հավիտենական հանգստի և լույսի մեջ Աստծո

հետ ապրել ցանկացող հոգին պետք է մեռնի նախկին չար խավարի համար, վերափոխվի այլ կյանքի՝ Աստծո դաստիարակության համար: Լսելով այդ՝ ուշադրություն դարձրու ինքդ քեզ, տեղի ունեցե՞լ է դա քեզ հետ: Իսկ եթե ոչ, ապա հարկ է քեզ անդադար սգալ, արտասվել և մորմոքել: Որպես արքայության համար տակավին մեռած՝ աղերսիր Աստծուն և հավատով խնդրիր, որ պեսգի արժանացնի քեզ ճշմարիտ կյանքի: Աստված, ստեղծելով այս մարմինը, տնօրինեց, որ նա իր համար կյանք, սնունդ, խմելիք, հագուստ, կոշիկ ստանա ոչ իր բնությունից, ոչ մարմնից, այլ՝ ընդհակառակը, մարմինը ստեղծելով ինքնին մերկ, տնօրինեց, որ կյանքի համար ամենայն անհրաժեշտ բան փոխառնի դրսից, և մարմնին տրված է ապրել առանց իրենից դուրս գոյություն ունեցող բաների, այսինքն՝ առանց սննդի, առանց ըմպելիքի, առանց հագուստի: Եթե այն սահմանափակվում է նրանով, ինչը իր բնության մեջ է, դրսից չփոխառելով ոչինչ, ապա քայքայվում է և մեռնում: Նման կերպով և Աստծո պատկերով ստեղծված հոգին, իր մեջ չունենալով Աստծո լույ-

սը (քանզի այսպես տնօրինեց և բարեհաճեց Աստված, որպեսզի այն ունենա հավիտենական կյանք), ոչ իր սեփական բնությունից, այլ Նրա Աստվածությունից, Նրա սեփական Հոգուց, Նրա սեփական լույսից է ընդունում հոգևոր սնունդ, հոգևոր ըմպելիք և երկնային զգեստ, ինչը և հոգու ճշմարիտ կյանքն է:

86. Ինչպես կյանքը մարմնի մեջ, ըստ սրանից առաջ ասվածի, իրենից՝ մարմնից չէ, այլ այն բանից, ինչը դուրս է իրենից, այսինքն՝ հողից, և առանց իրենից դուրս գոյություն ունեցող բաների անհնար է նրան ապրել. այդպես էլ, եթե հոգին տակավին չվերածնվի կենդանեաց երկրում և այնտեղ հոգեպես չկերակրվի, հոգեպես չաճի՝ առաջադիմելով Տիրոջ առաջ, և Աստված նրան չհազցնի երկնային վայելչության անձառելի հազուստներ, ապա առանց այդ կերակուրի անկարելի է ,որ ինքն իրեն ապրի վայելքի և խաղաղության մեջ: Քանզի Աստծո բնությունն իբրև կյանքի հացը ունի Նրան, Ով ասում է՝ Ես եմ կեանաց ճացը (Հովհ., 6, 35) և՛ կեանքի ջուրը (Հովհ., 4, 10), և՛ գիճիճ, որ ուրախացնում է մարդուն (Սաղմ., 103, 15), և՛ ու-

րախություն յուրը (Սաղմ., 44, 8), և՛ երկնային Հոգու բյուրացան կերակուրը, և՛ Աստծո ընծայած լուսազարդ երկնային հազուստները: Դրանում է հոգու երկնային կյանքը: Վա՛յ, մարմնին, երբ այն կանգ է առնում իր բնության վրա, քանի որ քայքայվում է և մահանում: Վա՛յ և հոգուն, եթե կանգ է առնում իր բնության վրա միայն, չունենալով հաղորդություն Աստվածային Հոգու հետ, քանի որ մեռնում է, չարժանանալով Աստվածային հավիտենական կյանքի: Ինչպես հուսահատվում են հիվանդների համար, երբ նրանց մարմինը չի կարող այլևս սնունդ ընդունել, և արտասվում են նրանց համար բոլոր մերձավորները, ընկերները, հարազատները և նրանց սիրելիները, այդպես Աստված և սուրբ Հրեշտակները արտասուքի արժանի են ճանաչում այն հոգիներին, որոնք չեն ճաշակում Հոգու երկնային սնունդը և չեն ապրում անեղծ կյանքով:

87. Այսպիսով, եթե քո ներքին մարդը փորձով և աներկբայորեն այդ բոլորը ճաշակեց, ապա արդ դու ապրում ես ճշմարիտ հավիտենական կյանքով և քո հոգին այժմ իսկ արդեն հանգստանում է Տիրոջ հետ: Ա-

Հա իրապես ձեռք ես բերել և ընդունել դա Տիրոջից, որպեսզի ապրես ճշմարիտ կյանքով: Եթե չես գիտակցում քո մեջ ոչինչ այդպիսին, ապա լաց եղիր, սգա և տրտմիր, քանի որ տակավին ձեռք չես բերել հավիտենական և հոգևոր հարստություն, մինչ այժմ չես ընդունել դեռ ճշմարիտ կյանքը: Այդ պատճառով էլ սաստիկ տրտմիր քո թշվառության համար, զօր ու գիշեր աղերսելով Տիրոջը, որովհետև գտնվում ես սարսափելի մեղսավոր աղքատության մեջ: Երանի՛ նրան, ով գեթ ձեռք է բերել իր թշվառության այդ վիշտը: Երանի՛ անհոգության մեծ ժամանակ չանցկացնելիք, ինչպես հղիացածներ: Ով ողբում է, ով փնտրում է և անդադրում խնդրում է Տիրոջից, նա շուտափույթ ստանում է ազատություն և երկնային հարստություն, ինչպես ասաց Տերը՝ խոսքը եզրափակելով անարդար դատավորի և այրու մասին. Իսկ Աստված արդարություն չի՞ անի այն ծառաներին, որոնք գիշեր և ցերեկ աղաղակում են: Այո՛, ասում եմ ձեզ՝ նրանց իսկույն արդարություն կանի (Ղուկ., 18, 7, 8):

88. Տիրոջ գալուստը խավարի, մեղքի, պիղծ ոգու և չար ուժերի դադարում պառ-

կած մարդու համար էր, որպեսզի Տերը այս կյանքում հարուժյուն և կենդանություն տա այդ մարդուն, սրբի նրան ամեն կարգի աղտեղությունից, լուսավորի իր լույսով և հագցնի իր Աստվածային հագուստները: Մարմինների հարուժյամբ, որոնց հոգիները նախապես հարուժյուն առան և փառավորվեցին, կփառավորվեն նաև այդ մարմինները և կլուսավորվեն այժմյան տակավին լուսավորված և փառավորված հոգով, անձեռակերտ, երկնային օթևանում կզարգարվեն Աստվածային լույսի փառքով: Տեսնում ես, թե Աստծո փառքերը ինչպես անձառելի և անքննելի են: Անհնար է արտահայտել կամ նկարագրել քրիստոնյաների անչափելի, անպարփակելի և անքննելի հարստությունը. ուստի և հարկ է ամենայն ջանադրությամբ ձեռնարկել քրիստոնեական սխրանք և ընդունել այդ հարստությունը, քանի որ քրիստոնյաների ժառանգությունը և բաժինն Աստված Ինքն է: Քանզի ասված է՝ Տե՛ր, իմ ժառանգություն և իմ բաժակի բաժին (Սաղմ., 16, 5):

89. Ինչպես միսն առանց աղելու նեխվում է, լցվում է սաստիկ դարչահոտությամբ, և

անտանելի ժանտահոտության պատճառով բոլորը երես են շուռ տալիս դրանից: Եվ նեխած մսի մեջ վխտում են որդեր, որտեղ իրենց համար սնունդ են գտնում, խժռում են այն և բնավորվում են դրանում: Բայց հենց որ աղ է ցանվում, մսով սնվող որդերը ոչնչանում են և սատկում, գարշահոտությունը դադարում է, որովհետև աղին հատուկ է ոչնչացնել որդերին և վերացնել գարշահոտությունը: Նմանապես և Սուրբ Հոգով չաղված յուրաքանչյուր հոգի, անհաղորդ երկնային աղին, այսինքն՝ Աստծո զորությանը, նեխում է և լցվում չար խորհուրդների սաստիկ գարշահոտությամբ, ինչի պատճառով Աստված դեմքը շուռ է տալիս նման հոգու մեջ ապրող խավարի և կրքերի ունայն խորհուրդների սարսափելի գարշահոտությունից: Վխտում են նրանցում զազրելի և ահավոր որդեր, այսինքն՝ չար ոգիները և խավար ուժերը սնվում են, բնավորվում են, վխտում են այնտեղ՝ կերակրվելով և ապականելով այն: Քանզի ասված է՝ վերքերն իմ անխեղի ու փտեցիս (Սաղմ., 37, 6): Բայց հենց որ հոգին մերձենում է Աստծուն, հավատքի է գալիս և խնդրում իր համար կյան-

քի աղը՝ բարի և մարդասեր Հոգին, երկնքից իջած աղը ոչնչացնում է նրա մեջ զազրելի որդերին, վերացնում է վնասակար գարշահոտությունը և մաքրում է հոգին իր զորության ներգործությամբ:

Եվ այդ կերպով, երբ ճշմարիտ աղը նրան դարձնում է առողջ և անվնաս, նա կրկին գործածության և ծառայության մեջ է դրվում ի սպաս երկնային Տիրոջ: Այդ պատճառով էլ օրենքում որպես դրա նախօրինակ Աստված պատվիրեց ամեն մի զոհ աղել աղով (Ղևտ. 2, 13):

90. Ինչպես եթե տեսանելի աշխարհում որևէ մեկը մերկ է, մեծ ամոթ և անպատվություն է զգում, և՛ ընկերներն են երես թեքում ընկերներից, և՛ հարազատները՝ յուրայիններից, եթե նրանք մերկ են, և՛ երեխաները, տեսնելով հորը մերկացած, իրենց հայացքները շուռ տվեցին, որպեսզի չնայեն հոր մերկ մարմնին, հետ-հետ գնալով, ծածկեցին իրենց հոր մերկությունը (Ծննդ., 9, 23)՝ իրենց հայացքները շուռ տալով: Այդպես և Աստված խորշում է այն հոգիներից, որոնք լիահոյս վստահությամբ զգեստավորված չեն Հոգու պատմունճանով, զորությամբ և

ճշմարտությամբ զգեստավորված չեն Տեր Հիսուս Քրիստոսով:

91. Առաջին մարդը, իրեն մերկ տեսնելով, ամոթ զգաց: Ինչքա՛ն անպատիվ է մերկությունը: Եթե մարմնական մերկությունը այդպիսի ամոթի է մատնում, ապա առավել ևս մեծ ամոթով և կրքերի անպատվությամբ է պատվում այն հոգին, որը մերկացած է Աստվածային զորությունից, հագին չունի և ճշմարտապես զգեստավորված չէ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անճառելի, հավիտենական և հոգևոր պատմուճանով:

Եվ յուրաքանչյուրը, ով մերկացած է այդ Աստվածային փառքից, այնչափ պետք է ամաչի ինքն իրենից և գիտակցի իր անպատվությունը, որքան ամոթ զգաց Ադամը, լինելով մարմնով մերկ, և չնայած թզենու տերևներից իր համար հագուստ պատրաստեց, սակայն ամոթ էր զգում, գիտակցելով իր թշվառությունը և մերկությունը:

Այդ պատճառով էլ այդպիսի հոգին պատմուճան պարգևող և անճառելի լույսի մեջ փառքով զգեստավորող Քրիստոսից թող խնդրի և թող իր համար հագուստներ չպատրաստի սին խորհուրդներից ու թող

չմտածի, հրապուրվելով սեփական արդարությամբ, թե ինքը փրկության պատմուճան ունի:

92. Ինչպես տունը, որտեղ ներկա է հենց ինքը՝ տանտերը, լի է ամեն տեսակ կահկարասիով, շքեղությամբ, բարեզարդությամբ, այդպես և հոգին, որն իր մեջ ունի իր Տիրոջը, Ով բնակվում է այնտեղ, ճոխանում է ամենայն շքեղությամբ, բարեզարդությամբ, քանի որ Տերն իր հոգևոր գանձերով նրա բնակիչն է և սանձապահը:

Բայց վա՛յ այն տանը, որի տանտերը բացակայում է և որտեղ տեր չկա, քանի որ ավերվելով, ամայանում է և դառնում է ամենայն անմաքրությամբ և անբարեկարգությամբ լեցուն, այնտեղ Մարգարեի խոսքով՝ բնակություն են հաստատում բվեճերն ու դևերը (Եսայի, 13, 21), քանի որ ամայացած, դատարկված տան մեջ իրենց համար տեղ են գտնում վայրի կատուները, շները և ամենայն պղծություն: Վա՛յ այն հոգուն, որը չի բարձրանում իր դժնդակ անկումից և ներսում ունի իր Փեսայի հետ թշնամության մեջ լինելու հորդորողներ և հարկադրողներ և նրա մտքերն ապականելու գիտավորութ-

յուն ունեցողներ՝ հեռացնելով Քրիստոսից:

դ) Առաջարկված պատկերացումներով հոգին պատրաստ է հակվել Տիրոջը հետևելու կոչվածությանը: Սակայն մտքեր են ծնվում, որ դեռ կհասցնենք դա անել և արմատից հատում են ցանկությունը: Սուրբ Մակարը կանխում է դրանք փրկության գործը հետաձգելու վտանգի համոզիչ օրինակներով: Աստծո համբերությունը կարող է սպառվել և այդժամ կործանումն անխուսափելի է:

93. Վախենամ, թե մեզ վրա, որ ապրում ենք ամեն ինչ արհամարհելով և առաջնորդվում ենք նախապաշարումներով, մի օր չկատարվի Առաքելական խոսքը, այն է՝ եթե արհամարհում են Նրա բարության առատությունը և ներողամտությունն ու համբերությունը, չգիտե՞ս, որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում (Հռոմ., 2, 4): Եթե Նրա համբերատարության, բարության և հեզության պարագայում էլ ավելի բազմապատկենք մեղքերի թիվը և մեր ծուլությամբ ու անհոգությամբ մեր համար ծանրագույն պատիժ պատրաստենք, ապա կկատարվի մեզ վրա Առաքելական խոսքը. Եւ քո խստասրտությամբ ու անզիղջ սրտով քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա և Աստծու արդար դատաստանի

հայտնության օրվա համար (Հռոմ., 2, 5): Քանզի մեծ և անքնին է Աստծո բարությունը, անարտահայտելի է Աստծո համբերությունը մարդկային ցեղի հանդեպ, միայն թե ջանանք սթափվել և ձգտենք ամբողջովին դառնալ Աստծուն, որպեսզի մեզ կարելի լինի գտնել փրկություն:

94. Իսկ եթե կամենում ենք ճանաչել Աստծո համբերությունը և Աստծո մեծ բարությունը, ապա կարող ենք սովորել դա աստվածաշունչ Գրվածքներից: Նայի՛ր իսրայելացիներին, նրանցից էին Աստվածաբանները, որոնց տրվեցին խոստումները, Արամցից է Ասև Քրիստոս՝ ըստ մարմնի, Արամցն էն պաշտամունքը և ուխտերը (Հռոմ., 9, 4, 5), ինչքան շատ մեղանչեցին: Ինչքան անգամ այլասերվեցին: Եվ Աստված իսպառ չլքեց նրանց, բայց մի կարճ ժամանակ, նրանց օգտի համար, մատնեց նրանց պատիժների, վշտերի, ցանկանալով մեղմել նրանց խստասրտությունը. դարձի էր բերում նրանց, ուղարկում էր նրանց մոտ Մարգարեներին, և ինչքան ժամանակ համբերատար էր նրանց հանդեպ, երբ նրանք մեղանչում էին և անարգում Նրան: Դարձի եկողներին ընդունում էր ու-

րախուժյամբ, և երբ կրկին ուղիղ ճանապարհից շեղվում էին, չէր լքում, այլ Մարգարեների միջոցով կոչում էր դարձի գալ: Եվ չնայած բազում անգամներ շեղվեցին Նրանից և դարձի եկան դեպի Նա, ամեն անգամ ընդառաջ էր գալիս բարեհաճորեն, ընդունում էր մարդասիրաբար, մինչև որ, ի վերջո, չընկան մեծ մեղքի մեջ, ձեռք բարձրացնելով իրենց իսկ Տիրոջ վրա, որին, ըստ հայրերի և սուրբ Մարգարեների ավանդույթյան, սպասում էին իրենց համար որպես Քավիչ, Փրկիչ, Թագավոր և Մարգարե: Քանզի, երբ եկավ, չընդունեցին նրան, այլ նույնիսկ, ենթարկելով մեծ անարգանքի, ի վերջո մատնեցին մահապատժի՝ խաչելույթյամբ: Եվ այդ մեծ անպատվույթյամբ և ծայրահեղ ոճրագործույթյամբ նրանց մեղքերը բազմապատկվելով հասան լրման, այդ պատճառով էլ նրանք վերջնականապես թողնվեցին, երբ Սուրբ Հոգին լքեց նրանց և պատռվեց եկեղեցական վարագույրը: Այդ պատճառով էլ հեթանոսներին հանձնված նրանց տաճարը կործանվեց և հասցվեց ամայույթյան, ըստ Տիրոջ նախասացույթյան՝ այդտեղ չպիտի մնա քար քարի վրա, որ չքանդվի (Մատթ., 24, 2): Եվ

այդպիսով նրանք ամբողջապես մատնված են հեթանոսներին և այն ժամանակ իրենց գերեվարած թագավորների կողմից ողջ աշխարհով մեկ սփռված, և հրամայված է նրանց այլևս չվերադառնալ իրենց երկիրը:

95. Այդպես և այժմ ողորմած և բարի Աստված մեզանից յուրաքանչյուրի հանդեպ ցուցաբերում է իր համբերությունը. չնայած շատերը բազմիցս են վշտացնում նրան, բայց Նա համբերում է, սպասելով, թե մարդը ժամանակի ընթացքում չի՞ սթափվի և չի՞ փոխվի արդյոք, որպեսզի այլևս չվշտացնի իրեն: Եվ մեծ սիրով և ուրախույթյամբ է ընդունում մեղքից դարձի եկողին: Քանզի այսպես է ասում. ուրախություներ կլինի մեկ մեղավորի համար, որն ապաշխարում է (Ղուկ., 15, 10), և դարձյալ՝ իմ երկնավոր Հոր կամքը չէ, որ այս փոքրիկներից մեկը կորչի (Մատթ., 18, 14): Բայց եթե մեկը, հասնելով այնպիսի բարձիթողի վիճակի՝ նրա հանդեպ Աստծո մեծ ողորմածույթյամբ և համբերությամբ հանդերձ, երբ Աստված չի ենթարկում նրան պատժի ամեն մի ծածուկ կամ հայտնի մեղանշական սայթաքումի համար, այլ տեսնելով դա, համբերում է՝ սպասելով ապաշ-

խարուժյան, սկսում է գործել մեղք մեղքի հետևից, անփութությունը հաջորդում է անփութությանը, մեղքի վրա մեղք է բարդում և հասնում է մեղքի լրմանը, ապա, ի վերջո, ընկնելով արդեն այնպիսի մեղքի մեջ, որից չի կարող դուրս պրծնել, ճկվում է, և հանձնվելով սատանային, ի վերջո մատնվում է կորստյան:

96. Այդպես եղավ սողոմացիների հետ: Շատ մեղքեր գործելով և դարձի չգալով, ի վերջո Հրեշտակների դեմ չար դիտավորություններ ունենալով, այնպիսի մեղքի մեջ ընկան, որ էլ տեղ չմնաց ապաշխարության համար, որ վերջնականապես նրանք մերժվեցին, որովհետև լրման հասցրին և նույնիսկ գերազանցեցին մեղքի չափը: Դրա համար էլ, ըստ Աստծո ղատաստանի, կրակի մատնվեցին: Այդպես եղավ և Նոյի ժամանակ. բազում անգամներ մեղքի մեջ ընկնելով և չապաշխարելով, տրվեցին այնպիսի մեղքերի, որ ապականեցին, ի վերջո, ողջ երկիրը: Այդպես և եգիպտացիների հանդեպ, որոնք շատ անարգեցին Աստծուն և մեղանչեցին Նրա ժողովրդի դեմ, Աստված դեռ ողորմած էր, նրանց չենթարկեց այնպիսի պատիժների,

որպեսզի իսպառ բնաջնջվեն, այլ միայն խրատելու նպատակով, որպեսզի նրանց դարձի և ապաշխարանքի մղի, նրանց թեթև հարվածներ հասցրեց՝ ցույց տալով Իր համբերատարությունը և սպասելով նրանց ապաշխարությանը: Բայց նրանք շատ բաներում մեղք գործելով Աստծո ժողովրդի հանդեպ, մեկ դարձի գալով, մեկ կրկին դրա համար գղջալով և հաստատվելով հնազույն չարահոժար անհավատության մեջ, Աստծո ժողովրդին ծանրաբեռնեցին աշխատանքներով: Ի վերջո, երբ Աստված Մովսեսի միջոցով բազում հրաշքներ գործելով ժողովրդին հանեց Եգիպտոսից, մեծ մեղք գործեցին՝ հետապնդելով Աստծո ժողովրդին: Ինչի համար և Աստվածային դատաստանը ի վերջո բնաջնջեց, կորստյան մատնեց, խորտակեց նրանց ջրերում, աշխարհի լույսին անարժան համարելով:

97. Մենք այդ մասին հանգամանորեն ծավալվել ենք, սիրելիներ՛ս, Գրվածքներից քաղած մտքերով հաստատելով, թե մեզ պետք է որքան կարելի է շուտ դարձի գալ և փութալ դեպի Տերը, Ով ողորմած է մեր հանդեպ և սպասում է, որպեսզի մենք կատարելապես

Հեռանանք ամեն կարգի խարդախություններին և չար նախապաշարումներից, որ դարձի եկողներին կընդունի մեծ ուրախությամբ, ասում եմ՝ այդ մասին խոսել ենք ավելի շատ այն բանի համար, որպեսզի օր առ օր չավելանա մեր արհամարհանքը ու չբազմապատկվեն մեր մեջ մեր մեղքերը և դրանով չհարուցենք Աստծու բարկությունը մեր հանդեպ: Այդ պատճառով էլ ձգտենք անկեղծ սրտով դարձի գալով, մերձենալ Աստծուն, և քանի որ հուսահատությունը չարության և խարդավանքի ներշնչումն է, փրկության հույսը չկորցնենք՝ անցյալում գործած մեղքերը հիշելով, որոնք մարդուն հուսալքության, անգործության, ծուլության և անհոգության են հասցնում միմիայն նրա համար, որ նա, շրջվելով և դարձի գալով դեպի Տերը, անգամ մարդկային ցեղի նկատմամբ Տիրոջ մեծ ողորմածության պարագայում փրկություն չստանա:

ե) Ի դեպ, երբ հոգին այս կերպ համակվում է փրկության գործը սկսելու վճռակաճությամբ, թշնամին նրա վրա է ուղղում հուսալքության և հուսահատության իր վերջին շիկացած նետերը:

98. Պատահում է, որ սատանան քեզ հետ

խոսակցություն է սկսում սրտիդ մեջ: «Նայիր, ինչքան չարիքներ ես գործել, նայիր, ինչպիսի վայրագությամբ է լցված քո հոգին: Ինչքան ես ծանրաբեռնված դու մեղքերով, և չես կարող արդեն փրկվել»: Դա ասում է, որ քեզ հուսահատության մեջ գցի, քանի որ նրան տհաճ է քո ապաշխարությունը: Քանզի հենց որ զանցառության միջոցով մտավ մեղքը, նա ամեն ժամ զրուցում է հոգու հետ, ինչպես մարդը մարդու հետ: Դու էլ նրան պատասխանիր. «Ամենակալ Տերը ասում է՝ կենդանի եմ ես և ամբարշտի մահը չեմ ուզում, այլ նրա՝ հետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը» (Եզեկ. 33, 11):

Քանզի դրա համար իջավ Նա, որպեսզի փրկի մեղավորներին, հարություն տա ննջեցյալներին, կենդանություն տա մեռյալներին, լուսավորի խավարում գտնվողներին»: Եվ իրոք, իր գալուստով Նա մեզ կոչեց որդեգրության, կանչեց դեպի սուրբ և խաղաղ քաղաք, անվախճան և անմահական կյանք, անապական փառք, միայն թե մենք մեր սկզբին տանք բարի ավարտ, լինենք աղքատության, պանդխտության, դաժան չար-

չարանք մեջ, չղաղարենք խնդրել Աստծուն՝ անղաղար դուռը թակելով: Ինչպես մարմինը մոտ է հոգուն, այդպես էլ Տերը մոտ է և պատրաստ՝ գալու, բացելու սրտի փակված դարպասները և պարզեցնելու մեզ երկնային հարստություն: Նա բարի է և մարդասեր, և անսուտ են Նրա խոստումները, միայն թե համբերություն փնտրենք Նրան մինչև վերջ:

99. Պատկերացրու պարսկական բանակը և հռոմեական բանակը: Եվ ահա դրանց միջից դուրս են գալիս արիություն և թևավորված երկու հավասարազոր պատանիներ և սկսում են մենամարտել: Այդպես թշնամի ուժը և միտքը հավասարազոր և հավասարաուժ են. ինչպես սատանան ի զորու է խոնարհեցնել հոգին և շողոքորթություններ քաշել իր կամքի ներքո, այնպես և հոգին՝ առարկել և ոչ մի բանում նրան չհնազանդվել, քանի որ երկու ուժերն էլ կարող են միայն խթանել, այլ ոչ թե հարկադրել չարը և բարին: Աստծո օգնությունը տրվում է այդպիսի հոժարությունը և այն կարող է պայքարով գեներ ձեռք բերել երկնքից և դրանով հաղթանակել ու արմատախիլ անել

մեղքը: Քանի որ հոգին կարող է դիմակայել մեղքին, բայց չի կարող առանց Աստծո հաղթել կամ արմատախիլ անել չարիքը: Իսկ ուրքեր պնդում են, թե մեղքը նման է զորեղ հսկայի, իսկ հոգին՝ պատանու, սխալվում են: Քանզի, եթե այդպիսին լիներ տարբերությունը և մեղքը նման լիներ հսկայի, իսկ հոգին՝ պատանու, ապա Օրենսդիրը անարդարացի կլիներ, Ով մարդուն օրենք տվեց մարտնչելու սատանայի հետ:

100. Իսկ եթե մեզ թվում է կարծես, թե որքա՛ն դժվար իրագործելի և անհնար է դարձի գալը նախապես մեզ տիրած բազում մեղքերից (իսկ միտքը, ինչպես արդեն ասել ենք, չարից է ներշնչվում և խոչընդոտում է մեր փրկությունը), ապա մեր հիշողություն մեջ արթնացնենք և անուշադրություն չմատնենք, թե ինչպես Իր ողորմածություն Երբ, գալով մեզ մոտ, տեսողություն տվեց կույրերին, բժշկեց տկարներին, դարմանեց ամենայն հիվանդություն, հարուժյուտ տվեց մեռելներին, որոնց արդեն հպվել էր ապականության և քայքայման շունչը, բացեց խուլերի լսողությունը, մի մարդու միջից արտաքսեց դևերի լեգեոնը և այդպիսի

դիվաճարութեան հասածին վերադարձրեց առողջ բանականութիւնը: Հապա որքա՛ն առավել կտա հոգուն, որը Նրան է դիմում, Նրանից է սպասում ողորմածութիւն, Նրանից է հայցում օգնութիւն, Նա դարձի կբերի և կհասցնի անախտութեան, ողջախոհութեան, ամենայն առաքինութեանց բարեկարգութեան, մտքի նորոգութեան, կպարգևի նրան առողջութիւն, իմացութիւն, խորհուրդների խաղաղութիւն, անհավատութեան, անգիտութեան և աներկյուղածութեան կուրուցութիւնից, խլութիւնից և մեռելայնութիւնից կբարձրացնի ողջախոհութեան, առաքինութեան և սրտի մաքրութեան: Քանզի Ով ստեղծեց մարմինը, Նա էլ արարեց հոգին: Եվ ինչպես երկրի վրա էր բոլոր իր մոտ եկողներին և իրենից օգնութիւն և բժշկութիւն հայցողներին, որպես բարի և միակ Բժիշկ, բաշխում էր առատորեն, ով ինչի կարիքը որ ուներ, Նա այդպես առատաձեռն է նաև հոգևոր անդաստանում:

101. Եվ այդ բոլորով Նա մեզ հորդորեց, որպեսզի անկոտորում, անդադար, անխոնջ կերպով աղերսենք Նրա շնորհի հովանավո-

րութիւնը, քանզի Նա եկավ մեղավորների համար, որպեսզի դառնան դեպի իրեն և Ինքը բժշկի իրեն հավատացողներին: Միայն թե հրաժարվենք մեր չար նախապաշարուններից, ինչքանով որ կարող ենք, ատելութեամբ լցվենք մեր վատթար զբաղմունքների և աշխարհիկ գայթակղութիւնների հանդեպ, երես թեքենք չար և ունայն խորհուրդներից, մեր ուժերի կարողութեան չափով Նրան կապվենք: Իսկ Ինքը պատրաստակամ է ցույց տալու մեզ իր օգնութիւնը, քանի որ բազումողորմ է, կենդանութիւն է պարգևում, բժշկում է անբուժելի ախտերը, իրագործում է նրանց փրկութիւնը, ովքեր իրեն են կանչում, իրենց սեփական կամքով իրեն են դառնում և ուժերի ներածի չափով հոժարակամ հեռանում են ամենայն աշխարհիկ սիրուց, միտքը շեղում են երկրից և Նրան են ձգտում իրենց ցանկութիւններով և որոնումներով:

զ) Երբ բոլոր հակառակ մտքերը վերացված են, պայքարն ինքն իր հետ կամքը ուղղելու համար ավարտվում և ձևավորվում է իր փրկութիւնը կերտելու համար Տիրոջը ծառայելու վճռակաճնութիւնը, մահու չափ անհողողող վճռակաճնութիւնը:

յունը՝ թեկուզ և մեռնեն՝ չեմ գնա մեղքին ընդառաջ:

102. Սուրբ Մակարը խոսում է ճշմարիտ վճռականությամբ տոգորված հոգու մասին, հազարավոր փորձությունների մեջ ինչ էլ որ բաժին հասնի նրան, ողջը համբերատար կրելով, նա ասում է՝ եթե անգամ մեռնեմ, չեմ թողնի Նրան (այսինքն՝ Տիրոջը ի հաճույս մեղքի և թշնամու):

է) Բայց այդ վճռականությունը նա հաճախ արտահայտում է հոգու զոհաբերությամբ, ինչպես մորթում են զոհաբերվող կենդանուն, քանզի այդ վճռականությունը հենց որպես ողջակեզ է Տիրոջ համար:

103. Եթե մարմնավոր մարդը որոշում է ձեռնամուխ լինել ինքն իրեն փոխելու, նախ նա մեռնում է և անպտուղ դառնում այն նախկին չար կյանքի համար:

104. (Զոհի մատուցման համար օրենք է), որպեսզի նախ քահանան մորթի զոհին, իսկ հետո նրա կտրտված մասերն աղ դրվի և վերջապես դրվի կրակին: Քանզի, եթե քահանան նախօրոք ոչխարները չմորթի, ապա

չի աղվի և չի պողաբերի Տիրոջ համար: Այդպես և մեր հոգին, մոտ գնալով ճշմարիտ Քահանայապետ Քրիստոսին, պետք է Նրանից մահվան մատնվի և մեռնի իր իմաստակությունների և վատթար կյանքի համար, որպիսին ապրել է, այսինքն՝ մեղքի համար: Եվ ինչպես կյանքն է լքում զոհին, այդպես էլ նրան պետք է լքի ամենայն կրքերի չարությունը: Ինչպես մարմինը, երբ նրանից հեռանում է հոգին, մեռնում է և չի ապրում այլևս այն կյանքով, որ ապրել է, չի լսում, չի քայլում, այդպես և, երբ երկնային Քահանայապետ Քրիստոսն իր զորության շնորհով կորստյան կմատնի և կմեռցնի հոգում կյանքն աշխարհի համար. մեռնում է նա այն չար կյանքի համար, ինչպիսին ապրել է, և այլևս չի լսում, չի խոսում, չի ապրում մեղսալի խավարում, քանի որ կրքերի չարությունը, որպես իր հոգին, շնորհով դուրս է գալիս նրանից: Եվ Առաքյալը կոչում է, ասելով՝ աշխարհը խաչված է Ինձ համար, Ես էլ՝ աշխարհի համար (Գաղ. 6, 14):

ը) Որպեսզի այս ճշմարտությունը մտքի մեջ առավել ցայտուն դրոշմի, սուրբ Մակարը մանրա-

մասն պատկերում է, թե բոլոր անհաջողությունները հոգևոր կյանքում, բոլոր անկումները և գայթումները և բոլոր բարոյական մղումներն առաջ են գալիս ամեն ինչից հրաժարվելով՝ Տիրոջն անձնուրաց ծառայելու վճռականության պակասից:

105. Շատ քչերն են, որ բարի սկիզբը զուգակցել են բարի ավարտի հետ, անգայթ հասել են նպատակին, ունենալով միակ սերը Միակ Աստծո հանդեպ և հրաժարվել են ամենայն ինչից: Շատերը լցվում են գորովանքով, խանդաղատանքով, շատերը դառնում են երկնային շնորհի մասնակից՝ խոցված երկնայինի սիրով, բայց չդիմանալով ճանապարհին հանդիպող այլազան մարտնչումներին, ճիգերին, դժվարություններին և սատանայի փորձություններին, քանի որ յուրաքանչյուրը ցանկություն ունի որևէ բան սիրելու այս աշխարհում և ոչ բոլորովին հրաժարվել իր սիրուց, վերադառնալով բազմակերպարան և բազմապիսի աշխարհիկ ցանկություններին, իրենց թուլության և անգործունյա լինելու պատճառով, կամ էլ իրենց սեփական կամքի վեհերոտության պատճառով, կամ երկրային որևէ բանի հան-

դեպ սիրո պատճառով, մնացին աշխարհում և ընկղմվեցին նրա խորքը: Իսկ նրանք, ովքեր իսկապես մտադիր են մինչև վերջ ունենալ բարի վարք, այդպիսի երկնային սիրո հետ միասին, չպետք է իրենց վրա հոժարակամ վերցնեն և խառնեն ուրիշ մի այլ սեր և հակվածություն, որպեսզի դրանով խոչընդոտ չդրվի հոգևորին, որպեսզի չընկրկեն և, ի վերջո, չգրկվեն կյանքից: Ինչպես մեծ են Աստծո խոստումները, անճառելի և անխոստովանելի, այդպես էլ անհրաժեշտ են մեզ և՛ հավատ, և՛ հույս, և՛ գործեր, և՛ մեծ սխրանքներ, և՛ երկարատև փորձառություն: Չնչին չեն այն բարիքները, որոնք հույս ունի ստանալ Երկնային Արքայություն տենչացող մարդը: Քրիստոսի հետ նա ցանկանում է թագավորել հավիտյանս, մի՞թե հանձն չի առնի, այս կյանքի կարճատև ժամանակի ընթացքում, մինչ ի մահ համբերատար մաքառել, կրել դժվարություններ և փորձություններ: Տերը կանչում է. Եթե մեկը կամենում է հետևել Ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը, մշտապես ուրախանալով, և գա իմ Եստից. (Մատթ., 16, 24): Եվ դարձյալ՝ Եթե մեկը Ինձ մոտ գա և չնա-

իւրԱսորի Իճձ իր հորից ու մորից, կԱռջից ու որդի-
Աերից, եղբայրԱերից ու քույրերից, ԱույԱիսկ իր
աԱձից, չի կարող Իմ աշակերտը լիԱել (*Ղուկ.*,
14, 26): Բայց մարդկանցից շատերը, չնայած
մտադրվում են ստանալ արքայությունը և
ցանկանում են ժառանգել հավիտենական
կյանք, սակայն չեն հրաժարվում ապրել ըստ
իրենց սեփական ցանկությունների և հե-
տևել այդ ցանկություններին, ավելի ճիշտ է
ասել, հետևել իրենց մեջ սերմանվող ունայ-
նությանը, և չհրաժարվելով իրենք իրենցից,
կամենում են ժառանգել հավիտենական
կյանք, ինչն անհնար է:

106. Ճշմարիտ է Տիրոջ խոսքը: Նրանք են
անարգել ընթանում, որոնք, Տիրոջ պատվի-
րանների համաձայն, ամբողջովին հրաժար-
վել են իրենք իրենցից, սաստիկ խորշում են
ամենայն աշխարհիկ ցանկություններից,
կապերից, զվարճանքներից, հաճույքներից
և զբաղմունքներից, աչքի առջև ունեն Միակ
Տիրոջը և տենչում են պահել Նրա պատվի-
րանները: Այդ պատճառով էլ կամովին մո-
լորվում է յուրաքանչյուրը, եթե իսկապես
չի ցանկանում հրաժարվել ինքն իրենից և
այն սիրո հետ սիրում է ևս ինչ-որ մի բան,

բավականություն է ստանում այս աշխարհի
ինչ-ինչ հաճույքներից կամ ցանկություն-
ներից և չունի Տիրոջ հանդեպ կատարյալ
սեր, որքանով հնարավոր է դա հոժարութ-
յան և կամեցողության համար:

107. Հաճախ թվացյալ լավ սկիզբը ի կա-
տար է ածվում հանուն փառքի և մարդկանց
գովեստների, իսկ դա Աստծո առաջ հավա-
սարագոր է անարդարության, գողության և
այլ մեղքերի: Քանզի ասված է՝ Աստված ցրե-
լու է երեսպաշտների ոսկորները (*Սաղմ.*, 52, 6):
Չարը իրեն մատուցված ծառայություն է
տեսնում նաև թվացյալ բարի գործերում.
նա շատ բազմակերպ և հրապուրիչ է աշ-
խարհիկ ցանկություններում: Որևէ մի երկ-
րային և մարմնավոր սիրո համար, որին
մարդ կապվում է հոժարակամ, մեղքը որ-
սում է նրան, դառնում է մարդու համար
չղթաներ, կապանքներ, ծանր բեռ, որը ջրա-
հեղձ է անում և ճնշում է նրան չար աշխար-
հում՝ թույլ չտալով նրան համախմբել ուժե-
րը և վերադառնալ Աստծուն: Ինչը սաստիկ
սիրել է մարդը աշխարհում, դա էլ ծանրա-
բեռնում է նրա միտքը, տիրում է նրան և
թույլ չի տալիս համախմբել ուժերը: Դրա-

նից են կախված և՛ հավասարակշռութիւնը, և՛ հակումները, և՛ արատի գերակշռութիւնը. դրանով է փորձվում ողջ մարդկային ցեղը, փորձվում են բոլոր քաղաքներում, կամ լեռներում, կամ օթեաններում, կամ դաշտավայրերում, կամ էլ անապատային տեղանքներում ապրող քրիստոնյաները, քանի որ մարդը, բռնված իր սեփական կամքով, սկսում է սիրել ինչ-որ բան. նրա սերը կապվում է ինչ-որ բանով և այլևս կատարելապես չի ուղղված Աստծուն: Օրինակ, մեկը շատ է սիրում ունեցվածք, իսկ մի ուրիշը՝ ոսկի, արծաթ, մի ուրիշն էլ՝ բազմիմաց աշխարհային իմաստութիւն՝ մարդկային փառքի համար, մեկը շատ է սիրում իշխանութիւն, մյուսը՝ փառք, մեկը սիրում է անվերջանալի հավաքույթներ, մի ուրիշն էլ ողջ օրը անց է կացնում զվարճանքների և հաճույքների մեջ, մեկը գայթակղվում է ունայն խորհուրդներով, մի ուրիշը մարդկային փառքի համար կարծես թե սիրում է լինել կրոնուսույց, մեկը բավականութիւն է զգում անգործութիւնից ու ծուլութիւնից, մյուսը կապված է ճոխ զուգսի հետ, մեկը տրվում է երկրային հոգսերի, մյուսը սիրում

է քնել, կամ սրախոսել, կամ զազրախոսել: Ով ինչով կապված է աշխարհին, փոքր բան լինի դա, թե՛ մեծ, դա էլ խանգարում է նրան և թույլ չի տալիս ուժերը համախմբել: Որ կրքի հետ մարդը արիաբար չի մաքառում, սիրում է դա, այն էլ տիրում է նրան, և՛ ծանրաբեռնում է, և՛ դառնում է նրա համար շղթաներ, և՛ խոչընդոտ նրա մտքին՝ դարձի գալու դեպի Աստված, հաճելի լինելու Նրան, և ծառայելով Նրան Միակին, արժանահարկ դառնալու արքայութեան համար ու ժառանգելու հավիտենական կյանք:

108. Իսկ Տիրոջն իրապես ձգտող անձը լրիվ և ամբողջութեամբ Նրան է ուղղում իր սերը, և ինչքան ուժ ունի, Նրան՝ Միակին է կապվում հոժարութեամբ և դրանում է գտնում շնորհի աջակցութիւնը, ուրանում է ինքն իրեն և չի հետևում իր մտքի ցանկութիւններին, քանի որ միտքը մեզանից անբաժան և մեզ գայթակղող չարի պատճառով խոտոր ուղիով է ընթանում: Այսպիսով, հենց որ անձը սաստիկ սիրում է Տիրոջը, պատուում դուրս է գալիս կապանքներից իր սեփական հավատքով, մեծ փութաջանութեան շնորհիվ և ի վերուստ տրված օգնութ-

յամբ արժանանում է հավիտենական արքայության, և ճշմարտապես սիրելով այն՝ իր հոժար կամքով և Տիրոջ օգնությամբ, այլևս չի գրկվի հավիտենական կյանքից:

109. Որպեսզի գործով առավել հստակ ցույց տանք, թե ինչպես են շատերը կործանվում իրենց հոժար կամքով՝ խեղդվում են ծովում, գերեզարկվում են, պատկերացրո՛ւ, որ մի տուն է հրդեհվել. մեկը, հենց որ իմանում է հրդեհի մասին, մտածում է փրկել իրեն և դուրս է փախչում, և թողնելով ամեն ինչ, վճռում է հոգալ միայն իր անձի մասին, և փրկվում է, մյուսը՝ մտադրվելով իր հետ վերցնել որոշ տնային իրեր կամ էլ ուրիշ մի բան, մտնում է տուն, որպեսզի վերցնի դրանք, և մինչ վերցնում է, կրակը ուժգնորեն տարածվում է տնով մեկ և նրան առնելով բոցերի մեջ, մոխրացնում է: Տեսնո՞ւմ ես, արդյոք, որ այդ մարդը կրակի բոցերի մեջ մեռավ իր հոժար կամքով, սիրո պատճառով, այսինքն՝ իրենից ավելի սիրելով ժամանակավոր ինչ-որ բան: Նմանապես ոմանք նավարկում են ծովով, և վրա է հասնում փոթորիկը. մեկը մերկանալով ջուրն է նետվում՝ միայն իրեն փրկելու մտադրությամբ,

և ահա նա, հալածված ալիքներից և ոչնչով չկաշկանդված, բացի իր անձը փրկելու հոգսից, լողալով ալիքների վրայով, հնարավորություն է ունենում դուրս գալու դառնաշունչ ծովից, իսկ մյուսը՝ մտադրված լինելով փրկելու իր հագուստներից ինչ-որ բան, մտածում է, որ դրանցով էլ, եթե վերցնի իր հետ, կարելի է լողալ և դուրս գալ ծովից, սակայն հետը վերցրած հագուստները ծանրաբեռնեցին նրան և ջրասույզ արին ծովի խորքը, և ահա, չմտածելով իր անձի մասին, հանուն չնչին շահի՝ նա կործանվեց: Նկատո՞ւմ ես արդյոք, որ նա իր հոժար կամքով դարձավ մահվան բաժին: Պատկերացրու դարձյալ, որ լուր է հասել օտար հրոսակների մասին. մեկը, հենց որ լսում է այդ մասին, բնավ չի հապաղում, անմիջապես փախչում է և ճանապարհ է ընկնում ոչ մի բան չվերցնելով, մյուսը՝ չհավատալով, որ թշնամիներ են գալիս, կամ էլ ցանկանալով իր որոշ իրերն իր հետ վերցնել, և դա վճռելիս, ուշացրեց փախուստը, և ահա թշնամիներն եկան, վերցրին նրան ու գերի տարան օտար ցեղերի երկիրը և հարկադրեցին ապրել այդտեղ ստրկության մեջ: Տեսնո՞ւմ ես արդյոք, որ

սա էլ իր հոժար կամքով, իր անգործունեութեան, անբավարար խիզախութեան և որոշ իրեր սիրելու պատճառով գերեվարվեց:

110. Դրանց նման են և նրանք, որոնք չեն հետևում Տիրոջ պատվիրաններին, չեն հրաժարվել իրենք իրենցից և չեն սիրել միակ Տիրոջը, այլ հոժարութեամբ կապվել են երկրային կապանքներով: Եթե ուզում ես Տիրոջ հանդեպ կատարյալ սիրո իսկութունը իմանալ սուրբ Աստվածաշունչ Գրվածքներից, ապա նայիր, թե Հոբը ինչպես զրկվեց, այսպես ասած, այն ամենից, ինչ ունենալ՝ զավակներ, սեփականություն, անասուններ, ծառաներ և այլ ունեցվածք: Նրան համարում էին շատ մեծ ունեցվածքի տեր, բայց Տիրոջ փորձությունից պարզ դարձավ, որ Հոբը չունենա ոչինչ, բացի միակ Աստծուց: Ինչպես և Աբրահամը, երբ Տերը պատվիրեց նրան Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից (Ծննդ., 12, 1), այդժամ զրկվեց, այսպես ասած, ամեն ինչից՝ հայրենիքից, հողից, հարազատներից, ծնողներից, և հետևեց Տիրոջ խոսքին: Հետագայում նրա նոր փորձությունների և դժվարությունների մեջ, երբ կնոջը վերցրին իրենից, երբ ապրում էր օ-

տար երկրում և տանում վիրավորանքներ, բոլոր այդ դեպքերում ապացուցեց, որ ամեն ինչից առավել սիրում է Միակ Աստծուն: Ի վերջո, երբ խոստման համաձայն, շատ տարիներ անց, ունեցավ արդեն այդչափ փափագած մինուճար որդուն, և Աստված պահանջեց նրանից, որ այդ որդուն պատրաստակամորեն զոհաբերի, հնազանդվեց Աբրահամը և իսկապես ուրացավ ինքն իրեն: Քանզի մինուճարին զոհաբերելով, ապացուցեց, որ ոչ մի այլ բան չի սիրել, բացի Աստծուց: Եվ եթե այդպիսի պատրաստակամություններ ընծայեց նա որդուն, ապա առավել ևս, երբ պատվիրվեց թողնել մնացած ունեցվածքը կամ միանգամից բաժանել աղքատներին, ապա դա էլ կաներ բոլորանվեր պատրաստակամություններ և ջանադրություններ: Արդ, տեսնո՞ւմ ես, արդյոք, Տիրոջ հանդեպ կատարյալ և հոժարակամ սիրո իսկությունը:

111. Այդպես և այդ արդարների ժառանգակիցը դառնալ ցանկացողները չպետք է սիրեն ոչինչ, բացի Աստծուց, որպեսզի, երբ ենթարկվեն փորձությունների, բարեպաշտ և հավատարիմ երևան՝ կատարելապես պահ-

պանելով Տիրոջ հանդեպ իրենց սերը: Միայն նրանք ի վիճակի կլինեն սխրանքը հասցնել ավարտին, որոնք մշտապես իրենց հոժար կամքով սիրել են Միակ Աստծուն և խորշել են աշխարհի ամեն տեսակ սիրուց: Բայց մարդկանցից շատ քչերն են, որոնք ընդունում են այսպիսի սերը, խորշում են աշխարհի ամեն կարգի հաճույքներից և ցանկություններից և վեհանձնորեն դիմակայում են չարի ընդվզումներին և փորձություններին: Մարդկանցից շատ շատերը ցանկանում են արքայության արժանանալ առանց դժվարությունների, առանց ճիգերի, առանց քրտինք թափելու, բայց դա անհնար է:

112. Ինչպես աշխարհում ոմանք գնում են ինչ-որ հարուստ մարդու մոտ աշխատելու հնձի, կամ էլ ուրիշ մի գործի ժամանակ, որպեսզի վաստակեն, ինչի կարիքը ունեն ապրուստի համար, և նրանցից ոմանք լինում են ծուլ և անբան մարդիկ, չեն աշխատում մյուսների նման, չեն աշխատում ինչպես հարկն է, բայց ջանք ու ճիգ չթափելով հարուստի տանը, ցանկանում են, իբր ամբողջ գործն արդեն ավարտել են, վարձքը հավասար ստանալ նրանց նման, ովքեր աշ-

խատել են համբերությամբ ու փութեռանդորեն և իրենց ամբողջ ուժով: Նմանապես և մենք, երբ կարդում ենք Գիրքը, կամ էլ որևէ արդարի մասին, թե ինչպես է նա Աստծուն ծառայել, ինչպես է դարձել Աստծո ընկերը և զրուցակիցը, կամ էլ բոլոր հայրերի մասին, ինչպես են դարձել նրանք Աստծո ընկերները և ժառանգները, ինչքան դառնություններ են կրել, ինչքան են տառապել հանուն Աստծո, ինչքան փառապանծ գործեր և սխրանքներ են կատարել, այդժամ երանի ենք տալիս նրանց և ցանկանում ենք նրանց հավասար պարգևներ և արժանիքներ ստանալ: Հաճույքով ցանկանում ենք ստանալ նրանց փառավոր պարգևները, մի կողմ դնելով, սակայն, նրանց աշխատանքները, ճիգերը, վշտերն ու տառապանքները, և ձեռք բերել այն մեծարանքները և արժանիքները, որոնք նրանք ընդունեցին Աստծուց: Եռանդագին փափագում ենք, իսկ նրանց ճգնությունները, չարչարանքները և սխրանքները մեր վրա չենք վերցնում: Բայց ասում եմ քեզ, որ այդ ամենը բոլորն էլ ցանկանում և փափագում են. և՛ պոռնիկները, և՛ մաքսավորները, և՛ անարդար մարդիկ

կցանկանային ստանալ արքայությունը այդչափ դյուրությամբ, առանց դժվարության, տքնանքի և ճիգերի: Այդ պատճառով էլ այդ ճանապարհին հանդիպում են փորձություններ, բազում դժվարություններ, վշտեր, մարտնչումներ, տքնանք և քրտնաջանություն, որպեսզի հայտնի դառնան նրանք, ովքեր իսկապես կատարյալ հոժարությամբ և բոլոր ուժերով անգամ մինչև մահ սիրել են Միակ Աստծուն և Նրա հանդեպ նման սիրուց բացի այլևս չեն ունեցել իրենց համար ցանկալի ուրիշ մի բան: Այդ պատճառով էլ նրանք արդարացիորեն կմտնեն երկնքի արքայություն, Տիրոջ խոսքի համաձայն, հրաժարվելով իրենք իրենցից և իրենց կյանքից առավել սիրելով Միակ Աստծուն, ուստի և իրենց մեծ սիրո համար էլ կպարգևատրվեն երկնային վսեմ պարգևներով (5, 14):



Ե Մաքառումների վիճակը

ա) Վճռականությունը ելման կետն է: Հարկ է նպատակաուղղել այն, որ ջանքերը ապարդյուն չլինեն: Ո՞րն է այդ նպատակը: Այն է՝ Սուրբ Հոգու շնորհով հասնենք բնության նորոգության: Հենց դրան էլ պետք է իր բոլոր ջանքերն ուղղի վճիռը կայացրածը, որպեսզի Սուրբ Հոգին հովանի լինի նրան զորությամբ և ներգործությամբ, և հանց կրակ՝ սկսի այրել ամենայն անմաքրություն: Երբ դա ավարտվում է, այդժամ կարծես հոգու մեջ հոգի է մտնում, մարդը հոգեպես կենդանանում է, կամ էլ միայն դրանով է դառնում մարդ: Դա սուրբ Մակարի գլխավոր միտքն է, որի շուրջը խմբվում են բոլոր մնացածները:

113. Ով մերձենում է Տիրոջը և իսկապես ցանկանում է դառնալ Քրիստոսի հետևորդ, նա պետք քայլի դեպի այդ նպատակը, որպեսզի փոխվի, իրեն դրսևորի որպես լավագույն և նոր մարդ, չպահելով իր մեջ հին մարդուն բնորոշ ոչինչ: Քանզի ասված է՝ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է (Բ Կորնթ., 5, 17):

114. Ըշմարտապես Քրիստոսին հավատացող հոգուն հարկ է այժմյան արատավոր վիճակից անցնել այլ՝ բարի վիճակի և այժմյան նվաստացած բնությունը փոխել այլ՝ աստվածային բնությամբ և Սուրբ Հոգու գործության ներգործությամբ դառնալ նոր էություն: Եվ այդժամ միայն նա կարող է արժանահարկ դառնալ Երկնային Արքայության համար: Դրան հասնել կարող ենք միայն մենք, որ հավատում ենք, անկեղծ սիրում ենք Նրան և կատարում ենք Նրա բոլոր սուրբ պատվիրանները: Եթե Եղիսեի ժամանակ ջրի մեջ գցված փայտը, որ բնականից ջրից թեթև է, իր վրա կրեց բնականից ծանր երկաթը, ապա Տերը որքան առավել այստեղ կողարկի թեթև, դյուրաթռիչ, բարի և երկնային Սուրբ Հոգին և Նրանով կթեթևացնի կեղծիքի ջրերում աղտոտված հոգին, կթևավորի, այստեղից կտանի երկնային բարձունքները, կվերակերտվի և կվերափոխվի նրա սեփական բնությունը:

115. Ինչպես մարմինը մեռած է առանց հոգու և ոչինչ չի կարող անել, այդպես էլ հոգին առանց երկնային շնչի, առանց Աստծո Հոգու մեռած է արքայության համար և

առանց Հոգու չի կարող անել այն, ինչ Աստվածային է:

116. Այդ պատճառով էլ, ով ձգտում է հավատալ և գնալ դեպի Տերը, պետք է անդադրում աղոթի, որպեսզի դեռևս այստեղ ընդունի Աստծո Հոգին, քանզի Նա հոգու կյանքն է, և դրա համար էր Տիրոջ գալուստը, որպեսզի դեռևս այստեղ տա հոգուն կյանք՝ Սուրբ Հոգին:

117. Աստված այնքան բարեհաճ գտնվեց քո հանդեպ, որ իջավ սուրբ երկինքներից և առավ Իր վրա քո բանական բնությունը և հողեղեն մարմինը, շաղախելով Իր Աստվածային Հոգու հետ, որպեսզի և դո՛ւ՝ հողեղենը, ընդունես քո մեջ երկնային հոգին: Եվ երբ քո հոգին հաղորդությամբ մեջ կլինի Հոգու հետ և երկնային շունչը կթափանցի քո հոգու մեջ, այդժամ կատարյալ մարդ ես դու Աստծո մեջ. և՛ ժառանգորդ, և՛ որդի:

118. Այդ պատճառով էլ հարկավոր է մեզ սիրել Տիրոջը, ձգտել ամեն կերպ հառաջադիմել բոլոր առաքինություններում, անխոնջ ու անդադար խնդրել, որպեսզի ամբողջովին և կատարելապես ընդունենք Նրա Հոգու խոստումները, որպեսզի կենդանա-

նան մեր հոգիները, քանի մենք տակավին մարմնի մեջ ենք: Քանզի, եթե հոգին դեռ այս կյանքում չընդունի իր մեջ Հոգու սրբությունները՝ առատ հավատքի և աղոթքների համար և չդառնա հաղորդակից Աստվածային բնությանը՝ չաղախվելով շնորհով, որի ներգործությամբ կարող է սրբորեն և պարկեշտաբար կատարել յուրաքանչյուր պատվիրան, ապա այն անպիտան կլինի Երկնային Արքայության համար:

119. Առաջին մարդու անհնազանդության պատճառով մեր մեջ ընդունեցինք մեր բնությանը օտար, վնասակար կրքեր և սովորություններ, երկարատև յուրացումով դրանք մեզ համար ասես բնություն դարձրինք: Եվ դարձյալ Հոգու սքանչելի, անըստզյուտ պարզևով հարկ է արմատախիլ անել մեր միջից այդ օտարը և մեզ վերահաստատել նախկին սրբության մեջ: Եվ եթե այժմ բազում աղերսանքներով, խնդրանքներով, հավատով, աղոթքով, աշխարհից հեռանալով չընդունենք մեր մեջ Հոգու այդ երկնային սերը, և արատով պղծված մեր բնությունը չկապվի սիրուն, այսինքն՝ Տիրոջը, և օծված չլինի Հոգու այդ սիրով, և մենք մինչև վերջ ան-

սայթաք չլինենք՝ ամենայն ստուգությամբ ապրելով Տիրոջ պատվիրաններով, ապա չենք կարող ժառանգել Երկնային Արքայությունը:

բ) Ով ապաշխարելով դարձի է եկել դեպի Տերը, նրա մեջ խորհուրդն ընդունելուց հետո, ապրում է շնորհը: Սակայն շնորհը ամեն մեկի մեջ յուրովի է հայտնվում: Ոմանց հովանի է լինում իսկույն ևեթ, ոմանց երկարատև փորձությունների է ենթարկում և դրանից հետո է միայն երևան բերում իր ներգործությունը:

120. Աստծո անսահման և անհասանելի իմաստությունն իր շնորհը բաշխում է մարդկային ցեղին բազմազան ձևերով, անըմբռնելիորեն և անքննելիորեն՝ ազատ կամքը փորձելու համար, որպեսզի ի հայտ գան Աստծուն ամբողջ սրտով սիրողները և հանուն Նրա ամեն կարգի վտանգի դիմակայողները և ցանկացած նեղության համբերողները: Քանզի, ոմանց, հենց որ դիմում են հավատով և աղոթքով, չնայած դեռ ապրում են աշխարհի մեջ, առանց նրանց նեղությունների, քրտինք թափելու և ճիգերի, նախօրոք հայտնվում են Սուրբ Հոգու պար-

գեւներն ու շնորհները: Ընդ որում, Աստված շնորհը տալիս է ոչ առանց պատճառի, ոչ վաղաժամ և ոչ անպատեհ, այլ անճառելի և անհասանելի մի իմաստութեամբ, որպեսզի փորձված լինի բոլոր նրանց հոժարութիւնը բարու մեջ և ազատ կամքը, ովքեր վաղաժամ են ստանում Աստծո շնորհը, այսինքն այն բանում, որ նրանք զգում են իրենց հանդեպ Աստծո ցուցաբերած բարերարութիւնը, ողորմածութիւնը և քաղցրութիւնը՝ ըստ շնորհի այն չափի, որը հայտնվեց նրանց առանց իրենց սեփական ջանքերի, որին արժանանալով, նրանք պարտավոր են ցուցաբերել փութեռանդութիւն, անխոնջութիւն, ջանք և կամքից ու հոժարութիւնից բխած սիրո պտուղը և փոխհատուցել պարգևների համար, այսինքն՝ կատարելապես հեռանալով ամեն տեսակ մարմնական ցանկութիւններից, ամբողջովին նվիրվել Տիրոջ սիրուն և կատարել Տիրոջ կամքը միայն:

121. Իսկ ոմանց, չնայած հեռացել են նրանք աշխարհից, հրաժարվել են այս կյանքից՝ ըստ Ավետարանի և մեծ համբերութեամբ առաջադիմում են աղոթքի մեջ, պահ-

քի մեջ, ջանադրութեան մեջ և մյուս առաքինութիւնների մեջ, Աստված և՛ շնորհը, և՛ հանգիստը, և՛ հոգևոր պարգևները չի տալիս իսկույն ևեթ, այլ հապաղում է և ուշացնում է շնորհը: Եվ դա ոչ առանց պատճառի, ոչ անժամանակ, ոչ անպատեհ, այլ որոշակի անճառելի մի իմաստութեամբ, ազատ կամքը փորձելու համար, որպեսզի տեսնի՝ իսկապե՞ս ճշմարիտ և հավատարիմ են համարում Աստծուն, որ խոստացել է տալ խնդրողներին և կյանքի դուռը բացել բախողների առաջ, որպեսզի տեսնի՝ նրանք ճշմարտապե՞ս են հավատացել Իր խոսքին, արդյո՞ք մինչև վերջ առանց կասկածի կլինեն հավատքի մեջ և արդյո՞ք ողջ ջանադրութեամբ կսկսեն խնդրել և փնտրել, երես չե՞ն թեքի արդյոք Աստծուց դաժան տառապանքների և ահուգողի մեջ, անհավատութեան և անհուսութեան մեջ ընկնելով, չե՞ն մատնվի արդյոք ծուլութեան, հապաղելու և իրենց կամքի ու հոժարութեան փորձի պատճառով արդյո՞ք կհամբերեն մինչև վերջ:

122. Քանզի ով ուշ է ստանում, երբ Աստված հետաձգում է և ուշացնում է, էլ ավելի է բոցավառվում և տենչում երկնային բա-

րիքները և օրեցօր գործադրում է ավելի մեծ ցանկություն, ջանք, անխոնջություն, ճիգեր, բոլոր առաքինությունների ամբողջությունը, քաղց և ծարավ, միայն թե ստանա բարիքը, և ոչ թե թուլանում է հոգում գտնվող արատավոր մտքերից, չի ընկնում ծուլության, անհամբերության և հուսալքության գիրկը, կամ էլ ուշացման պատճառով, չի մատնվում հուլության, առաջնորդվելով այսպիսի խորհրդով. «Երբեք է կստանամ Աստծո շնորհը», դրանով չարի կողմից ներքաշվելով անփութության մեջ: Դրան հակառակ, ինչ չափով Տերն Ինքն է ուշացնում և հապաղում, փորձելով նրա կամքի հավատն ու սերը, այդ չափով էլ նա ավելի եռանդազին, խնամքով, անկոտրում և անխոնջ կերպով պետք է փնտրի Աստծու պարգևը, մեկընդմիջտ հավատալով և համոզվելով, որ անսուտ և ճշմարիտ է Աստված, որ խոստացել է Իր շնորհը տալ նրանց, ովքեր մինչև վերջ այն կխնդրեն հավատով և ամենայն համբերությամբ:

123. Հավատարիմ հոգիները պաշտում են հավատարիմ և ճշմարիտ Աստծուն և ճշմարիտ խոսքով համոզվել են, որ Աստված ճշմար

րիտ է (Հովհ., 3, 33): Իսկ դրան համապատասխան, ըստ վերևում ասված հավատի ըմբռնողության, քննում են իրենք իրենց, ինչքան ի վիճակի են, թե ինչո՞ւմն է իրենց անկատարությունը՝ աշխատանքո՞ւմ արդյոք, թե՞ ճիգերում, ջանադրության մե՞ջ, թե հավատի, կամ էլ սիրո մեջ, կամ էլ մնացյալ առաքինություններում, և քննելով իրենց ամենայն նրբանկատությամբ, ինչքան որ կարող են, ստիպում և պարտադրում են իրենց հաճելի լինել Տիրոջը, մեկընդմիջտ հավատ ընծայելով, որ ճշմարիտ Աստված չի զրկի իրենց հոգևոր պարգևներից, եթե մինչև վերջ ամենայն փութեռանդությամբ լինեն նրա առջև ծառայության մեջ և համբերության մեջ, և որ, լինելով դեռևս մարմնի մեջ, կարժանանան երկնային շնորհի և կգտնեն հավիտենական կյանք:

124. Այսպիսով, իրենց ողջ սերն ուղղում են Աստծուն, հրաժարվելով ամեն ինչից, Նրան՝ Միակից սպասելով ուժգին տենչանքով, քաղցով, ծարավով, մշտապես ակնկալելով շնորհի հանգստությունը և մխիթարությունը, չզոհանալով և չմխիթարվելով այս աշխարհում ոչ մի բանով, հոժարակամ

կապելով իրեն, անդադրում մարտնչելով նյութապաշտ խորհուրդների դեմ, սպասում են միայն Աստծո օգնությունը և Աստծո հովանավորությունը, սպասում են, երբ այդպիսի հոժար, փութաջան և համբերատար հոգիներում Ինքը Տերն արդեն ծածուկ ներկա կլինի, կօգնի նրանց, կհսկի, կպահպանի նրանց մեջ առաքինության ամենայն պտուղը, քանզի կամքի հոժարությունը և ազատակամ սերը, և Նրա բոլոր սուրբ պատվիրանների նկատմամբ եռանդագին փափազը սահմաններ, չափ ու կշիռ ունեն: Եվ այսպիսով, հոգիները, կատարելով իրեց սիրո և պարտքի չափը, արժանանում են Արքայության և հավիտենական կյանքի:

գ) Շնորհի ընդհանուր օրենքն է՝ չվստահել իրեն իսկույն ևեթ, ինչը բացատրում է սուրբ Մակարը՝ Աստվածային Գրվածքներից բազմաթիվ օրինակներ խրատի տեսքով հավելելով և հիշեցնում է, թե դա ինչ է պարտավորեցնում ամեն մի հավատացյալի:

125. Աստվածային շնորհի հոգևոր ներգործությունը հոգում կատարվում է մեծ համբերատարությունով, իմաստությունով և մտքի խորագիտությունով, երբ մարդն էլ իր

հերթին մեծ համբերությունով ճգնում է երկար ժամանակ և տարիներ շարունակ: Եվ շնորհի ներգործությունը նրա մեջ կատարյալ կլինի այն ժամանակ, երբ նրա ազատ կամքը բազմաթիվ անգամներ փորձվելով, Հոգուն հաճելի լինի և ժամանակի ընթացքում ցուցաբերի փորձվածություն և համբերություն: Այդպիսի ակնառու օրինակներ կներկայացնենք Աստվածաշունչ Գրվածքներից:

126. Իմ կողմից ասվածը նման է Հովսեփի հետ պատահածին: Ինչքա՛ն ժամանակ անց և ինչքա՛ն տարիներ անց կատարվեց Աստվածային կամքի վճիռը նրա հետ, իրականացան երազները: Իսկ մինչ այդ ինչքան դժվարությունների, վշտերի և նեղությունների մեջ փորձվեց Հովսեփը: Եվ երբ այդ ամենը կրեց արիաբար, ամեն ինչում երևաց բարեհմուտ և Աստծուն հավատարիմ ծառա, այդժամ արդեն դարձավ Եգիպտոսի թագավոր և կերակրեց իր տոհմին, ու կատարվեցին և՛ մարգարեություններն անտեսանելիի մասին, և՛ Աստծո այն կամքը, որի մասին շատ առաջ մեծ կանխատեսությունով նախապես ասվել էր:

127. Այդպես եղավ նաև Դավիթի հետ: Աստված Սամուել Մարգարեի միջոցով օծեց նրան թագավոր: Եվ երբ նա օծվեց, այդժամ Սավուղից հալածված, պետք է մահից փրկվեր փախուստով: Իսկ ո՞ւր մնաց Աստծո օծումը: Ո՞ւր մնաց խոստման շուտափույթ կատարումը: Քանզի հենց որ օծվեց, սկսեց ենթարկվել դաժան զրկանքների, հեռացավ անապատ, չուներնալով անգամ հանապազօրյա հաց, և փախուստով փրկվեց հեթանոսների երկրում իր դեմ Սավուղի լարած հանցավոր ոճրամտություններից: Եվ Աստված թագավոր օծեց մեկին, որն այդպիսի զրկանքների մեջ էր: Այնուհետև, երբ շատ տարիների ընթացքում փորձվեց և ստուգվեց, կրեց զրկանքներ և դրանք տարավ վեհանձնորեն, վճռականորեն ապավինեց Աստծուն և ինքն իրեն հավաստեց. «ինչ որ արեց Աստված ինձ հետ մարգարեական օժամբ և ինչի մասին ասաց, դա, անկասկած, պետք է կատարվի»: Այդժամ արդեն երկարատև համբերատարություն շնորհիվ կատարվեց, ի վերջո, Աստծո կամքը: Եվ երկար փորձություններից հետո գահակալեց Դավիթը: Եվ ակնհայտ դարձավ այդժամ

Աստծո խոսքը, և Մարգարեի կողմից արված օժումն եղավ հաստատ և ճշմարիտ:

Այդպես եղավ Մովսեսի, Աբրահամի և Նոյի հետ:

128. Այդ օրինակները Գրվածքներից մենք բերեցինք ի ապացույց այն բանի, որ Աստծո շնորհի ներգործությունը բացահայտվում է մարդու մեջ և նա ստանում է Սուրբ Հոգու պարգևը, որին արժանանում է միայն երկարատև մաքառումներից հետո, մեծ համբերության և վեհանձնություն փորձառություններից, փորձություններից և գայթակղություններից հետո հավատարմություն մեջ հաստատված հոգին, երբ ազատ կամքը փորձվում է ամեն տեսակ վշտերով: Երբ ոչ մի բանում չտրտմեցնի Հոգուն, այլ շնորհով ամեն ինչում ներդաշնակ լինի պատվիրաններին, այնժամ այն արժան է դառնում հասնելու ազատության՝ կրքերից, ընդունելու հոգևոր որդեգրության լրումը՝ ծածկաբար ասվող, ինչպես նաև հոգևոր հարստություն և այնպիսի իմաստություն, որն այս աշխարհինը չէ և որին հաղորդ են լինում միայն ճշմարիտ քրիստոնյաները: Դրա համար էլ այդպիսի մարդիկ ամեն ին-

չում տարբերվում են աշխարհի հոգին իրենցում ունեցող բոլոր ողջամիտ, գիտակ և իմաստուն մարդկանցից:

129. Այդ պատճառով էլ պատրաստվենք ողջ հոժարությամբ և ամբողջ պատրաստակամությամբ զնալ դեպի Տերը և դառնալ Քրիստոսի հետևորդը՝ Քրիստոսի կամքը կատարելու համար և Քրիստոսի բոլոր պատվիրանները հիշելու և պահելու համար: Կատարելապես հեռանալով աշխարհի սիրուց, հանձնենք մեզ Միակ Քրիստոսին: Միակ միտքը լինի այն, որ միայն Նրանով զբաղվենք, միայն Նրա մասին խոկանք, Նրան՝ Միակին, փնտրենք: Եթե մարմնի պատճառով չգործադրենք պատվիրանները կատարելու և Աստծուն հնազանդվելու հարկ եղած ջանադիրությունը, ապա թող մեր միտքը գեթ չհեռանա Տիրոջ հանդեպ սիրուց՝ որպեսզի փնտրենք Նրան և ձգտենք դեպի Նա: Իսկ գործելով նման մտքով, ողջամտությամբ, ընթանալով արդարության ճանապարհով և մշտապես ուշադիր լինելով մեր հանդեպ, ժառանգենք Նրա Հոգու խոստումները և շնորհով փրկվենք կրքերի խավարում կործանվելուց, որոնցով բռնված է

Հոգին, և այդ միջոցով արժանի լինենք հավիտենական արքայության և արժանանանք Քրիստոսի հետ երանության մեջ լինելու առհավետ՝ ի փառս Հոր և Որդու և Սուրբ Հոգու հավիտյանս: Ամեն:

դ) Դրա հետևանքով, սկզբնական շրջանում բոլոր նրանց, ովքեր վճռում են ծառայել Տիրոջը, սպասում է մաքառումը՝ վիճակ, երբ մարդը միայն բանական կամքի ուժով իրեն լծում է ամենայն բարի գործի և իրեն հեռու է պահում խղճի կողմից չխրախուսվող ամեն ինչից, չմայած այդ ամենը սրտում աջակցություն չի գտնում: Այսպես ուրեմն, որոշե՞լ ես: Սկսի՞ր քեզ ստիպել կատարելու ամենայն բարի գործ և ընդդիմանալու ամեն կարգի վատ բանի:

130. Ով ուզում է մերձենալ Տիրոջը, արժանանալ հավիտենական կյանքի, դառնալ Քրիստոսի օթևան, լցվել Սուրբ Հոգով, որպեսզի ի վիճակի լինի պտղաբերել Հոգով, մաքուր և անխտիր կատարել Քրիստոսի պատվիրանները, նա պետք է, որպես սկիզբ, ամենից առաջ անդրդվելիորեն հավատա Տիրոջը և իրեն ամբողջովին նվիրի Նրա պատվիրանների հորդորներին, ամեն ինչում հրաժարվի աշխարհից, որպեսզի միտքը կատա-

րելապես զերծ լինի տեսանելի ամենայն բաներից: Եվ նա պետք է անդադար լինի աղոթքների մեջ, հավատով Տիրոջն ապավինելով, մշտապես սպասելով Նրա այցելությանը և օգնությանը, իր մտքի մեջ ամեն ըրպե միայն դա ունենալով որպես նպատակ: Այնուհետև հարկ է, որ իր մեջ ապրող մեղքի պատճառով, ինքն իրեն պարտադրի կատարելու ամենայն բարի գործ, հետևելու Տիրոջ բոլոր պատվիրաններին: Այսպես օրինակ, պետք է իրեն ստիպի խոնարհամիտ լինել ցանկացած մարդու առաջ, իրեն համարի բոլորից նվաստը և վատթարը, մարդկանցից և ոչ մեկից չսպասելով պատիվ, կամ գովաբանություն, կամ փառք, ինչպես գրված է Ավետարանում, այլ մշտապես աչքի առաջ ունենա Միակ Տիրոջը և Նրա պատվիրանները, Նրան՝ Միակին, ցանկանա հաճո լինել սրտի խոնարհությամբ, ինչպես ասում է Տերը՝ սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք (Մատթ., 11, 29):

131. Նմանապես և իրեն սովորեցնի նաև, ինչքան հնարավոր է, լինել ողորմած, բարեսիրտ, գթառատ, առաքինի, ինչպես ասում է

Տերը, եղե՛ք բարի, գթասիրտ, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է (Ղուկ., 6, 36): Ամենից առավել, որպես օրինակ, հիշողության մեջ թող անմոռաց պահի Տիրոջ խոնարհությունը, Նրա կյանքը, հեզությունը և վերաբերմունքը մարդկանց հանդեպ, թող լինի աղոթքներում, մշտապես հավատալով և խնդրելով, որ Տերը գա և բնակվի իր մեջ, գորացնի և ամրացնի իրեն Նրա բոլոր պատվիրանները կատարելու մեջ և որպեսզի ինքը՝ Տերը, դառնա բնակարան նրա հոգու համար: Եվ այսպիսով, ինչ անում է հիմա անհոժար սրտին հարկադրելով, այն ժամանակ կանի հոժարակամ, մշտապես վարժեցնելով իրեն բարու մեջ և մշտապես հիշելով Տիրոջը և անդադրում մեծ սիրով սպասելով Նրան: Այդ ժամանակ Տերը, տեսնելով նրա այդպիսի հոժարությունը և բարի ջանադրությունը, տեսնելով, թե ինչպես է ստիպում իրեն Տիրոջը մտքից չհանել, և ինչպես է, նույնիսկ կամքին հակառակ, իր սիրտը մշտապես դեպի բարին, խոնարհամտությունը, հեզությունը, սերը, առաջնորդում, ինչքան հնարավորություններ ունի իր մեջ, ամբողջ ուժերի լարումով, այդժամ, ասում եմ, Տերը

ղոթքի շնորհը, ապա կորցնում է այն ստանալուց հետո և սայթաքում է մեծամտությունից, կամ էլ չի առաջադիմում և չի աճում իրեն ընծայված շնորհի մեջ, քանի որ իրեն ողջ հոժարությամբ չի նվիրում Տիրոջ պատվիրանների կատարմանը: Քանզի Հոգու համար օթևան և հանգստություն են ծառայում՝ խոնարհամտությունը, սերը, հեզությունը և Տիրոջ մնացյալ պատվիրանները:

135. Այդ պատճառով էլ ով ցանկանում է ճշմարտապես հաճո լինել Աստծուն, ընդունել Նրանից Հոգու երկնային շնորհը, աճել և կատարելագործվել Սուրբ Հոգով, նա պետք է հարկադրի իրեն կատարելու Աստծո բոլոր պատվիրանները և խոնարհեցնի սիրտը անգամ դրա կամքին հակառակ՝ ըստ ասվածի. Քո բոլոր պատվիրաններն ինձ հաջողություն բերին, քանզի ատեցի ճանապարհը չարիքի (Սաղմ., 118, 128):

ե) Իրեն ստիպել բարին գործել՝ դա մաքառումների մի կողմն է: Մյուսը՝ ինքն իրեն ընդդիմանալն է վատի մեջ: Այս վերջինը հոգևոր պատերազմ է: Դրա մասին այսպես է վարդապետում սուրբ Սակարը:

136. Ով ցանկանում է իսկապես հաճելի լինել Աստծուն և արդարև ատել չարության հակառակությունը, նրան հարկ է սխրանքներում և մաքառումներում երկու կարգի պատերազմ մղել, այն է՝ այս աշխարհի տեսանելի գործերում հրաժարվել երկրային զվարճանքներից, աշխարհիկ կապերի հանդեպ սիրուց և մեղանչական սովորություններից, իսկ աներևույթ գործերում մարտնչել այն չար ոգիների դեմ, որոնց մասին Առաքյալն ասաց. որովհետև մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ՝ իշխանությունների հետ, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ (Եփես. 6, 12):

137. Մարդը, զանցառելով պատվիրանը և արտաքսվելով դրախտից, կապված է երկակի կերպով և երկու կարգի կապերով. այս աշխարհում՝ կենցաղային գործերով, աշխարհի, այսինքն՝ մարմնական հաճույքների ու կրքերի, հարստության և փառքի, ունեցվածքի, կնոջ, երեխաների, հարազատների, հայրենիքի, տեղի և հագուստների, մի խոսքով, ողջ տեսանելի հանդեպ ունեցած սիրով, ինչից Աստծո խոսքը պատվիրում է

հրաժարվել հոժարակամ (քանի որ յուրաքանչյուրը ողջ տեսանելիին կապվում է հոժար կամքով), որպեսզի հրաժարվելով և ազատելով իրեն այդ բոլորից՝ կարողանա դառնալ պատվիրանի կատարյալ պահող: Գաղտնաբար չարի ոգիները խճճում են, որոգայթների և ծուղակների մեջ են գցում հոգին և կապկապում են խավարի շղթաներով:

138. Այդ պատճառով էլ, երբ մեկը, լսելով Աստծո խոսքը, դիմում է սխրանքի, խորշում է առօրեական գործերից և աշխարհիկ կապերից, ուրանում է բոլոր մարմնական հաճույքները և հրաժարվում է դրանցից, այդժամ միտքը մշտապես հառելով առ Տերը, նա կարող է ստուգապես իմանալ, որ սրտում կա մի այլ պայքար, մի այլ ծածուկ դիմադրություն, չար ոգիների խորհուրդների դեմ մի այլ պատերազմ և որ իրեն սպասում է մի այլ սխրանք: Եվ այսպիսով, աներկբա հավատով և մեծ համբերությամբ անդադար կանչելով Տիրոջը, ակնկալելով Նրանից աջակցություն, կարելի է դեռևս այստեղ ստանալ ներքին ազատագրություն չար ոգիների կապանքներից, որոգայթներից:

րից, խոչընդոտներից և խավարից, այսինքն՝ գաղտնի խխտերի ներգործությունից:

139. Այդ պատերազմը կարող է դադարել շնորհով և Աստծո զորություններով, քանի որ մարդը ինքնին ի վիճակի չէ ազատվել հակառակությունից, խորհուրդների դեգերումներից, աներևույթ կրքերից և չարի որոգայթներից: Եթե մեկն այս կյանքում կապված է տեսանելի իրերին, խճճում է իրեն բազմաբնույթ երկրային կապերով և հրապուրվում է չարադեպ կրքերով, ապա չի իմանում, որ իր ներսում առկա է մի այլ պայքար, ճակատամարտ, մի այլ պատերազմ: Եվ, օ՛հ, եթե մարդը, երբ ուժերի լարումով իրեն կորզում և ազատում է այդ տեսանելի երկրային կապերից և նյութական հոգսերից ու մարմնական հաճույքներից և սկսում է մշտապես կապվել Տիրոջը, իրեն հեռացնելով այս աշխարհից, գոնե դրանից հետո ի վիճակի լինի ճանաչելու իր ներսում տիրող կրքերի պայքարը, ներքին պատերազմը և չար խորհուրդները: Իսկ եթե, ինչպես ասացինք նախապես, ուժերի լարումով չի ուրանում աշխարհը, ամբողջ սրտով չի հրաժարվում երկրային ցանկություններից

և չի ցանկանում ամբողջովին կապվել Տիրոջը, նա չի գիտակցի աներևույթ չար ոգիների և չարաղետ կրքերի խաբկանքը, այլ կմնա ինքն իրեն օտար, քանի որ նրան անհայտ են իր խոցերը, և ունենալով իր մեջ թաքուն կրքեր, չի ճանաչում դրանք, այլ տակավին հոժարակամ կապվում է երևույթականին և աշխարհիկ հոգսերին:

140. Իսկ ով իրոք հրաժարվել է աշխարհից, ձգնում է թոթափել երկրային լուծը, իրեն ազատագրել է ունայն ցանկություններից, մարմնական հաճույքներից, փառքից, իշխանատենչությունից և մարդկային մեծարանքներից և ամբողջ սրտով հեռանում է այդ ամենից, երբ Տերն այդ ակնհայտ սխրանքում ծածկաբար օգնում է նրան, աշխարհից հրաժարվելու՝ նրա չափով, և երբ ամբողջովին, այսինքն՝ մարմնով և հոգով, հաստատվել և մշտապես Տիրոջ ծառայության մեջ է, իր մեջ գտնում է հակառակություն, ծածուկ ախտեր, աներևույթ կապանքներ, աներևույթ պատերազմ, ծածուկ մաքառումներ և ծածուկ սխրանք: Եվ այդ կերպով խնդրելով Տիրոջից և ստանալով ի վերուստ հոգևոր սպառազինություն, ինչպիսիք

թվարկել է երանելի Առաքյալը՝ արդարության գրահ, փրկության սաղավարտ, հավատի վահան և Հոգու սուսեր (Եփես. 6, 14-17) և սպառազինվելով դրանցով, կարող է դեմ կանգնել բանսարկուի գաղտնի դավերին՝ նրա չար հնարքներով հանդերձ: Այդ զենքերը ձեռք բերելով աղոթքով, համբերությամբ, աղերսներով, պահքով, առավել ևս՝ հավատով, ի վիճակի կլինի մարտնչել պետությունների, իշխանությունների և աշխարհակալների հետ, և այդ կերպով հակառակորդ ուժերին հաղթելով Հոգու ներգործությամբ և բոլոր առաքինություններում իր սեփական փութաջանությամբ, արժանի է դառնում հավիտենական կյանքի ի փառս Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Նրան փա՛ռք և իշխանություն հավիտյանս: Ամեն:

141. Ոմանք ասում են, որ Տերը պահանջում է մարդկանցից միայն ակներև պտուղներ, իսկ անտեսանելին կատարում է Աստված Ինքը: Բայց իրականում այդպես չի լինում: Հակառակ դրա, ով ինչքան պաշտպանում է իրեն արտաքին մարդով, այնքան պետք է պայքարի և պատերազմ մղի խորհուրդների դեմ: Քանի որ Տերը քեզանից

պահանջում է, որ ինքդ քեզ վրա զայրանաս, կռիվ տանես քո մտքի հետ, չհամակերպվես արատավոր խորհուրդների հետ և հաճույք չզգաս դրանցից:

142. Հոգին պետք է ընդդիմանա, հակամարտի և դիմադրավի: Քո հոժարությունը, պայքարելով, լինելով ջանքերի և վշտի մեջ, սկսում է ի վերջո հաղթանակ տանել. այն ընկնում է և բարձրանում, մեղքը կրկին տապալում է նրան, տասը և քսան մաքառումներում հաղթում է և տապալում է հոգին: Բայց հոգին էլ ժամանակի ընթացքում ինչ որ մի բանում հաղթում է մեղքին: Եվ կրկին, եթե հոգին ամուր է կանգնած և ոչ մի բանում չի թուլանում, ապա սկսում է առավելութուն ստանալ, վճռել գործը և հաղթանակներ տանել մեղքի նկատմամբ: Այդպես են մարդիկ հաղթահարում մեղքը և հաղթում դրան:

143. Ձին, քանի դեռ վայրի կենդանիների հետ արածում է անտառներում, անհնազանդ է լինում մարդկանց: Իսկ երբ նրան բռնում են, այդժամ հնազանդեցնելու համար, ծանր սանձ են հագցնում նրան, մինչև չսովորի կարգին և ուղիղ քայլել: Այնուհետև

տե փորձված հեծյալը վարժեցնում է նրան, որպեսզի պիտանի դարձնի մարտեր մղելու համար: Այդ ժամանակ նրա վրա ռազմական հանդերձանք են դնում, նկատի ունեն լանջապանակ և դիմապանակ, իսկ նախկին սանձը կախ են տալիս և ճոճում են նրա աչքերի առջև, որպեսզի նա ընտելանա և չվախենա: Եվ հեծյալի կողմից այսպես վարժեցրածը, եթե չընտելանա, չի կարող պատերազմի դաշտում լինել, իսկ հենց որ սովորում է և ընտելանում է պատերազմին, հենց որ զգում և լսում է մարտի ձայն, ինքն է պատրաստակամորեն նետվում թշնամու վրա, դրա համար էլ իր վրնջյունով միայն ահ ու սարսափ է պատճառում թշնամիներին:

144. Հոգին էլ դրա նման, վայրենանալով և անհնազանդ դառնալով պատվիրանազանցության ժամանակից ի վեր, աշխարհի անապատում մերձենում է զազանների՝ չար ոգիների հետ, շարունակելով ծառայել մեղքին: Իսկ երբ լսում է Աստծո խոսքը և հավատ է ընծայում, այդժամ Հոգուց սանձված, մի կողմ է դնում վայրի բնավորությունը և մարմնական իմաստությունները՝ կառա-

վարվելով Քրիստոս հեծյալի կողմից: Հետո հայտնվում է վշտի մեջ, խոնարհության, նեղության մեջ, ինչն անհրաժեշտ է նրան փորձելու համար, որպեսզի Հոգին նրան աստիճանաբար հնազանդեցնի, նրա մեջ մեղքի աստիճանական նվազեցմամբ և ոչնչացմամբ: Եվ այդ կերպով հոգին, զգեստավորվելով արդարության զրահով, փրկության սաղավարտով ու հավատի վահանով և ստանալով հոգևոր սուրը, սովորում է կռիվ մղել իր թշնամիների հետ և զինավորված Տիրոջ Հոգով, պայքարում է չարի ոգիների դեմ և մարում է սատանայի մխացող նետերը: Իսկ առանց հոգևոր զենքի չի մտնում բանակատեղի: Հենց որ ունենում է Տիրոջ զենքը, ահեղ կռվի ձայնը հազիվ լսած, ելնում է սուրալով ու փնչացնելով, ինչպես ասված է Հոբի գրքում (Հոբ. 39, 25), քանի որ հենց նրա աղոթքի աղաղակից ընկնում են թշնամիները: Իսկ այդօրինակ սխրանք կատարելով և Հոգու օգնությամբ պատերազմում հաղթանակ տանելով, մեծ համարձակությամբ նա կընդունի հաղթական դափնեպսակները և կհանգստանա Երկնային Թագավորի հետ:

145. Հենց որ հեռանաս աշխարհից ու

սկսես փնտրել Աստծուն և մտածել Նրա մասին, արդեն պետք է պայքարես քո բնության դեմ, նախկին բարքերի և այն սովորությունների դեմ, որոնք ներմուծված են քո մեջ: Իսկ այդ սովորությունների դեմ պայքարի ընթացքում կգտնես քեզ հակառակվող և քո մտքի հետ պայքարող խորհուրդներ: Եվ խորհուրդներն այդ կպատրեն քեզ և կսկսեն խճճել քեզ երևութականի ոլորտում, որից դու փախել էիր: Այդժամ պայքար և պատերազմ կսկսես՝ խորհուրդների դեմ խորհուրդներ հանելով, մտքի դեմ՝ միտք, շնչի դեմ՝ շունչ, հոգու դեմ՝ հոգի:

146. Քանզի բացվում է սրտում եզոզ խավարի մի աներևույթ և նրբին զորություն: Եվ Տերը մերձ է լինում քո հոգուն և մարմնին, և նայելով քո պայքարին, զետեղում է քո մեջ սրբազան, երկնային խորհուրդներ և գաղտնաբար սկսում է հանգստացնել քեզ, սակայն միառժամանակ դեռ թողնում է ուսուցման և վշտերի մեջ, իսկ շնորհը հոգում է քո մասին: Եվ երբ հանգստի մեջ լինես, ճանաչել կտա Իրեն, և ցույց կտա, որ քո օգտի համար թույլ տվեց քեզ լինել մաքառումների մեջ: Ինչպես մեծահարուստ մար-

դու որդին, որն ունի հոգածու, երբ դաստիարակը պատժում է նրան՝ ծանր են թվում և՛ ուսուցումը, և՛ վերքերը, և՛ հարվածները և այդ այնքան ժամանակ, քանի դեռ չի դարձել հասուն այր, իսկ հետո էլ սկսում է արդեն շնորհակալ լինել հոգածուին: Այդպես և շնորհը խորագիտությամբ ուսուցանում է, քանի դեռ կատարյալ այր չես դարձել:

զ) Քանի որ այդպիսի աշխատանք է սպասվում հանուն Տիրոջ գործելու վճիռ ընդունածին, ապա բացի նրանից, որ իրեն չխնայելով, նա պատրաստակամ է ամեն մի մաքառման, նրան անհրաժեշտ է ունենալ նաև խոհեմություն, զգոնություն և շրջահայացություն:

147. Ով ցանկանում է ճշտապահությամբ քրիստոնեական կյանք վարել կատարելության մեջ, առաջին հերթին պարտավոր է ամբողջ ուժով հոգալ հոգու իմաստի և բանականության մասին, որպեսզի, ձեռք բերելով լավն ու վատը ճշգրտորեն տարբերելու ընդունակություն և ամեն պարագայում հասկանալով, որ մաքուր բնության մեջ ներս է մտել խորթ, օտար բան, ապրենք ճիշտ և անսայթաք, և որպեսզի, բանականությունը որ-

պես աչք գործի դնելով, ի վիճակի լինենք չընկերանալ և համաձայնություն մեջ չլինել արատի ներշնչումների հետ, այդպես արժանալով աստվածային պարգևի, Տիրոջն արժանի դառնալու:

148. Մարմնի ուղեցույցն աչքն է, և այն տեսնում է ու ողջ մարմինն առաջնորդում հարկ եղած ճանապարհով: Պատկերացրո՛ւ, որ ինչ-որ մեկն անցնում է անտառապատ, փշածածկ և տղմոտ տեղանքով, որտեղ և՛ կրակի բոցերն են փակում ճանապարհը, և՛ սրեր են խրված, կան վիհեր և հորձանուտներ: Եթե ճամփորդը ճարպիկ է, զգուշավոր և անվախ, ապա աչքերն ունենալով որպես ուղեցույց, մեծագույն ուշադրությամբ անցնում է այդ դժվարին տեղանքով, և՛ ձեռքերով, և՛ ոտքերով ամեն կերպ պահում է իր պատմուճանը, որպեսզի չպատառոտվի և չծվատվի ծառերի և փշերի մեջ, չաղտոտվի ցեխերի մեջ և ծվեն-ծվեն չլինի սրերից: Եվ աչքը, ողջ մարմնի համար լույս լինելով, ցույց է տալիս նրան ճանապարհը, որպեսզի այն չխորտակվի վիհերում կամ էլ խեղդվի հորձանքներում, կամ էլ չենթարկվի փորձանքի ինչ-որ դժվարին տեղանքում: Այդ-

պես ճարպիկ և ուշիմ ճամփորդը, ամենայն զգուշավորությամբ վեր քաշելով իր պատմութեանը, գնալով ճիշտ և ճիշտ աչքի ուղենշմամբ, և՛ իրեն է անվնաս պահում, և՛ հագի պատմութեանն է պահպանում այրվելուց և պատառոտվելուց: Իսկ եթե նման տեղանքով անցնում է անփույթ, ծուլ, անհոգ, դանդաղաշարժ, անգործունյա մի մարդ, ապա նրա պատմութեանը, այս ու այն կողմ փռվելով, քանի որ ճամփորդը ամենևին չունի իր հագուստը վեր քաշելու վճռականություն, կպատառոտվի, քսվելով մացառներին և փշերին, կամ կայրվի կրակից, կամ կտորկտոր կլինի ցցված սրերից, կամ էլ կկեղտոտվի տիղմի մեջ, մի խոսքով նրա գեղեցիկ և նոր պատմութեանը կարճ ժամանակում կփչանա անզգուշությունից, անգործությունից և ծուլությունից: Իսկ եթե ճամփորդը լիարժեք և հարկ եղած ուղադրությունը չդարձնի աչքի ցուցումներին, ապա ինքն էլ կընկնի վիհը կամ կխեղդվի հորձանուտներում:

149. Նմանապես և հոգին, որպես շքեղ պատմութեան կրելով մարմնի զգեստը և ունենալով խոհականություն, որն ուղղութ-

յուն է տալիս ամբողջ հոգուն մարմնով հանդերձ, երբ անցնում է այս կյանքի անտառապատ և փշածածկ ուղիներով, տիղմերի, կրակների միջով, վիհերով, այսինքն՝ տարփանքների ու վայելքների և այս աշխարհի մնացած անմտությունների միջով, պետք է զգաստորեն, արիությամբ, ջանադրությամբ և զգոնությամբ ամենուր պահի և պահպանի իրեն: Իսկ որպեսզի մարմնի պատմութեանը ինչ-որ տեղ այս աշխարհի անտառապատ և փշածածկ ուղիներում չպատառոտվի հոգսերից, ծայրահեղ զբաղվածությունից և երկրային զվարճանքներից և չայրվի տուփանքների կրակից, ապա դրանով զգեստավորված հոգին հայացքը շրջում է, որպեսզի չտեսնի չարությունը, խցում է ականջները, որպեսզի բամբասանքներ չլսի, սանձում է լեզուն՝ դատարկաբանության, ձեռքերն ու ոտքերն՝ անվայել զբաղմունքների չտրվելու համար, քանի որ հոգուն տրված է կամք՝ զսպելու մարմնի անդամները և զերծ պահելու անպատշաճ տեսարաններից, պիղծ խոսքեր լսելուց, աշխարհիկ և խարդախ զբաղմունքներից:

150. Տերը հենց որ տեսնում է, որ ինչ-որ մեկը արիաբար դարձի է գալիս առօրյա վա-

յելքներից, նյութական զվարճություններից և հոգսերից, երկրային կապերից և ունայն մտքերի հաժուսներից, տալիս է այդպիսիին իր շնորհի օգնությունը և գայթումներից զերծ է պահում այդ հոգին, որը հիանալի կերպով կատարում է իր ընթացքը այս չար աշխարհում: Եվ այսպիսով, հոգին Աստուծոց և Հրեշտակներից արժանանում է երկնային գովասանքի այն բանի համար, որ հիանալի պահպանել է և՛ իրեն, և՛ իր մարմնի պատմուճանը, ինչքան որ հնարավոր է եղել՝ երես թեքելով ամենայն աշխարհիկ ցանկություններից, և ամենախնամ Աստծով հիանալի կատարել է իր ընթացքը այս աշխարհի մրցասպարեզում:

151. Իսկ եթե մեկը անգործություն և անհոգություն պատճառով անուշադիր է ընթանում այս կյանքում և հոժար կամքով դարձի չի գալիս ամեն տեսակ աշխարհիկ ցանկություններից և ամբողջ սրտով չի փնտրում Միակ Տիրոջը, ապա նրա մարմնի պատմուճանը պատառոտվում է այս աշխարհի փշերից և մացառներից, այրվում է ցանկասիրության կրակից, ապականվում է հաճույքների տիղմից: Այդ պատճառով էլ

հոգին դատաստանի օրը լինում է անհամարձակ, քանի որ ի վիճակի չի եղել իր հանդերձը պահպանել անբիծ, այլ ապականել է այս կյանքի գայթակղությունների մեջ: Դրա համար էլ այն դուրս է չարտվում Արքայությունից: Քանզի ի՞նչ կանի Աստված նրա հետ, ով հոժար կամքով հանձնում է իրեն աշխարհին, հրապուրվում է նրա վայելքներով կամ էլ հաժուս է՝ մոլորվելով նյութականի մեջ: Տերը իր օգնությունը տալիս է նրան, ով երես է թեքում մարմնական հաճույքներից և նախկին սովորություններից, իր խոհերը միշտ ջանադրությամբ ուղղում է դեպի Տերը, հրաժարվում է ինքն իրենից, փնտրում է Միակ Տիրոջը: Նրան է Տերը պահպանում, ով մշտապես այս աշխարհի թավուտներում զգուշանում է որոգայթներից և թակարդներից, քանզի ասված է՝ ահոյ և դողոյ դուք ձեր փրկության համար աշխատեցե՛ք (Փիլիպ. 2, 12), ով ամենայն ուշադրությամբ շրջանցում է այս աշխարհի որոգայթները, թակարդները և հեշտանքները, փնտրում է Տիրոջ օգնությունը և հույս է տածում Տիրոջ ողորմածությունից փրկվելու շնորհով:

է) Մշակն իր վաստակուն պետք է ոգեշնչվի այն հույսից և անսասան հավատից, որ Տերը կտեսնի, թե որքան ջանադիր է նրա վաստակը, կհամոզվի նրա հոգու հավատարմության մեջ և կտա նրան Սուրբ Յոզիմ և Ինքը կպսակվի նրա հետ: Այս պարագային շատ հաճախ է անդրադառնում սուրբ Մակարը և ճգնության մասին գրեթե բոլոր խրատները միաբերում է այդ հույսը ներշնչելուն:

152. Ամեն տեսանելի գործ աշխարհում արվում է վաստակներից օգուտ ստանալու հույսով: Եվ եթե մեկը լիովին վստահ չէ, որ կվայելի իր վաստակները, ապա անօգուտ են նրա ջանքերը: Պտուղ քաղելու հույսով ցանում է նաև երկրագործը, և բերքի ակնկալություններ է համբերում դժվարություններին: Ասված է՝ ով վարուցանք է անում, պետք է հույսով վարուցանք անի (Ա Կորնթ., 9, 10): Եվ ով կին է առնում, առնում է ժառանգներ ունենալու հույսով: Եվ վաճառականը հանուն շահի է ծով գուրս գալիս, մատնելով իրեն վերահաս մահվան: Այդպես է և Երկնքի Արքայության մեջ. մարդը, հուսալով, որ կլուսավորվեն սրտի աչքերը, հանձնառու է լինում զերծ մնալու առօրյա գործերից, ժամանակն անցկացնելու աղոթքների և աղերսների մեջ, սպասելով Տիրոջը, թե երբ կգա և Ի-

րեն կհայտնի ու կմաքրի նրան նրա մեջ արող մեղքից:

153. Քրիստոնյան պետք է ունենա ապավինություն, ուրախություն, գալիք Արքայության սպասում ու փրկություն և ասի. «Եթե ես փրկված չեմ այսօր, ապա կփրկվեմ առավոտյան»: Իր համար խաղողի այգի տնկողը նախքան աշխատանքի անցնելը, ուրախություն և հույս ունի իր մեջ, և երբ գինին դեռ չեղած, մտքում հստակ պատկերացնում է հնձանը, հաշվում է եկամուտները, և այդպիսի մտքերի մեջ ձեռնամուխ է լինում գործին: Հույսը և սպասումները ստիպում են նրան աշխատել եռանդով, և նա մեծ ծախսեր է անում տան մեջ: Նման կերպով երկրագործը և շինարարը իրենց սեփականությունից նախապես ծախս են կատարում հետագա շահույթ ստանալու հույսով: Այդպես և այստեղ. եթե մարդը աչքի առջև բերկրանք և հույս չունենա, որ փրկություն և կյանք է ստանալու, ապա չի կարող դիմանալ վշտերին և իր վրա վերցնել լուծը և նեղ ուղիով գնալը: Իսկ նրան ուղեկցող հույսն ու ուրախությունն են անում, որ նա աշխատում է, դիմանում է

վշտերին, իր վրա է վերցնում լուծը, և գնում է նեղ ճանապարհով:

154. Հավատացյալը պետք է Աստուծոն խնդրի, որ իր հոժարությունը փոխվի սրտի նորոգությամբ: Նրա՛ն պետք է ուղղես միտքը և խորհուրդները և բացի Նրան տեսնելու ակնկալիքից՝ մտքումդ ոչ մի այլ բան չունենաս: Այդ պատճառով էլ թող հոգին, որպես չարաճճի երեխաների, հավաքի և սանձի մեղքով ցրված խորհուրդները, թող տանի դրանց իր մարմնի տունը՝ անդադար պահքի մեջ և սիրով սպասելով Տիրոջը, թե երբ կգա Նա և իրոք կժողովի նրան ի մի: Քանի որ ապագան անհայտ է, ապա էլ ավելի թող հուսա, սքանչելիաբար իր հույսը դնելով նավավարի վրա: Ասված է՝ մի՛ երկնչիր, Ես կընթանամ քո առջևից, կհարթեցնեմ լեռները, կխորտակեմ պղնձե դռները և կփշրեմ երկաթե միզերը (Եսայի, 45, 2): Եվ դարձյալ ասված է՝ Զգո՛ւյ՛ջ եղիր, չլինի թե ստքունդ ծածուկ չար բան լինի (ԲՕր. 15, 9), և քո սրտում մի ասա՝ բազմամարդ ու ճգո՞ր ազգ էի՞ն (ԲՕր. 2, 21):

155. Եթե չձուլանանք և մեզ թույլ չտանք, որ անպարկեշտ, արատավոր խորհուրդներն արմատավորվեն մեր մեջ, այլ կամքով ներգ-

րավենք մեր միտքը, խորհուրդներն ուղղենք դեպի Տերը, ապա, անկասկած, Տերն էլ իր կամքով կգա մեզ մոտ և իսկապես կհավաքի մեզ իր մոտ, քանի որ ողջ բարեպաշտությունը և ծառայությունը կախված են խորհուրդներից: Այդ պատճառով էլ ձգտիր հաճո լինել Տիրոջը, մշտապես սպասելով Նրան ներքուստ, փնտրելով Նրան խոհերում՝ դրդելով և ստիպելով, որպեսզի քո կամքը և քո հոժարությունը մշտապես ուղղվեն առ Նա: Քանզի ինչ չափով դու քո միտքը միաբերում և ամփոփում ես Նրան փնտրելու, այդչափ և դեռ ավելի Նա է մղվում իր սեփական բարեխնամությամբ և իր բարությամբ գալ քեզ մոտ և հանգստացնել քեզ: Կանգնած է Նա և քննում է քո միտքը, խորհուրդները և խոհերի ընթացքը, նայում է, թե ինչպես ես փնտրում Նրան, արդյո՞ք քո ամբողջ հոգով, թե՞ միգուցե ծուլորեն կամ անփութորեն:

156. Եվ երբ տեսնում է քո ջերմեռանդությունը իրեն փնտրելիս, այդժամ կհայտնվի և կբացվի քեզ, կտա իր օգնությունը և քո համար հաղթանակ կպատրաստի՝ ազատելով քեզ քո թշնամիներից: Այդ

պատճառով էլ բարձրացնենք այս մարմինը, պատրաստենք զոհասեղանը, դնենք դրա վրա մեր ամեն կարգի մտածումները և աղերսենք Տիրոջը, որպեսզի ուղարկի երկնքից անտեսանելի և ահարկու կրակը, թող այն լափի և՛ զոհասեղանը, և՛ նրա վրա եղած ամեն ինչ: Եվ կընկնեն Բահադի բոլոր մարգարեները, այսինքն՝ Հակառակ ուժերը, և այդժամ կտեսնենք, թե ինչպես է երկնային անձրևը՝ մարդկային ոտնաձայնի նման (Գ թագ. 18, 44), իջնում հոգու վրա, ինչի պատճառով կկատարվի մեր վրա Աստծո խոստումը, ինչպես ասել է Մարգարեն. Այդ օրը պիտի կանգնեցնեն Դավթի խորանը, պիտի վերականգնեն նրա ավերակները (Ամոս 9, 11):

ը) Ճգնական սխրանքների մանրամասներին սուրբ Մակարը չի անդրադառնում, քանի որ դրանք եղել են բոլոր նրանց գործնական կյանքում, ում ուղղում էր իր գրույցները: Անհրաժեշտ դեպքում լոկ թվարկում է դրանք, այն է՝ պահք, արթնություն, մենակեցություն, մարմնական աշխատանքներ, հնազանդություն, փոխօգնություն, համբերություն: Միայն աղոթքի մասին է խոսում հանգամանորեն, քանզի այն բոլոր առաքինությունների և սխրանքների խմբավարն է հատկապես նրանով, որ Սուրբ Հոգու ներշնչման ժառանգորդն է:

157. Արտաքին ճգնակեցության մասին, և թե ո՞ր կենսակերպն է բարձրագույն և առաջնային, իմացե՛ք, սիրելիներս, հետևյալը. բոլոր առաքինությունները շողկապված են իրար, ինչպես հոգևոր շղթայի օղակներն են մեկը մյուսից կախված՝ աղոթքը՝ սիրուց, սերը՝ ուրախությունից, ուրախությունը՝ հեզուլթյունից, հեզուլթյունը՝ խոնարհությունից, խոնարհությունը՝ ծառայությունից, ծառայությունը՝ հույսից, հույսը՝ հավատից, հավատը՝ հնազանդությունից, հնազանդությունը՝ պարզությունից: Այդպես և հակառակ կողմի վատթար գործերն են կախված մեկը մյուսից. ատելությունը՝ դյուրագրգռությունից, դյուրագրգռությունը՝ հպարտությունից, հպարտությունը՝ սնափառությունից, սնափառությունը՝ անհավատությունից, անհավատությունը՝ կարծրասրտությունից, կարծրասրտությունը՝ անփութությունից, անփութությունը՝ հուլուլթյունից, հուլուլթյունը՝ ձանձրուլթից, ձանձրուլթը՝ անհամբերությունից, անհամբերությունը՝ հեշտասիրությունից: Արատի մնացյալ մասերը նույնպես իրար հետ կապված են, ինչպես բարի կողմում իրար հետ

չաղկապված և մեկը մյուսից կախված են առաքինությունները:

158. Իսկ ամեն տեսակ բարի ջանադրության մեջ գլխավորը և վաստակներից առաջնայինը ջերմեռանդ աղոթքի մեջ հարատևելն է: Դրանով, դիմելով Աստծուն, օրեցօր ձեռք կբերենք և մնացյալ առաքինությունները: Այդտեղից է արժանացածների մեջ տեղի ունենում հաղորդությունը Աստվածային սրբության հետ հոգևոր գործունեության մեջ, և նվիրագործված մտքի միությունը՝ Տիրոջ անճառելի սիրո մեջ: Քանզի ով ամեն օր ստիպում է իրեն աղոթքի մեջ լինել, նա առ Աստված ունեցած հոգևոր սիրով բոցավառվում է աստվածպաշտությամբ և հրաբորբոք ցանկությամբ և ընդունում է հոգևոր կատարելության սրբագործող շնորհը:

159. Մենք պետք է աղոթենք ոչ թե մարմնական հակումներով, ոչ թե աղաղակելու, աղերսելու, լուելու, ծունկի գալու սովորութիով, այլ մտքի զգաստությամբ, սթափությամբ անսալով, սպասենք, թե Աստված երբ կգա և կայցելի հոգուն նրա բոլոր ոգորումներում, շավիղներում և բոլոր ապրումներում:

րում: Այսպիսով, երբեմն պետք է լուել, երբեմն էլ պետք է աղերսել և ողբալով աղոթել, միայն թե միտքը հաստատվի Աստծո մեջ: Քանզի, ինչպես մարմինը, երբ ինչ-որ գործի վրա ջանադրաբար աշխատում է, ամբողջովին զբաղված է լինում, և նրա բոլոր անդամները մեկը մյուսին օգնում են, այդպես և հոգին թող ամբողջովին նվիրվի աղոթքի և Տիրոջ սիրուն, չցնորվելով և չխճճվելով մտածումների մեջ, այլ բոլոր սպասումները կապի Քրիստոսի հետ: Եվ նման դեպքերում Տերն Ինքը կլուսավորի նրան, ուսուցանելով ճշմարտապես աղերսանքի, տալով մաքուր, հոգևոր և Աստծուն արժանի աղոթք և երկրպագություն հոգով ու ճշմարտությամբ:

160. Տիրոջը մերձեցողները պետք է աղոթեն լռության մեջ, խաղաղության և մեծագույն հանգստության մեջ և ունկնդրեն Տիրոջը ոչ թե անպարկեշտ և խառնաշփոթ աղաղակներով, այլ՝ սրտի անձկությամբ և խորհուրդների զգաստությամբ: Աստծո ծառան պետք է լինի ոչ թե խառնաշփոթի, այլ ամենայն հեզության և իմաստության մեջ, ինչպես ասաց Մարգարեն. Ես ո՞ւմ եմ Ապելու,

եթե ոչ հեղափոխում ու խոստովանություն և նրանց, ովքեր դողում են Իմ խոսքից (Եսայի, 66, 2): Նմանապես տեսնում ենք նաև, որ Մովսեսի և Եղիայի ժամանակ, երբ Աստված երևաց նրանց, Տիրոջ մեծության առաջ ծառայում էին բազում փողեր և զորություններ, սակայն Տիրոջ գալուստը տարբերվեց և նշանավորվեց նրանով, ինչը թվարկված է վերևում, այսինքն՝ խաղաղությամբ, լուսությամբ և հանգստությամբ: Քանզի ասված է. կրակից ճետո մեղմ օդի ձայն կլիմի (Գ Թագ. 19, 12): Իսկ զբանով ցույց է տրվում, որ Տիրոջ հանգիստը խաղաղության և բարեկարգության մեջ է:

161. Աղոթքի ճշմարիտ հիմքը այսպիսին է՝ խորհուրդների հանդեպ լինել ուշադիր և աղոթել լիակատար լուսության և խաղաղության մեջ: Աղոթող մարդուն անհրաժեշտ է իր բոլոր ջանքերը դարձնել խորհուրդներին և արմատախիլ անել այն ամենը, ինչը սնունդ է չար խորհուրդների համար, մտքով սևեղվել դեպի Աստված և խորհուրդների ցանկությունները չկատարել, այլ ցրված խորհուրդներն ամեն կողմից ի մի հավաքել, տարբերելով բնական խորհուրդները կեղծե-

րից: Մեղքի տակ գտնվող հոգին կարծես նմանվում է լեռնային մեծ անտառի, կամ էլ գետեզրում եղող եղեգի, կամ ինչ-որ փշերի և մացառների թավուտի: Այդ պատճառով էլ այդ տեղանքով անցնել մտադրվողները պետք է ձեռքերն առաջ պարզեն և ճիգով ու ջանքով միմյանցից հեռացնեն իրենց առջևի ճյուղերը: Այդպես և հոգուն շրջապատում է հակառակ ուժի կողմից ներշնչված խորհուրդներին մի ամբողջ անտառ, ինչի պատճառով պահանջվում է մեծ ջանադրություն և մտքի զգաստություն, որպեսզի մարդը տարբերի հակառակ ուժից ներշնչված օտար խորհուրդները: Խորհուրդների նկատմամբ զգաստություն ունեցողները ողջ սխրանքը աղոթքներում կատարում են ներքնապես: Այդպիսիներն իրենց իմաստությամբ և խոհեմությամբ կարող են առաջադիմել, վանել ըմբոստացող խորհուրդները և ընթանալ Տիրոջ կամքի մեջ:

թ) Սուրբ Մակարը մշակին պետք եղող ցախազուշուքյուններից հատկապես առանձնացնում է այն, որ պետք չէ կանգ առնել լոկ արտաքին ճշտապահության վրա: Մաքառումն արտաքուստ խնդիր ունի վարժվել բոլոր սխրանքների և բոլոր

առաքինությունների մեջ, բայց ոչ թե դրանով բավարարվելու համար, այլ դա ուղղելու ներքին կյանքի զարգացմանը և Հոգու ներգործությունը վաստակելուն: Բայց ոմանք այդ սահմանի վրա էլ հենց կանգ են առնում, հասնում են ճշտակատար վարքի, ու այդքանը. ուրիշ ոչինչ, իսկ սրտի վրա ուշադրություն չեն դարձնում և Հոգու շնորհը չեն փնտրում: Դրա համար էլ ջանք են թափում, բայց չեն պտղաբերում: Սուրբ Մակարը հորդորում է ամենից առավել զգուշանալ դրանից:

162. Շատերը, խստորեն հետևելով արտաքինին, վարժվելով գիտությունների մեջ և հոգ տանելով կանոնավոր կյանքի մասին, մտածում են, որ այդպիսի մարդը կատարյալ է, խորամուկ չլինելով սրտի մեջ, չնկատելով այնտեղ արատներ, որոնք տիրում են հոգուն: Այնինչ անդամների մեջ արմատավորված է արատը՝ մտածումներին և ներքին արատավոր մտքերին համապատասխան, և տանը թաքնված է ավազակ, այսինքն՝ հակառակ ուժը, և այդ պատճառով էլ հակամարտող և միևնույն ժամանակ իմանալի: Եվ եթե մեկը չի պայքարում մեղքի դեմ, ապա ներքին արատը, աստիճանաբար ծավալվելով, բազմապատկվելով, մարդուն ներքաշում է բացահայտ մեղքերի մեջ, հասցնում է

մինչև դրանք գործով ի կատար ածելուն, քանի որ չարը աղբյուրի ակունքի պես մշտապես շիթեր է հեղում: Այդ պատճառով ձգտի՛ր զսպել արատների հոսքը, հազարավոր չարիքների շիթերի մեջ չընկնելու համար:

163. Աշխարհը տառապում է արատի ախտով և չգիտի դա: Կա անմաքուր կրակ, որը բոցավառում է սիրտը, տարածվում է բոլոր անդամներով և մարդկանց դրդում է անառակության ու հազարավոր չար գործերի: Եվ նրանք, ովքեր բորբոքվում են և հաճույք զգում, սրտում ներքուստ շնանում են, իսկ երբ չարը այդ կերպ իր համար սնունդ է գտնում, ընկնում են նաև բացահայտ շնության մեջ: Նույնը հասկացի՛ր նաև արծաթասիրուլթյան, սնափառության, մեծամտության, նախանձի, բարկության մասին: Ինչպես եթե մեկը կանչված է ճաշկերույթի և նրան առաջարկում են բազում կերակուրներ, այդպես և մեղքը ներշնչում է ճաշակել ամեն ինչ, և այդժամ ցանկասեր հոգին ծանրաբեռնվում է:

164. Կարո՞ղ է արդյոք որևէ մեկն ասել. «Ես պահք եմ պահում, վարում եմ աս-

տանդական կյանք, բաշխում եմ իմ ունեցվածքը, հետևապես արդեն ես սուրբ եմ»։ Քանզի վատից խուսափելը դեռ ինքնին կատարելությունն է։ Միթե խորամուկս ես եղել նվաստացված մտքի մեջ և սպանել օձին, որը թաքնված է հենց մտքի խորքերում, խորհուրդներում, բույն է դրել և մեռցնում է քեզ այսպես կոչված հոգու գաղտնարաններում և շտեմարաններում, քանի որ սիրտը անդունդ է։ Այսպես, ուրեմն, մի՞թե դու մեռցրել ես և քեզանից դուրս նետել քո մեջ եղած ամենայն անմաքրությունը։ Ե՛վ բոլոր իմաստասերների, և՛ օրենքի, և՛ Առաքյալների, և՛ Քրիստոսի գալուստի նպատակը մաքրելն է։ Ցանկացած մարդ, լինի հրեա, թե հելլեն, սիրում է մաքրությունը, բայց չի կարող մաքուր դառնալ։ Հետևաբար հարկ է փնտրել և պարզել, թե ինչպես և ինչ միջոցներով կարելի է հասնել սրտի մաքրության։ Մեզ համար այլ կերպ հնարավոր չէ դա, քան՝ Խաչյալի օգնությամբ։ Նա է ճանապարհը, կյանքը, ճշմարտությունը, դուռը, մարգարիտը, կենդանի և երկնային հացը։ Առանց այդ ճշմարտության ոչ ոք չի կարող ճանաչել ճշմարտությունը և փրկվել։ Այդ

պատճառով էլ ինչպես արտաքին մարդու և տեսանելի իրերի հարցում դու հրաժարվել ես ամեն ինչից և բաժանել քո ունեցվածքը, այդպես, եթե ունես գիտություն և խոսքի ուժ նաև աշխարհիկ իմաստություն մեջ, պետք է այդ բոլորը դուրս շարտես քեզանից, բոլորը համարես ոչինչ։ Միայն այդ ժամանակ ի վիճակի կլինես խրատել քեզ քարոզի սաստով, որը և ճշմարիտ իմաստությունն է՝ ոչ թե խոսքերի ճարտարությունը, այլ սուրբ խաչի զորություն ներգործությամբ։

165. Մարտիկի և ճգնավորի գլխավոր գեներն այն է, որ մտնելով սրտի մեջ, պատերազմ մղի սատանայի հետ, ատի ինքն իրեն, հրաժարվի իր անձից, սրդողի նրա վրա, կշտամբի նրան, հակառակվի իր սովորույթ դարձած ցանկություններին, հակաճառի խորհուրդներին, պայքարի ինքն իր դեմ։

166. Իսկ եթե արտաքնապես պահպանում ես քո մարմինը ապականությունից և անառակությունից, բայց ներքնապես չնացար և անառակություն գործեցիր քո խորհուրդներում, ապա Աստծո առաջ չնացող ես դու, և քեզ օգուտ չի բերի քո կուսական մարմինը։ Ինչպես եթե պատանին, խորամանկորեն

գայթակղելով կույսին, պղծի նրան, ապա նա իր փեսացուի համար նողկալի կլինի շնության պատճառով: Այդպես և անմարմին հոգին, կապի մեջ մտնելով իր մեջ ապրող օձի՝ չար ոգու, հետ, շնություն է գործում Աստծո առաջ: Եվ գրված է՝ ամեն մարդ, որ կնոջն անալու է արան ցանկանալու համար, արդեն շնացավ արա հետ իր սրտում (Մատթ., 5, 28): Քանզի կա շնություն, որ մարմնով է գործվում, և կա հոգու շնություն, որը հաղորդակցվում է սատանայի հետ: Միևնույն հոգին կարող է լինել գործակիցը և քույրը կա՛մ դեերի, կա՛մ Աստծո և Հրեշտակների և շնություն գործելով բանսարկուի հետ՝ այլևս հաճելի չի լինում Երկնային Փեսացուի համար:

167. Բազմիցս բերել ենք հողագործի առակը, որը, աշխատելով և գցելով սերմը հողի մեջ, դեռ պետք է անձրևի սպասի երկնքից: Իսկ եթե ամպ չի հայտնվում և քամիներ չեն փչում, հողագործի աշխատանքը նրան ոչ մի օգուտ չի բերի և սերմն առանց այդ ամենի կմնա հողում գցված: Կիրառի՛ր դա հոգևորի պարագայում: Եթե մարդը սահմանափակվի միայն իր սեփականով և չընդունի իր բնության համար արտասովոր

որը, ապա չի կարող արժանի պտուղներ բերել Տիրոջը: Ի՞նչն է մարդու անելիքը: Այն է, որպեսզի հրաժարվի, հեռանա աշխարհից, լինի աղոթքների, արթնության մեջ, սիրի Աստծուն և եղբայրներին: Նրա անելիքն այդ ամենում լինելն է: Բայց եթե սահմանափակվի իր անելիքով, և հույս չտածի ու չակնկալի ընդունելու ինչ որ այլ բան, և չչնչեն Սուրբ Հոգու քամիները նրա հոգուն, չհայտնվի երկնային ամպը, երկնքից անձրև չտեղա և չոռոգի հոգին, ապա այդ մարդը չի կարող արժանի պտուղներ բերել Տիրոջը:

ժա) Հատկապես այդպիսիների՝ արտաքուստ ճշտակատարների թվում սուրբ Մակարն առանձնացնում է դպիրներին, որոնք գրքերից և գրույցներից գաղափար կազմեցին, թե որն է գործը, և մեկնաբանում են դա, բայց բուն գործին չեն անցնում, ինչի պատճառով հոգևոր իմացության մեջ հետ են մնում նույնիսկ տգետներից, և իրենց մեկնաբանությունն էլ մոլեռանդ է լինում:

168. Ով խոսում է հոգևորի մասին, ինքը ճաշակած չլինելով այն, նա նամանվում է մի մարդու, որը ցերեկային տապի ժամանակ գնում է ամայի դաշտով ու ծարավից տոչորվելով նկարագրում է առատահոս մի աղբ-

յուր՝ իրեն պատկերելով խմելիս, մինչդեռ շուրթերն ու լեզուն չորացել են կիզիչ տապից, կամ էլ մարդու, որը խոսում է մեղրի մասին, որ այն քաղցր է, բայց ինքը չի ճաշակել դրանից և չգիտի դրա քաղցրութեան գորութիւնը: Այդպես, եթե նրանք, ովքեր խոսում են կատարելութեան մասին, բերկրութեան կամ անախտութեան մասին, նրանք, ովքեր չեն զգացել իրենց մեջ դրանց ներգործութիւնը և չեն հավաստիացել դրանում, ապա իրականում ամեն ինչ չի լինում այնպես, ինչպես իրենք են ասում: Քանզի, երբ այդպիսի մարդը ժամանակին արժանի դառնա, թեկուզ մասամբ գործի անցնի, այդ ժամանակ ինքն իրեն կմտածի. «Այդպես չէր, ինչպես կարծում էի: Այլ կերպ էի դատում, իսկ այլ կերպ է գործում Հոգին»:

169. Այլ բան է խոսել հացի մասին և կերակուրի մասին, իսկ այլ բան է ուտել և ընդունել հացի սննդարարութիւնը և կազդուրվել բոլոր անդամներով: Այլ գործ է լուկ խոսքով ասել անուշահամ ըմպելիքի մասին, և այլ է՝ գնալ և լցնել հենց աղբյուրից և հագենալ համեղ խմիչքը ճաշակելով: Այլ բան է՝ խոսել պատերազմի մասին, քաջարի մար-

տիկների և ռազմիկների մասին, և այլ բան է մտնել ռազմի դաշտ և մարտնչել թշնամիների հետ, գրոհել և նահանջել, հարվածներ ընդունել և հարվածներ հասցնել և հաղթանակ տանել: Այդպես և հոգևորում. այլ բան է միայն ճանաչողութեամբ և մտքով բացատրես քեզ ասվածը, և այլ բան է էպպես, իրականում, առանց տարակուսանքի, ներքին մարդու մեջ և մտքում ունենաւ Սուրբ Հոգու գանձը՝ շնորհի ներշնչանքը և ներգործութիւնը: Միայն խոսքեր ասողները երազանքների մեջ են և մեծամտանում են իրենց իմացածով:

170. Ինչպես աշխարհում, երբ պատերազմ է հայտարարված, կրթված և մեծամեծ մարդիկ չեն մեկնում այնտեղ, այլ երկնչելով մահվանից, մնում են տանը, կրկին պատերազմի են կանչվում ունեզրկվածները, աղքատները, ռազմիկները, և պատահում է, որ նրանք հաղթում են թշնամիներին, սահմաններից դուրս են քշում, և դրա համար թագավորից ստանում են պարգևներ ու պսակներ, արժանանում են մեծարանքների և պատիվների, իսկ այն նշանավոր մարդիկ նրանցից հետ մնում են: Այդպես է լինում և հո-

գւերում: Տգետները, լսելով առաջին անգամ խոսքը, ճշմարտասեր հոգով կատարում են այն գործով և ստանում են Աստծուց հոգւոր շնորհ, իսկ իմաստունները և խոսքի նրբութիւնների մեջ խորացածները խուսափում են պատերազմից և ոչ միայն չեն առաջադիմում, այլև պատերազմի մասնակիցներից և հաղթանակածներից հետ են մնում:

Ժբ) Այսպիսով, ամեն կերպ պետք է ջանալ ձեռք բերելու Յոզու շնորհը: Քանզի եթե Նա չկա քո մեջ, քո բոլոր զոհաբերությունները և ջանքերը ոչինչ են, և քո վախճանի ժամին դները կհափշտակեն քեզ և քարշ կտան իրենց անդունդը: Իսկ ով ունի Յոզին, նա կայրի դրանց:

171. Եթե մեկը հանուն Տիրոջ թողնում է յուրայիններին, կտրվելով այս աշխարհից, հրաժարվելով աշխարհիկ վայելքներից, ունեցվածքից, հորից ու մորից, խաչելով ինքն իրեն, դառնում է աստանդական, աղքատ, ունեզուրկ, աշխարհիկ հանգստութեան փոխարեն ձեռք չբերի իր մեջ Աստվածային հանգիստը, չզգա իր հոգում հոգւորի բերկրանքը, ցնցոտիների փոխարեն չզգեստավորվի Աստվածային լույսով՝ ըստ ներքին

մարդու, նախկին և մարմնավոր շփումների փոխարեն իր հոգում անտարակուսելիորեն չճանաչի հաղորդութիւնը երկնայինի հետ, այս աշխարհի երևութական ուրախութեան փոխարեն իր ներսում չունենա հոգու բերկրանք և երկնային շնորհի մխիթարութիւնը և ըստ գրվածի՝ հոգով չապրի Աստվածային հազեցում, երբ նրան հայտնվի Տիրոջ փառքը (Սաղմ., 16, 15), մի խոսքով, այդ ժամանակավոր վայելքների փոխարեն, իր հոգում դեռևս այստեղ ձեռք չբերի տենչալի, անպական ցնծութիւն, ապա դարձավ նա անհամ աղ, նա ողորմելին է բոլոր մարդկանցից. և՛ այստեղից զրկված, և՛ Աստվածայինը չի վայելել, և՛ Հոգու ներգործութեամբ իր ներքին մարդու մեջ չի ճանաչել Աստվածային խորհուրդները:

172. Իսկ ինչ որ հոգին անում է երևութաբար ինքնուրույն, ինչ ձեռնարկում է և ջանք է թափում կատարել, ապավինելով միայն սեփական ուժին և մտածելով, թե ինքնուրույն, առանց Հոգու օժանդակութեան, կարող է գործը հասցնել կատարելութեան, ապա դրանով շատ է մեղանչում, քանի որ երկնային օթևանների համար, Արքայութ-

յան համար պիտանի չէ այն հոգին, որը մտածում է ինքն իրեն և իր ուժերով լույս առանց Հոգու, առաջադիմել կատարյալ մաքրության մեջ: Կրքերի ազդեցության տակ գտնվող մարդը, եթե չգնա առ Աստված՝ հրաժարվելով աշխարհից, ապավինությամբ և համբերությամբ հավատ չընծայի, որ կստանա իր սեփական բնությունից վեր բարիքը, այսինքն՝ Սուրբ Հոգու զորությունը, և Աստուծոց ի վերուստ չկաթի հոգու մեջ Աստվածային կյանքը, ապա նա ճշմարիտ կյանքով չի ապրի, չի սթափվի նյութական արբեցումից, Հոգու ճաճանչը չի ցուցլա մթամած հոգում, չի պայծառանա նրա մեջ սուրբ օրը և չի արթնանա նա անգիտության խորը քնից՝ ճշմարտապես ճանաչելու Աստուծուն՝ Աստծո զորությամբ և շնորհի ներգործությամբ:

173. Այդ պատճառով էլ, ով ձգտում է հավատալ և գնալ դեպի Տերը, նրան հարկ է աղոթել, որպեսզի դեռևս այստեղ նա ընդունի Աստծո Հոգին, քանի որ Նա հոգու կյանքն է, և դրա համար եղավ Տիրոջ գալուստը, որպեսզի դեռևս այստեղ տա հոգուն կյանքը՝ Սուրբ Հոգին: Քանզի ասված

է՝ Քանի դեռ լույսը ձեզ հետ ունեք, հավատացե՛ք լույսին (Հովհ., 12, 36), կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել (Հովհ., 9, 4): Այդ պատճառով էլ, եթե մեկը այստեղ չփնտրեց և հոգու մեջ չընդունեց կյանք, այսինքն՝ Հոգու Աստվածային լույսը, ապա նա մարմնից բաժանվելիս տարվում է արդեն ճախակողմյան՝ խավարի երկիրը՝ չմտնելով Երկնային Արքայություն և իր վերջը գտնելով գեհե՛նում սատանայի և նրա կամակատարների հետ: Կամ ինչպես ոսկին կամ արծաթը, երբ այն գցված է կրակի մեջ, դառնում է ավելի մաքուր և ավելի ազնիվ, և ոչինչ՝ ո՛չ փայտը, ո՛չ խոտը, չեն կարող փոփոխել նրան, քանի որ ինքը լինում է հանց կրակ և լափում է իրեն մոտեցող ամեն ինչ: Այդպես և հոգին, լինելով հոգևոր կրակի մեջ և Աստվածային լույսի մեջ, ոչ մի չար ոգուց և ոչ մի վնաս չի կրի: Իսկ եթե անգամ ինչ-որ մի բան մերձենա նրան, ապա կայրվի, կոչնչանա Հոգու երկնային կրակով: Կամ էլ ինչպես թռչունը, երբ ճախրում է բարձրերում, անհոգ է, չի վախենում ոչ որսորդներից, ոչ էլ խորամանկ գազաններից ու թևածելով բուրբից վեր՝ ծիծաղում է: Այդպես և հոգին.

ընդունելով Հոգու թեքերը և վեր, ավելի վեր սլանալով երկնքի բարձունքներում, ծիծաղում է ամենքի վրա:

174. Իսկ եթե մեկը դեռևս չունի իր մեջ տնկված և հաստատված Աստու շնորհը՝ թող զօր ու գիշեր Հոգով կապվի բնական մի բանի, ինչը ժամանակ առ ժամանակ ղեկավարում է իրեն, արթնացնում և մղում է դեպի բարին: Թող նրա մեջ, որպես մի բնական և անփոփոխ բան, առնվազն լինեն Հոգատարությունը, երկյուղը, կսկիծը և նրա մեջ մշտապես հաստատված սրտի խոնարհությունը:



Զ Հոգու ներգործությունն ընդունածների վիճակը

ա) Ով բարեխղճորեն, իրեն չխնայելով, տանում է ճգնակեցության դժվարությունները, նեղությունները, նրան, ի վերջո, հայտնվում է շնորհի զորությունը և ներգործությունը: Այն դրսևորվում է սրտում առանձնահատուկ հոգևոր ջերմությամբ, մտքերի խաղաղվելով, ամենայն արարվածի նկատմամբ հետաքրքրության նվազմամբ և այն ամենի արժեքների նսեմացմամբ, ինչը երկրի վրա համարվում է արժեքավոր: Դա է հենց, ըստ էության, հոգևոր կյանքի սերմը: Այստեղից է սկսվում հոգու հոգեղենացումը, կրքերից նրա մաքրվելը, կրքերի պատճառած վերքերի ապաքինումը:

175. *Նմանվի՛ր Մարիամին, նմանվի՛ր, չփնտրելով ոչ մի ուրիշ բան, այլ նայի՛ր միայն Նրան, Ով ասաց.* երկրի վրա կրակ օգելու եկա, և ինչքա՛ն եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի (Ղուկ., 12, 49): *Քանզի Հոգու բոցավառվելը կենդանություն է տալիս սրտերին: Աննյութական և Աստվածային կրակը լուսավորում է Հոգիները և փորձում*

նրանց, ինչպես անաղարտ ոսկին քուրա-
յում, իսկ ախտերը կրակի է մատնում, ինչ-
պես փուշ ու ծղոն, քանի որ մեր Աստվածը
լափող կրակ է (Եբբ., 12, 29): Այդ կրակի գո-
րուծյունը փափագելով՝ երանելի Դավիթն
ասաց. Փորձի՛ր ինձ, Տե՛ր, և քննի՛ր ինձ, փորձի՛ր
երիկամներս ու սիրտս (Սաղմ., 25, 2):

176. Այդ կրակը ջերմացրեց Կղեովպասի
և նրա ճամփորդակցի սիրտը, երբ նրանց
հետ խոսեց Փրկիչը հարուծյունից հետո:
Իսկ Հրեշտակները և ծառայող հոգիները
հաղորդվում են այդ կրակի պայծառությա-
նը, ըստ ասվածի. Նա իր Հրեշտակներին քամի-
ներ դարձրեց և ծառաներին՝ կրակի բոց (Եբբ., 1,
7): Այդ կրակը, այրելով ներքին աչքի շյու-
ղը, միտքը դարձնում է մաքուր, որպեսզի
ստանալով բնական լույսը՝ այն մշտապես
տեսնի Աստծո հրաշալիքները, նման նրան,
ով ասում է. Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ Քո օ-
րեների հրաշալիքները (Սաղմ., 118, 18): Այդ
պատճառով էլ այդ կրակը հալածում է դևե-
րին և ոչնչացնում մեղքը:

177. Ինչպես կրակի մեջ դրված երկաթը,
կամ էլ արծիճը, կամ ոսկին, կամ արծաթը,
կորցնում են կարծրության հատկությունը,

փոխակերպվելով փափուկ նյութի, և քանի
դեռ կրակի մեջ են, կրակի ջերմության շնոր-
հիվ հալվում են և կորցնում են բնական
կարծրությունը: Նմանապես և հոգին, հրա-
ժարվելով աշխարհից և սիրելով Միակ Տիրո-
ջը, սրտի մեծագույն փափագներով, աշխա-
տանքում, ճիգերում մշտապես սպասելով
Նրան հույսով և հավատով, և ընդունելով
իր մեջ Աստծո այդ երկնային կրակը և Հո-
գու սերը, իսկապես այդ ժամանակ արդեն
հրաժարվում է ամենայն աշխարհիկ սիրուց,
ազատագրվում է ամեն կարգի վնասակար
կրքերից, թոթափում է իրենից ամեն ինչ,
փոփոխում է իր բնական որակը և մեղանչա-
կան կարծրությունը, ամենը համարում է ա-
վելորդ, հանգստանալով միակ Երկնային
Փեսացուի մեջ, Որին ընդունել է իր մոտ՝
Նրա հանդեպ տաժած ջերմագին և անճառե-
լի սիրով:

178. Ասում եմ քեզ, որ նույնիսկ ամենա-
սիրելի եղբայրներից, որոնց ունի իր աչքի
առաջ, եթե դադարում են այդ սիրո մեջ, հո-
գին, այսպես ասած, երես է թեքում, քանի
որ նրա կյանքը և հանգիստը խորհրդավոր
և անճառելի հաղորդակցությունն է Երկնա-

յին Թագավորի հետ: Քանզի մարմնական շփումների սերն էլ է բաժանում հորից, մորից, եղբայրներից և նրանց հետ առնչվող ամեն ինչ մտքի մեջ դառնում է օտար: Եվ եթե մարդը սիրում է նրանց, ապա սիրում է որպես օտարի, իսկ ողջ համակրանքը տաժում է կողակցի հանդեպ, քանզի ասված է՝ դրա համար մարդը պիտի թողնի իր հորն ու մորը և պիտի գնա իր կնոջ հետևից. և երկուսը պիտի լինեն մեկ մարմին (Եփես., 5, 31): Իսկ այդ պատճառով էլ, եթե մարմնական սերը այդպես հեռացնում է ամեն տեսակ սիրուց, ապա որքան առավել ևս նրանք, ովքեր իսկապես արժանացել են հաղորդության մեջ մտնելու այդ երկնային և բաղձալի Սուրբ Հոգու հետ, կհրաժարվեն ամեն տեսակ աշխարհի սիրուց և ողջը նրանց համար կլիմա ավելորդ, քանի որ նրանք գերված են երկնային ցանկությունից և սերտորեն կապված են դրանցով. այնտեղ են ցանկությունները, այնտեղ են նրանց խոկումները, այնտեղ են ապրում նրանք, այնտեղ են շրջում նրանց խորհուրդները, այնտեղ է մշտապես բնակվում նրանց միտքը՝ նվաճված Աստվածային ու երկնային սիրուց և հոգևոր ցանկություններից:

179. Մարդիկ, որոնց վրա վրա իջել է Հոգու այդ Աստվածային կյանքի ցողը և խոցել է սիրտը Աստվածային սիրով առ Երկնային Քրիստոս Թագավորը, կապվում են այդ գեղեցկությունը, անբարբառելի փառքին, անեղծ բարեգարգությունը, ճշմարիտ և հավիտենական Թագավորի՝ Քրիստոսի աներևակայելի հարստությունը: Նրանք գերվում են տենչանքով և սիրով, ամբողջովին ձգտելով Քրիստոսին և փափագում են գտնել այն անբարբառելի բարիքները, ինչպիսիք հայում են հոգով, և հանուն դրա առ ոչինչ են համարում երկրի վրա ամեն տեսակ գեղեցկություն. և՛ փառք, և՛ շքեղություն, և՛ պատիվ, և՛ արքաների ու իշխանների հարստություն, քանի որ նրանք խոցվել են Աստվածային գեղեցկությամբ և նրանց հոգու մեջ կաթել է երկնային անմահություն կյանքը: Ուստի և փափագում են միայն Երկնային Թագավորի սերը, մեծագույն տենչանքով իրենց աչքի առաջ ունենալով Նրան՝ Միակին, հանուն Նրա հրաժարվում են ամեն տեսակ աշխարհիկ սիրուց և հեռանում են ամեն տեսակ երկրային կապերից, որպեսզի կարողանան սրտում ունենալ

միայն այդ ցանկութիւնը և չխառնել դրա հետ ոչ մի ուրիշ բան:

180. Այն քրիստոնյաները միայն, որոնք իսկապես ճաշակել են շնորհը, կարող են հասու լինել, որ ողջ հողագունդը՝ և՛ թագավորական գանձերը, և՛ հարստութիւնը, և՛ փառքը, և՛ իմաստութիւն ճառերը, այս ամենը մի երազ է, հաստատուն հիմք չունի, այլ անցողիկ է, և նրանք երկնքի տակ եղած ամենայն բան արժանացնում են ամենայն արհամարհանքի: Ի՞նչից է դա: Քանի որ հրաշափառ և զմայլելի է այն, ինչը վեր է երկինքներից, ինչը չկա թագավորական գանձերում, ո՛չ էլ իմաստութիւն ճառերում, ո՛չ էլ աշխարհի փառքի մեջ: Եվ արժանավորութիւնը կամ հարստութիւնը, ովքեր ներքին մարդու մեջ ունեն բոլորի Տիրոջը և Արարչին, ոչ թե անանց, այլ հավերժական վաստակ է:

181. Քրիստոնյաների միտքն ու իմացութիւնը, Սուրբ Հոգուն հաղորդակից լինելու և շփվելու շնորհիվ, հասնում են հաստատունութիւն, հարատեւութիւն, անխռով և հանգիստ վիճակի, չեն ցրվում և չեն վրդովվում արդեն հեղհեղուկ և սին խորհուրդներից,

այլ մնում են Քրիստոսի խաղաղութիւն և Հոգու սիրո մեջ, ինչպես և Տերը, դատելով նմանների մասին, ասաց, որ նրանք մահվանից կյանք անցան (Հովհ., 5, 24): Մտքի նորոգմամբ, խորհուրդների խաղաղեցմամբ, Տիրոջ հանդեպ սիրով և երկնային նվիրվածութեամբ բոլոր մարդկանցից տարբերվում է նոր արարածը՝ քրիստոնյան: Դրա համար էլ և եղավ Տիրոջ գալուստը, որպեսզի Տիրոջը ճշմարտապես հավատացողներն արժանան այդ հոգևոր բարիքներին:

182. Ինչպես արյունահոսութիւն ունեցող կինը ճշմարիտ հավատալով և հպվելով Տիրոջ զգեստի քղանցքներին, նույն պահին ստացավ բժշկութիւն և չորացավ արյան անմաքուր ակունքի վտակը. այդպես էլ ցանկացած հոգի, ունենալով մեղքի անբուժելի խոցը, անմաքուր և չար խորհուրդների աղբյուրը, եթե գա դեպի Քրիստոսը և ճշմարիտ հավատով խնդրի, ապա կստանա փրկարար բժշկութիւն կրքերի անդարմանելի հորձանքից և Միակ Հիսուսի զորութեամբ կցամաքի, կչորանա անմաքուր խորհուրդներ բխեցնող այդ ակունքը՝ քանզի ոչ այլ ոք կարող է բժշկել այդ խոցը:

183. Ինչպես եթե արևը ծագում է երկրի վրա, ապա նրա բոլոր ճառագայթներն երկրի վրա են, և երբ այն հասնում է արևմուտք, այդժամ անցնելով իր օթևանը, ետ է հավաքում իր բոլոր ճառագայթները, այդպես էլ Հոգով ի վերուստ չվերածնված Հոգին ամբողջովին երկրում է իր խորհուրդներով, և նրա մտքերը տարածվում են մինչև երկրի սահմանները, բայց հենց որ Հոգուց արժանանում է երկնային ծնունդ և հաղորդություն ստանալու, ի մի հավաքելով իր բոլոր խորհուրդները և ամփոփելով դրանք իր մեջ, մտնում է Տիրոջ մոտ, երկնային անձեռակերտ օթևանը, և նրա բոլոր խորհուրդները, մուտք գործելով Աստվածային եթեր, դառնում են երկնային, մաքուր և սուրբ, քանզի Հոգին, ազատագրվելով չար իշխանի՝ աշխարհի ոգու գնդանից, ձեռք է բերում մաքուր և Աստվածային խորհուրդներ, քանի որ Աստված բարեհաճեց ստեղծել մարդուն Աստվածային բնությանը հաղորդակից:

բ) Դա երևան է գալիս շնորհի ներգործության առաջին պահից: Բայց շատ վտանգավոր է մտածել, որ այստեղ արդեն կա որոշակի կատարելություն: Դրանով միայն սկիզբն է դրվում: Շնորհն ի-

րեն զգացնել տալով, սրտին տիրում է աստիճանաբար, մինչև որ համակում է ամբողջը, և ողջ ներքինը վերափոխվում է:

184. Երբ Աստվածային շնորհի զորութունն իջնի Հոգու վրա՝ յուրաքանչյուրի հավատի չափով, և Հոգին օգնություն ստանա ի վերուստ, այդժամ շնորհը նրան հովանի կլինի դեռևս մասամբ: Եվ մի կարծիք, թե ինչ-որ մեկի մեջ կարող է պայծառանալ ողջ Հոգին: Նրա ներսում մնում է դեռ ախտերի առատ հունձք և մարդուց պահանջվում է մեծ աշխատանք և ջանք՝ համաձայն նրա ներսում գործող շնորհի: Այդ պատճառով էլ Աստվածային շնորհը, որը կարող է մի ակնթարթում մաքրել մարդուն և դարձնել կատարյալ, հոգուն այցելում է աստիճանաբար, որպեսզի փորձի մարդու հոժարությունը. պահպանում է այն արդյոք լիակատար սեր առ Աստված, ոչ մի բանում չմտերմանալով չարի հետ, այլ լիովին նվիրում է իրեն շնորհին: Այս կերպ Հոգին երկար ժամանակ և շատ տարիներ, լինելով բարու մեջ հմտացած, ոչնչով չվշտացնելով և չտրտմեցնելով շնորհը, հենց աստիճանականության մեջ էլ գտնում է իր սատարումը: Եվ շնորհն

ինքը, նվաճելով հոգու անդաստանները, հոգու բազում տարիներ ցուցաբերած բարեհաստությունը և շնորհի հնազանդությունը համապատասխան, արմատներ է արձակում մինչև նրա խորունկ հյուսվածքները և խորհուրդները, մինչև որ ողջ հոգին համակվում է այդ անոթում արդեն թագավորող երկնային շնորհով:

185. Այդպես շատերն են հայտնվել մոլորություն մեջ իրենց մեջ գործող շնորհի առկայությունամբ: Նրանք մտածում էին, որ հասել են կատարելության, և ասում էին. «Մեզ այսքանն էլ բավական է, ոչ մի բանի կարիք չունենք»: Բայց Տերն անհասանելի է և անիմանալի: Եվ քրիստոնյաները չեն համարձակվում ասել, որ հասու են եղել, այլ խոնարհություն մեջ են զօր ու գիշեր: Հոգին շատ անդամներ ունի և անչափ է նրա խորությունը, և նրա մեջ սպրդած մեղքը տիրեց նրա բոլոր արոտներին և սրտի բոլոր հյուսվածքներին: Հետո, երբ մարդը սկսի հայցել շնորհը, այն գալիս է դեպի նա և տիրում է թերևս հոգու միայն երկու մասերին: Իսկ անփորձը, որն ունի շնորհի մխիթարություն, մտածում է, որ իջած շնորհը տիր

րել է հոգու բոլոր մասերին և մեղքը իսպառ արմատախիլ է արված: Սակայն հոգու մեծ մասը մեղքի իշխանություն տակ է, միայն մի մասը՝ շնորհի ներքո: Եվ մարդը խաբվում է և չգիտի այդ:

186. Եվ հիվանդությունամբ տառապող ինչոր մեկի որոշ անդամներ առողջ են լինում, օրինակ, տեսողության գործիքը՝ աչքը, կամ էլ ուրիշ մի անդամ, այն դեպքում, երբ մնացած անդամները վնասված են: Նույնը տեղի է ունենում և հոգևոր խոկումներում: Ումանք կարող են ունենալ երեք առողջ հոգևոր անդամներ, բայց դրանով մարդը դեռ կատարյալ չէ: Տեսնում ես, թե ինչքան հոգևոր աստիճաններ, չափեր կան, և ինչպես է մաս առ մաս, այլ ոչ միանգամից թուլանում և չքանում է չարը:

187. Ինչպես սաղմը մոր արգանդում միանգամից չի դառնում մարդ, այլ աստիճանաբար ընդունում է մարդկային կերպարանք և ծնվում է, թեև դեռ ոչ չափահաս տարիքի մարդ, այլ շատ տարիների ընթացքում նախ մեծանում է և նոր դառնում տղամարդ, այդպես և գարու կամ ցորենի սերմերը հողի մեջ սերմանելուց հետո ոչ

անմիջապես են ծլարձակում, այլ երբ անցնում են ցրտերն ու քամիները, այդժամ պատեհ ժամին ցողուն են արձակում, և տանձենի տնկողը ոչ անմիջապես է քաղում նրա պտուղները: Այդպես և հոգևորում, որտեղ առկա են այդչափ իմաստություններ և նրբություններ, աստիճանաբար է հասունանում մարդը և հասնում կատարյալ մարդու աստիճանին՝ Քրիստոսի կատարելության հասակի չափով (Եփես., 4, 13), այլ ոչ թե ինչպես հաստատում են ուրիշները, կարծես թե դա նույնն է, ինչ մերկանալը և հագնվելը:

188. Բայց ինչպես փեթակում է մեղուն ծածկաբար մեղրաբջիջներ պատրաստում, այդպես և շնորհը սրտերում աննկատ ծնում է իր սերը և դառնությունը վերածում է քաղցրության, իսկ խստասրտությունը՝ բարեարտության: Եվ ինչպես արծաթագործը և փորագրողը սկուտեղի վրա փորագրություն է անում մաս առ մաս, դրվագելով տարբեր կենդանիներ, ինչպիսիք դրա վրա փորագրում է, իսկ երբ ավարտում է գործը, այդ ժամանակ ցույց է տալիս սկուտեղը իր ողջ շքեղությամբ, այդպես և ճշմարիտ Նկարիչը՝ Տերը (Քրիստոսը) փորագրությունը զար-

դարում է մեր սրտերը և նորոգում է խորհրդավոր կերպով, մինչև մարմնից դուրս գալը. և այդ ժամանակ է հոգու շքեղությունը դառնում տեսանելի:

գ) Դրա համար էլ շնորհը ճաշակածները մշտապես ավելի ու ավելի են տենչում ճաշակել այն:

189. Ճշմարտասեր և բարեսեր հոգիները, Քրիստոսով կատարելապես զգեստավորվելու մեծ հույս և հավատ տածողները, առանձնապես այնքան չունեն ուրիշների հիշեցման կարիքը և իրենց մեջ անգամ չեն հանդուրժում երկնային ցանկության և Տիրոջ սիրո փոքր ինչ նվազում, այլ ամբողջովին մեխվելով Քրիստոսի խաչին, յուրաքանչյուր օր զիտակցում են իրենց մեջ հոգևոր Փեսայի հետ կապվածության հոգևոր առաջադիմության զգացողությունը: Եվ խոցվելով երկնային ցանկությամբ ու փափագելով առաքինությունների արդարություն, ուժգին և անհագորեն տենչում են հասնել հոգու պայծառության: Իսկ եթե իրենց հավատի համար արժանանում են ձեռք բերելու Աստվածային խորհուրդների իմացություն կամ դառնում են երկնային

չնորհի խնդուլթյան մասնակիցներ, ապա չեն ապավինում իրենց, համարելով իրենց ինչոր մի բան, այլ ինչ չափով արժանանում են հոգևոր ընծաների, այդ չափով էլ անհազերկնային ցանկուլթյան պատճառով, էլ ավելի մեծ ճիգերով փափագում են դրանք, ինչքան ավելի են զգում իրենց մեջ հոգևոր առաջադիմուլթյուն, էլ ավելի են քաղց ու ծարավ զգում շնորհի հաղորդուլթյան և բազմապատկման, ինչքան շատ են հարստանում հոգեպես, Երկնային Փեսային ձգտելու անհազ հոգևոր ցանկուլթյան պատճառով, էլ ավելի են կարծես թե աղքատանում իրենց մասին ունեցած կարծիքներում: Ինչպես ասում է Գրվածքը՝ Ուլքեր ուտեն ինձ, տակավին պիտի քաղցած մնամ, եւ ուլքեր ընպեն ինձ, տակավին պիտի ծարավեն (Սիրաք, 24, 23):

190. Ճշմարիտ աստվածասեր և քրիստոսասեր անձը, թեկուզև կատարել է հազարավոր արդար գործեր, Տիրոջ անհազ բաղձանքի պատճառով իր մասին մտածում է, որ ինքն իբրև թե դեռ ոչինչ չի արել: Չնայած հյուծել է իր մարմինը պահպանելով և անբնուլթյամբ, այն զգացողուլթյունն ունի, իբրև թե դեռ չի սկսել առաքիլուլթյունների հա-

մար մաքառել, չնայած արժանացել և ստացել է այլազան հոգևոր պարգևներ, կամ հայտնուլթյուններ և երկնային գաղտնիքներ, Տիրոջ հանդեպ ունեցած անչափելի և անհազ սիրո պատճառով ինքն իր մեջ մտածում է, իբրև թե դեռ ոչինչ ձեռք չի բերել, այլ հակառակ դրա, ամեն օր քաղցելով ու ծարավելով, հավատով և սիրով լինելով աղոթքների մեջ, չի հագնում շնորհական խորհուրդներով և չի դադարում բարեգարդել իրեն ամենայն առաքիլուլթյամբ: Նա խոցված է Երկնային Հոգու սիրով, շնորհի օգնուլթյամբ մշտապես բորբոքում է իր մեջ բոցավառ ձգտում դեպի Երկնային Փեսան, տենչում է կատարելապես արժանի լինելու Նրա հետ խորհրդավոր և անճառելի հաղորդուլթյան Հոգու սրբուլթյան մեջ, հոգու պարզ հայացքով նայում է Երկնային Փեսային երես առ երես հոգևոր և անբարբառելի լույսի մեջ, աներկմիտ և անտարակույս մտնում է Նրա հետ միուլթյան մեջ, կրում է Նրա մահն իր մեջ, մեծ տենչանքով մշտապես պատրաստ է մեռնելու Քրիստոսի համար, աներկբա հավատում է, որ Հոգու միջոցով կստանա կատարյալ ազատուլթյուն մեղ-

քից և կրքերի խավարից, և մաքրվելով Հոգով, հոգեպես և մարմնապես սրբազործված՝ արժանի կլինի Երկնային խաղաղությունն իր մեջ ստանալու՝ մաքուր անոթ և Երկնային Ճշմարիտ Թագավոր Քրիստոսի օթեան դառնալու: Եվ այդժամ միայն նա դարձվում է արժանի լինում Երկնային կյանքի՝ դեռևս այստեղ դառնալով Սուրբ Հոգու մաքուր բնակարան:

191. Բայց այդ աստիճանին հոգին կարող է հասնել ոչ միանգամից և ոչ առանց փորձությունների: Ընդհակառակը, ջանադիր լինելով, բազում ջանքեր և ճիգեր գործադրելով, ժամանակի ընթացքում ստուգումների և այլազան փորձությունների ենթարկվելուց հետո կստանա նա մինչև իսկ անախտության կատարյալ աստիճանի հասած հոգևոր աճ և առաջադիմություն: Եվ այդժամ արդեն պատրաստակամությունը և արիությունը դիմադրելով մեղքի ամեն տեսակ գայթակղություն, արժանի կլինի մեծ պատիվների, Երկնային հարստություն հոգևոր մեծագույն պարգևների, և ,այսպիսով, կդառնա Երկնային Արքայություն ժառանգորդ՝ ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

192. Քրիստոնեությունը կերակուր է և ըմպելիք: Եվ ինչքան շատ են ճաշակում այն, այնքան ավելի է միտքը քաղցրությունը գրգռվում, դառնալով անզուսպ և անհագ, ավելի ու ավելի պահանջող և ըմբռնունով: Կամ էլ ինչպես, եթե մեկը ծարավ է և մատուցված է նրան քաղցր ըմպելիք, ապա ճաշակելով այն, ավելի սաստիկ է բորբոքվում ծարավից և ավելի է մոտիկ գալիս ըմպելիքին: Այդպես և Հոգու ճաշակումն է առաջ բերում գրեթե անհագ ծարավ, ինչը արդարացիորեն նմանեցվում է այդպիսի մարդու ծարավին: Եվ դրանք միայն խոսքեր չեն, այլ՝ մտքին ծածկաբար աջակցող Սուրբ Հոգու ներգործություն:

193. Պատկերացրո՛ւ մի աղբյուր, որից ծարաված մեկը սկսում է խմել, խմելիս նրա ուշադրությունն ինչ որ մեկը շեղում է և թույլ չի տալիս խմել այնքան, ինչքան նրան ցանկալի է:

Այդժամ, ճաշակելով ջուրը, էլ ավելի է տոչորվում նա ծարավից և ավելի բուռն է փնտրում ըմպելիքը: Այդպես է լինում և հոգևորում. մեկն արդեն ճաշակում և հաղորդ է Երկնային սնունդին, և հենց այդ պահին

նրան ընդհատում են և ոչ մեկը նրան թույլ չի տալիս հագենալ:

194. Տերը գիտե մարդկային տկարությունը, որ մարդը դյուրությամբ մեծամտանում է: Այդ պատճառով էլ ընդհատում է նրան և թողնում է մնալ անդադրում վարժանքների և հուզումների մեջ: Քանզի, երբ քիչն էլ ստանալով, բոլորի համար դառնում ես անտանելի և գոռոզանում ես, ապա ինչքա՛ն ավելի կլինես անհանդուրժելի, եթե քեզ թույլ տան միանգամից հագենալ: Բայց, Աստված, իմանալով քո տկարությունը, Իր նախատեսությամբ տալիս է քեզ վշտեր, որ պեսզի դու խոնարհ լինես և եռանդագին փնտրես Աստծուն:

դ) Ավելի ու ավելի տեղալով Տիրոջը, այդպիսիք իրենց աղքատ, թերի են զգում ամեն ինչում: Դրա համար խոնարհությունը նրանցում արմատավորված զգացում է: Դա նաև գրավականն է ամեն տեսակ հետագա առաջընթացի:

195. Ինչպես կարող է մարդը լինել հոգով աղքատ, հատկապես, երբ ինքն իր մեջ զգում է, որ ինքը փոխվել է, առաջադիմել է, հասել է այնպիսի ճանաչողության և իմա-

ցության, ինչպիսիք առաջ չի ունեցել: Քանի դեռ մարդը ձեռք չի բերել այդ և չի առաջադիմել, նա տակավին հոգով աղքատ չէ, սակայն բարձր կարծիքի է իր մասին: Բայց երբ հասնում է այդ իմացությանը և առաջընթացին, այդժամ շնորհն ինքն է սովորեցնում նրան լինել հոգով աղքատ, և չնայած նա արդար է և Աստծո ընտրյալ՝ ոմն չհամարել իրեն, այլ իր անձը համարել փոքրարժեք և նվաստ, համարել, որ ոչինչ չգիտի և չունի, չնայած որ և՛ գիտի, և՛ ունի: Եվ նման խոհերը մարդու մտքի մեջ կարծես թե դառնում են բնածին և արմատավորված: Չե՞ս տեսնում, արդյոք, որ մեր նախահայր Աբրահամը, լինելով Աստծո ընտրյալ, անվանեց իրեն հող և մոխիր (Ծննդ., 18, 27): Նաև թագավոր օժիված Դավիթը՝ Աստծո առջև կանգնած, ինչ է ասում. Բայց ես որդեմ և ոչ թե մարդ, մարդկանց համար նախատեսված եմ և անարգանք՝ ժողովուրդներից (Սաղմ., 21, 7): Դրա համար էլ նրանք, ովքեր ցանկանում են լինել նրանց ժառանգակիցները, երկնային քաղաքի համաքաղաքացիները, նրանց հետ փառավորվել, պետք է ունենան նման խոնարհամտություն և

չմտածեն իրենց մասին, թե իրենք ինչ որ բան են, այլ ունենան խոնարհ սիրտ:

196. Շնորհ ընդունածն իրեն համարում է բոլոր մեղավորներից առավել նվաստ: Եվ այդպիսի խորհուրդ արմատավորված է նրանում որպես բնական մի բան: Եվ ինչքան խորանում է նա Աստվածաճանաչողության մեջ, այնքան ավելի է համարում իրեն անգետ, ինչքան ավելի է սովորում, այնքան ավելի է համարում իրեն ոչինչ չիմացող: Աջակցող շնորհը այդ բանը հոգու մեջ կատարում է որպես բնական մի բան:

197. Փորձվածները Աստծո առաջ իրենք իրենց համարում են չափազանց նվաստ և ծայրաստիճան անփորձ, և իրենց ցածր, կամ էլ նույնիսկ՝ ոչինչ համարելը նրանց համար դարձավ բնական և պարտադիր գործ: Մի՞թե այդպիսիք չգիտեն, որ իրենց տրված է, ինչը չունեին և ստացել են իրենց բնության համար անըստդյուտ մի բան: Ասում եմ քեզ, որ նրանք չեն համարում իրենց բարեկամուտ և առաջադիմած, չեն կարծում, որ ձեռք են բերել, ինչը որ չունեին: Այդպիսիների վրա իջած շնորհն ինքն է սովորեցնում նրանց, որպեսզի անգամ եթե առաջադիմեն

էլ, իրենց անձերը չհամարեն արժանընտիր, այլ բնական համարեն իրենց ոչինչ լինելը: Եվ լինելով մեծագին Աստծո առաջ, այդպիսին չեն նրանք իրենց համար: Իրենց առաջադիմությամբ և Աստվածաճանաչողությամբ հանդերձ իրենց ընդունում են կարծես ոչինչ չիմացողներ, և Աստծո առաջ հարուստներն իրենք իրենց աչքին թվում են աղքատ:

198. Իսկ եթե տեսնես, որ ինչ-որ մեկը մեծամտանում և գոռոզանում է այն բանից, որ ինքը հաղորդակից է շնորհին, և նույնիսկ եթե հրաչքներ էլ գործած լինի, և մեռածներին հարուստուն տված լինի, բայց եթե չհամարի իր անձը անարգ և նվաստ, և իրեն հոգով աղքատ ու գարշելի, ապա հափշտակված է նա չարից, և ինքն էլ չգիտի այդ: Եթե նա հրաչքներ էլ գործի, պետք է նրան հավատ ընծայել: Քանի որ քրիստոնեություն չափանիշը և այն բանի, թե ով է փորձված Աստծո առաջ՝ դա մարդկանցից թաքցնել ջանալն է, և եթե ունենա էլ թագավորի ողջ գանձերը, դրանք թաքցնելն է՝ մշտապես ասելով. «Իմս չէ այդ գանձը, ուրիշն է այն թողել ինձ մոտ, իսկ ես աղքատ եմ, թողնողը, երբ կամենա, կվերցնի այն ինձանից»:

Եթե մեկն ասում է. «Հարուստ եմ ես, բավական է ինձ այն, ինչը ձեռք եմ բերել, ավելին հարկավոր չէ», ապա այդպիսին քրիստոնյա չէ, այլ պատրանքի և բանսարկուի անոթ: Քանզի Աստծո վայելքը անհագ է, և ով ինչ չափով ճաշակում է և հաղորդվում է, այդ չափով էլ դառնում է ավելի քաղցող: Այդպիսի մարդիկ ունեն եռանդ և անգուսպ սեր առ Աստված: Ինչքան ավելի են ջանում նրանք առաջադիմել և ձեռք բերել, այնքան ավելի համարում իրենց աղքատ, որպես ամեն բանում խղճուկ և ոչնչի չհասած: Նրանք ասում են. «Ես արժանի չեմ, որ այս արևը ծագի ինձ վրա»: Դա քրիստոնեությունից չափանիշն է, դա խոնարհությունն է:

199. Եթե մեկը չի պահպանում խոնարհամտություն, ապա հանձնվում է սատանային և մերկանում է իրեն տրված Աստվածային շնորհից, և այդ ժամանակ երևում է նրա մեծամտությունը, քանի որ նա մերկ է և աղքատ: Այդ պատճառով էլ, Աստվածային շնորհով հարստացածը պետք է լինի խոնարհություն և սրտի զղջումի մեջ, համարի իրեն աղքատ և ոչինչ չունեցող, մտածի. «Ինչ որ ունեմ, այդ բոլորը ուրիշինն են, ուրիշն է

ինձ տվել, և երբ կամենա, կվերցնի ինձանից»: Ով այդպես խոնարհեցնում է իրեն Աստծո և մարդկանց առաջ, նա կարող է պահպանել իրեն տրված շնորհը, ինչպես ասված է՝ ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա (Մատթ., 23, 12): Լինելով Աստծո ընտրյալ՝ թող դատապարտի նա ինքն իրեն և լինելով հավատարիմ՝ թող համարի իրեն անարժան: Այդպիսի հոգիները բարեհաճ են Աստծուն և կյանք են ստանում Քրիստոսով:

ե) Սակայն, չնայած դրան, նրանց նախագուշացվում է ամենից շատ վախենալ մեծամտությունից, գոռոզությունից, դատապարտությունից, քանզի դրանց պատճառով շնորհը նահանջում է, իսկ առանց շնորհի իսկույն վրա է հասնում անկումը:

200. Եթե թագավորն իր գանձը ի պահ է թողնում որևէ աղքատի, ապա այն ստացողն այդ գանձը չի համարում իր սեփականությունը, այլ ամենուր խոստովանում է իր աղքատությունը, չհամարձակվելով վատնել ուրիշի գանձը, քանի որ մշտապես մտածում է ինքն իրեն. «Իմ մոտի այդ գանձը ոչ միայն ուրիշինն է, այլ նաև ինձ ի պահ է տվել հզոր

Թագավորը, և նա, երբ ցանկանա, կվերցնի այն ինձանից»։ Եվ Աստծո շնորհն ունեցողները նույնպես պետք է մտածեն իրենց մասին, խոնարհամիտ լինեն, խոստովանեն իրենց աղքատությունը։ Եթե աղքատը, ընդունելով Թագավորից իրեն ի պահ տրվող գանձը և հույսը դնելով ուրիշի այդ գանձի վրա, սկսում է գոռոզանալ դրանով, որպես թե իր սեփական հարստությամբ, և նրա սիրտը լցվում է հպարտությամբ, ապա Թագավորը նրանից հետ է վերցնում իր գանձը, և այն ի պահ ունեցողը մնում է այնպիսի աղքատ, ինչպիսին էր նախապես։ Այսպես, եթե շնորհ ունեցողներն էլ գոռոզամտանան իրենք իրենց մեջ, և նրանց սրտերը դառնան ամբարտավան, ապա Տերն իր շնորհը ետ կվերցնի նրանցից, և կմնան նրանք այնպիսին, ինչպիսին կային։

201. Քանի որ, ստանալով Հոգու շնորհը և գտնելով իր համար շնորհական մխիթարություն հանգստի, ցանկությունների և հոգևոր քաղցրության մեջ, և վստահելով դրան, նրանք մեծամտանում են, տրվում են անհոգություն, անզիղջ սրտով, մտքով չխոնարհվելով և չհասնելով անախտության կա-

տարյալ աստիճանին, չհոգալով ամենայն ջանադրությամբ և հավատով կատարելապես լցվել շնորհով, բավարարվել են դրանով և հանգստացել, և կանգ առել չնչին շնորհական մխիթարության վրա, ապա նման հոգիները, ավելի առաջ գնալով գոռոզության, քան խոնարհության մեջ, թեև արժանացան ինչ-որ պարգևի, բայց դրանից զրկվում են անհոգության, անփութության և իրենց փուչ ինքնապարծության համար։

202. Ասում եմ քեզ, որ տեսել եմ մարդկանց, որոնք ունեին բոլոր պարգևները և դարձել էին Հոգուն հաղորդակից, և չհասնելով կատարյալ սիրո, նրանք ընկան։ Ոմն ազնվազարմ մարդ, հեռանալով աշխարհից, վաճառեց իր ունեցվածքը, ազատություն շնորհեց ստրուկներին։ Եվ որպես խելամիտ ու իմաստուն, փառավորվեց ազնվաբարո կյանքով, այնինչ տրվելով ինքնապարծության և ամբարտավանության, ընկավ, ի վերջո, ցոփության ու չվայտության և հազար ու մի չարիքի մեջ։

203. Մի ուրիշը հալածանքների ժամանակ մատնեց իր մարմինը, և լինելով խոստովանահայր, հետագայում, խաղաղություն

հաստատվելուն պես, ազատվեց և հարգանք էր վայելում: Նրա կոպերը վնասվել էին այն բանից, որ նրան տանջել էին թանձր ծխի մեջ: Եվ նա՝ փառավորվածը, կանչված լինելով աղոթքի, վերցնելով հացը, տվեց այն իր պատանուն: Եվ նրա միտքը հայտնվեց այնպիսի վիճակի մեջ, կարծես թե երբեք չէր լսել Աստծո խոսքը:

204. Իսկ ուրիշ ոմն ճգնավոր, ապրելով ինձ հետ մի տան մեջ և աղոթելով ինձ հետ, այնքան հարուստ էր շնորհով, որ աղոթելով իմ կողքին, լցվում էր գորովանքով, քանզի շնորհը նրա մեջ եռում էր: Նրան տրված էր բժշկելու շնորհ, և ոչ միայն դեքերին էր հանում, այլև բուժում էր ձեռքերը և ոտքերը կապած դաժան հիվանդություններ ունեցողներին՝ ձեռքը վրան դնելով: Հետո, լինելով անհոգ, փառաբանվելով աշխարհի կողմից և հրապուրվելով ինքն իրենով, հպարտացավ ու ընկավ մեղքի խորխորատը: Նայի՛ր, բժշկելու շնորհն ունեցողն անգամ ընկավ: Տեսնո՞ւմ ես արդյոք, ինչպես են ընկնում սիրո աստիճանին չհասածները: Իսկ ով հասել է սիրուն, կապված և գմայլված է դրանով, նա սքանչացած և գերի է տարված

մի այլ աշխարհ, ասես չգալով իր սեփական բնությունը:

205. Հավատարիմ և ճշմարտասեր հոգին, նայելով արդարների համար պատրաստված հավիտենական բարիքներին և Աստծո գալիք շնորհից իջնող անճառելի բարերարությունը, և՛ իրեն, և՛ իր փուլթաջանությունը, և՛ իր ջանքերն ու ճիգերն անարժան է համարում Հոգու անճառելի խոստումներին: Այդպիսին է հոգով աղքատը, որին երանություն է արժանացնում Տերը: Այդպիսին են արդարություն քաղցն ու ծարավն ունեցողները: Այդպիսին է սրտով խոնարհը: Ձեռք բերելով այդպիսի հոժարություն, ջանադրություն, և՛ ճիգ, և՛ առաքինություն սեր, և մինչև վերջ այդպիսին մնալով, ճշմարտապես կարող են ժառանգել կյանք և հավիտենական արքայություն: Հետևաբար թող եղբայրներից ոչ ոք չմեծամտանա եղբոր առաջ և չարից գայթակղվելով, թող առաջ չգնա ինքնապարծություն մեջ, ասելով. «Ահա հոգևոր պարգև ունեմ արդեն»: Քանզի քրիստոնյաներին վայել չէ այդպես մտածել: Հայտնի չէ քեզ, թե ինչ կանի եղբորդ հետ առավոտվա օրը, չգիտես՝ ինչպիսին կլինի

քո և նրա վախճանը: Հակառակ դրան, թող յուրաքանչյուրը, լինելով ուշադիր իր հանդեպ, անդադար զննի իր խիղճը և քննի իր սրտի գործերը՝ թե ինչպիսի եռանդով և ճիգով է միտքը ձգտում առ Աստված: Եվ նկատի ունենալով կատարյալ նպատակը՝ ազատությունը, անախտությունը և հոգևոր հանգիստը, անկանգ և առանց ծուլանալու թող ընթանա, անխտիր չվստահելով ոչ մի պարզևի կամ արդարացման:

206. Ի՞նչ կերպով են ընկնում նաև նրանք, որոնց մեջ ներգործել է Աստծո շնորհը: Իրենց բնույթով ամենամաքուր խորհուրդներն իսկ լինում են գայթեղի, և ընկնում են: Մարդը սկսում է հպարտանալ, դատել ուրիշին և ասել. «Դու մեղավոր ես», իսկ ինքն իրեն համարել արդար: Չգիտե՞ս միթե, ինչ է ասում Պողոսը. Ինչ տրվեց մարմնի խալթ, պատգամավոր Սատանա, որ բռնցքահարի ինչ, որպեսզի չգոռոզամտանամ (Բ Կորնթ., 12, 7): Նաև մաքուր բնությունն է ունակ հպարտանալու:

207. Այդ պատճառով էլ քրիստոնյաները պետք է ամեն ջանք գործադրեն բնավ ոչ մեկին չդատապարտելու, ո՛չ բացահայտ անա-

ռակ կնոջը, ո՛չ մեղավորին, կամ էլ անօրեն մարդկանց, բոլորին նայեն բարեհոգի կամեցողությամբ, պարզ աչքով, որպեսզի մարդու համար ոչ մեկին չնվաստացնելը, չդատապարտելը, ոչ մեկից չզարչելը և մարդկանց միջև տարբերությունն չզննելը դառնա բնական և անհրաժեշտ:

208. Ունենալով շնորհական պարզեանք, մարդը կարո՞ղ է ընկնել: Եթե անփութությունն ցուցաբերի, ապա կընկնի, քանի որ թշնամիները երբեք անգործ չեն մնում և պատերազմ են մղում՝ չտրվելով ծուլության: Առավել ևս դու չպետք է դադարեցնես քո որոնումներն Աստծո առաջ: Քանզի շատ վնասներ կկրես, եթե տրվես անփութության, թեկուզև կարծես թե դու փորձվել ես հենց շնորհի խորհրդով:

209. Մեծ է քրիստոնյաների արժանավորությունը, այն ոչ մի բանի հետ համեմատելի չէ: Իսկ եթե մեկը դարձել է ցրված և հափշտակվել չարից, ապա նմանվում է մի քաղաքի, որը պարիսպներ չունի, և որտեղից որ կամենան, անարգել մուտք են գործում ավազակները և ամայացնում ու մոխիրներն են վերածում այն: Այդպես, եթե

դու էլ անփուլթ ես և անուշադիր ինքդ քո հանդեպ, ապա գալիս են չար ոգիներ, ոչնչի են վերածում ու ամայացնում միտքդ՝ խորհուրդներդ ցրելով ու շաղ տալով այս կյանքում:

զ) Դրա համար էլ նրանք որքան որ ուրախանում են, գիտակցելով, թե ինչ գանձ են ձեռք բերել, նույնքան էլ երկյուղում են, թե չլինի կորցնեն այն, և ջանում են իրենց հոգևոր ծառայությունը կատարել այնպես, որպեսզի չվշտացնեն Դոգու շնորհին, և Նա չհեռանա:

210. Մշակը չի ապավինում իր ջանքերին և իր վարքին, մինչև չստանա հոսացածը, մինչև չգա Տերը և չբնակվի նրանում՝ նրա բոլոր զգացումներում Հոգու ներգործությամբ: Իսկ երբ նա ճաշակի Տիրոջ շնորհը, վայելի հոգևոր պտուղներ, կվերցվի խավարի քողը և Քրիստոսի լույսը կշողշողա և կներգործի անբարբառելի բերկրանքի մեջ, այդժամ կհավաստիանա մեծ սիրուն՝ Տիրոջն ունենալով իր հետ: Ինչպես վաճառականը ուրախանում է շահույթ ստանալիս, բայց և միաժամանակ տրտմում և երկյուղում է ավազակների և չար ոգիների չարիք-

ներից, որպեսզի թուլանալով, որևէ կերպ կորստյան չմատնի վաստակը, քանի դեռ չի արժանացել Երկնային Արքայություն, երկնային Երուսաղեմ մտնելու:

211. Ինչպես ծով դուրս եկած վաճառականները, թեկուզ և քամին համընթաց է և ծովը՝ խաղաղ, սակայն դեռ նավահանգիստ չեն մտնում, գտնվելով մշտապես երկյուղի մեջ, որ հանկարծ կբարձրանա հանդիպակաց քամի, ծովը կալեկոծվի և նավը կենթարկվի վտանգի: Այդպես և քրիստոնյաները, թեև զգում են, որ իրենց մեջ չնշում է Սուրբ Հոգու բարենպաստ քամին, այնուամենայնիվ դեռ գտնվում են սարսափի մեջ, որ հանկարծ չհայտնվի և չփչի հակառակ ուժի քամին և նրանց հոգիներում չբարձրացնի խռովք և ալեկոծություն: Այդ պատճառով էլ հարկ է մեծ փութեռանդություն՝ մտնելու համար հանգստություն նավահանգիստ, կատարյալ խաղաղություն, հավիտենական կյանք և հավիտենական երանություն, սրբերի քաղաքը՝ երկնային Երուսաղեմ, անդրանիկների Եկեղեցին (Եբբ., 12, 23): Իսկ ով դեռ չի անցել այդ աստիճանները, նա երկյուղելու շատ պատճառ ունի, որպես-

զի չլինի թե նենգ ուժերն այդ անցման ժամանակ անկման դավեր նյութեն:

212. Մեծ հարստության տեր մի փառապանծ արքա բարեհաճ է գտնվում աղքատ կնոջ նկատմամբ, որը ոչինչ չունի, բացի իր սեփական մարմնից, սիրահարվում է և մտադրվում է նրան իր մոտ առնել որպես հարսնացու և կողակից: Եվ եթե նա ցույց տա, ի վերջո, իր սիրահարությունը ամուսնուն, ապա, պահպանելով սերը նրա հանդեպ, այդ աղքատ, թշվառ, ոչինչ չունեցող կինը կդառնա ամուսնուն պատկանող ողջ ունեցվածքի տիրուհին: Իսկ եթե պարտքի և պարտավորության հակառակ մի բան անի և ամուսնու տանն իրեն անվայելուչ պահի, ապա այդ ժամանակ կարտաքսվի անպատվությամբ ու անարգանքով և կգնա երկու ձեռքերը գլխին դրած, ինչպես և Մովսեսի օրենքն է ճանաչել տալիս իր ամուսնուն անհնազանդ և անպիտան կնոջը (Երկ. 24, 2), և այդժամ արդեն նա կտանջվի և դառնաղի կարտասովի, մտածելով, թե ինչպիսի հարստություն կորցրեց, ինչպիսի փառքից զրկվեց իր անխոհեմության պատճառով և անպատվության ենթարկվեց:

213. Այդպես և հոգին, որին իրեն հարս է դարձնում Երկնային Փեսա Քրիստոսը, որպեսզի Նրա հետ խորհրդավոր և Աստվածային հաղորդության մեջ լինի, ճաշակելով երկնային հարստությունը, պետք է մեծ փութաշանուկությամբ. անկեղծորեն բարեհաճ լինի իր հետ պսակվող Քրիստոսին, իրեն վստահված հոգևոր ծառայությունը կատարի անհրաժեշտ և վայելուչ կերպով, որպեսզի ամեն ինչում բարեհաճ լինի Աստծուն, ոչնչով չվշտացնի Հոգուն, պատշաճ ձևով պահպանի կատարյալ ողջախոհություն և սեր Քրիստոսի հանդեպ, պարկեշտ լինի Երկնային Թագավորի տանը՝ պարգևված շնորհի ամբողջ նվիրվածությամբ: Եվ ահա, այդպիսի հոգին տիրուհի է կարգվում Տիրոջ ողջ բարիքների վրա, իր մարմինն էլ Քրիստոսի Աստվածությունից փառավորվում է: Սակայն, եթե նա մեղանչի ինչ-որ բանում և իր ծառայության մեջ գործի պարտքին հակառակ, Քրիստոսի հաճելին չլինի, չհետևի Նրա կամքին, գործակից չլինի իրենում առկա Հոգու շնորհին, ապա կենթարկվի ամութալի և խայտառակ անպատվության և կզրկվի կյանքից՝ որպես Երկնային Թագա-

վորի համար անպիտան, հաղորդակցվելու անընդունակ: Եվ այդ հոգու համար արդեն տխրում, վշտանում, ողբում և արտասվում են բոլոր սրբերը և բանական հոգիները: Հրեշտակները, Զորությունները, Առաքյալները, Մարգարեները, Մարտիրոսները սգում են նրան...:

214. Այդ պատճառով էլ մենք պետք է ջանանք և ամենայն ողջամտությամբ լինենք շրջահայաց, քանզի գրված է՝ ահով և դողով դուք ձեր փրկության համար աշխատեցե՛ք (Փիլիպ., 2, 12): Այդ պատճառով էլ, դուք բոլորդ, Քրիստոսի Հոգու մասնակիցներդ, ոչ մի բանում՝ ոչ փոքրում, ոչ մեծում, մի՛ վերաբերվեք արհամարհանքով և մի՛ վշտացրեք Հոգու շնորհին, որպեսզի չզրկվեք այն կյանքից, որին արդեն մասնակից էիք դարձել:

215. Եվ նույնը կրկին ներկայացնում եմ ուրիշ անձով: Եթե ծառան մտնում է թագավորական պալատ, ծառայում է թագավորի մոտ՝ մատուցելով այն, ինչը հանձնարարված է, ապա այն վերցնում է թագավորական ունեցվածքից, և ինքը հետը ոչինչ չունենալով, թագավորական սպասքով է սպա-

սարկում թագավորին: Բայց այստեղ հարկավոր է շատ շրջահայաց և խելամիտ լինել, որպեսզի ծառայության ընթացքում չարվի այն, ինչը անհարկի է, թագավորական սեղանին չմատուցվի մի ուտեստը մյուսի փոխարեն, այլ ողջ համադամը՝ առաջինից մինչև վերջինը, առաջարկվի ըստ կարգի: Եվ եթե նա, անգիտությամբ և անխոհեմությամբ պատճառով թագավորին չծառայի ինչպես հարկն է, ապա կենթարկվի վտանգի և մահվան:

216. Այդպես և հոգին, շնորհով և հոգով նվիրաբերելով իրեն Աստծո ծառայության, կարիք ունի առավել խոհականության և իմացություն, որպեսզի Աստծո անոթների մասին խոկումներում, այսինքն՝ հոգևոր ծառայության մասին խոկալիս ինչ-որ բանով չմեղանչի շնորհի հետ անհամատեղելի իր սեփական հոժարության պատճառով: Քանզի հոգին կարող է ծառայել Տիրոջը հոգևոր ծառայությամբ, որը ծածկաբար կատարվում է ներքին մարդով և իր սեփական անոթներով, այսինքն՝ ներքին մարդու հոգով: Իսկ առանց Նրա անոթների, այսինքն՝ շնորհի, ոչ ոք չի կարող ծառայել Աստծուն,

այսինքն՝ բարեհաճ լինել, կատարելով ամեն ինչում Աստծո կամքը:

217. Եվ երբ հոգին շնորհ ստանա, ապա նա պետք է առավել ողջամտություն և խոհեմություն ունենա: Այդ ամենն Աստված ինքն է տալիս Իրենից խնդրող հոգուն, որ պեսզի նա կարողանա բարեհաճորեն ծառայել Իրեն Հոգով, որպեսզի ոչ մի բանում չտրվի մոլությանը և չմեղանչի՝ անգիտությամբ, աներկյուղորեն ու անփութությամբ ճանապարհից շեղվելով, և պարտականությանն հակառակ չզանցառի Տիրոջ կամքը, քանի որ այդպիսի հոգու պատիժը կլինի մահը և ողբը, ինչ մասին էլ ասում է Աստվածային Առաքյալը՝ որպեսզի գուցե ես ինքս խոստելի չլինեմ այն բանում, որ քարոզեցի ուրիշներին (Ա Կորնթ., 9, 27): Տեսնո՞ւմ ես, ինչպիսի երկյուղ ուներ Աստծո Առաքյալը: Ուստի և, աղոթենք Աստծուն, որպեսզի մենք՝ բոլոր Աստծո շնորհն ընդունածներս, հոգևոր ծառայությունը գերազանցորեն կատարենք համաձայն Նրա կամքի և տեղի չտանք ամեն ինչ արհամարհող մտքերին, և այս կերպով, բարեհաճ լինելով Աստծո առաջ և Նրա կամքին համաձայն, ծառայենք

Նրան հոգևոր ծառայությամբ, ժառանգելով հավիտենական կյանքը:

218. Ինչպես Արքայի պալատ մտնող կոմիտները կամ էլ մարզպետները մեծ ահ ու սարսափի մեջ են լինում՝ ինչպես պատասխանեն նրան և չենթարկվեն հանդիմանության ու պատժի, երբ մեղանչեն պատասխան տալիս: Իսկ շինականները և ռամիկները, որ երբեք իշխան չեն տեսել, իրենց անհոգ են զգում, այդպես էլ երկնքի տակ գտնվող այս աշխարհը, բոլորը՝ թագավորներից մինչև թշվառները, չիմանալով Քրիստոսի փառքը, հոգ են տանում կենցաղային գործերի մասին, և որևէ մեկը հազիվ թե հիշի Դատաստանի օրը: Իսկ Քրիստոսի Դատաստանը խորհուրդներով մտնողները, որտեղ Քրիստոսի գահն է, և մշտապես Քրիստոսի առջև գտնվողները, անդադար սարսափի և ահ ու դողի մեջ են լինում, որպեսզի ինչ-որ բանում չմեղանչեն Նրա սուրբ պատվիրանների դեմ:

219. Ինչպես ստրուկը, եթե նա իր տիրոջ կողքին է, այդ ամբողջ ժամանակ, քանի դեռ նրա կողքին է, վախենում է և առանց նրա ոչինչ չի անում, այդպես և մենք պետք է

խոստովանենք և երևան հանենք մեր խորհուրդները Տիրոջ և Սրտագետ Քրիստոսի առաջ և Նրան հուսանք ու ապավինենք, քանի որ Նա իմ փառքն է, Նա իմ հայրն է, Նա իմ հարստությունն է: Այդ պատճառով էլ խղճիդ մեջ դու միշտ պետք է զգաստություն և երկյուղ ունենաս:

220. Ինչպես նրանք, որոնց հանձնարարված է մարզի գլխավոր կառավարչությունը կամ էլ թագավորական գանձը, ողջ ժամանակ լինում են մտահոգ, որպեսզի ինչ որ բանով չվշտացնեն թագավորին, այնպես էլ և նրանք, որոնց վստահված է հոգևոր գործը, մշտապես մտահոգված են, հանգստանալիս անգամ կարծես հանգիստ չունեն, քանզի հոգուց հալածում են քաղաք ներխուժած, այսինքն՝ հոգու մեջ ներխուժած խավարի թագավորությունը և իրենց արոտավայրերին տիրող բարբարոսներին:

է) Այդ նպատակի համար նրանք ամեն կերպ ցանուն են մտքով չհեռանալ Տիրոջից և իրենց ներքնաշխարհը պահել այնպիսի համադաշնության մեջ, ինչպես նավավարն իր նավազներին, կառավարը՝ ձիերին:

221. Աստված աննկարագրելի է և անընդգրկելի, հայտնում է իրեն ամենուր՝ և՛ լեռներում, և՛ ծովում, և՛ անդունդի խորքում, չի անցնում մի տեղից մյուսը, ինչպես Հրեշտակներն են երկնքից իջնում երկիր, Նա և՛ երկնքում է, Նա և՛ այստեղ է: Եթե փնտրում ես Տիրոջը խորքերի խորքում, ապա կտեսնես, որ Նա այնտեղ հրաշքներ է գործում: Եթե փնտրում ես Նրան գուբի մեջ, ապա կտեսնես, որ այնտեղ երկու առյուծների մեջ Նա պահպանում է արդարակյաց Դանիելին: Եթե փնտրում ես Նրան կրակի մեջ, ապա կտեսնես, որ այնտեղ Նա օգնում է Իր ծառաներին: Եթե Նրան փնտրում ես լեռան վրա, ապա կտեսնես, որ Նա այնտեղ է Եղիայի և Մովսեսի հետ: Տերն ամենուր է, և՛ երկրի տակ է, և՛ երկինքներից վեր, և՛ մեր մեջ է, և՛ ամենուր:

222. Քրիստոսյան պարտավոր է մտքում մշտապես ունենալ Աստծուն, քանզի գրված է. սիրի՛ր քո Տեր Աստծու՜ն քո ամբողջ սրտով (Բ Օր., 6, 5), այսինքն՝ սիրիր Տիրոջը ոչ միայն այն ժամանակ, երբ մտնում ես աղոթատուն, այլ նաև ճանապարհին, նաև զրուցելիս, նաև ճաշակելիս, հիշի՛ր Աստծուն և սեր ու

նվիրվածությունն ունեցիր Նրա հանդեպ: Քանզի Նա ասում է՝ որտեղ քո միտքն է, այնտեղ էլ՝ քո գանձը (Մատթ., 6, 21): Ինչի հետ կապված է մարդու սիրտը և ինչին ուղղված են նրա ցանկությունները, այն էլ նրա համար դառնում է Աստված: Եթե սիրտը մշտապես փափագում է Աստծուն, ապա Աստված նրա սրտի Տերն է: Ինչպես կրակի մեջ նետված ցախը չի կարող դիմանալ նրա զորությունը, այլ անմիջապես կայրվի, այդպես և դեերը, եթե ցանկանան հարձակվել Հոգու պարգևներին արժանացած մարդու վրա, կհրկիզվեն և կոչնչանան Աստվածային կրակի զորությունը, միայն թե մարդը մշտապես կապված լինի Տիրոջը և Նրան ապավինի ու հուսա: Եվ եթե դեերն անգամ կարծր լեռների նման ամուր լինեն, ապա աղոթքից կայրվեն, ինչպես մոմը՝ կրակից:

223. Եվ Տիրոջ Սրբերին է պատահում նստել աշխարհի խաղք ու խայտառակության առաջ և նայել նրա գայթակղություններին, բայց ներքին մարդով նրանք զրուցում են Աստծո հետ, մինչդեռ արտաքին մարդով տեսնողներին թվում է, թե լուրդի տորդներ են այն ամենի, ինչ կատարվում է

աշխարհում: Աշխարհիկ մարդիկ ենթակա են մոլորությունների այլ ազդեցություն, որով իմաստասիրում են երկրայինը, իսկ քրիստոնյաներն ունեն ա՛յլ հոժարություն, ա՛յլ միտք: Նրանք մի ա՛յլ աշխարհի, ա՛յլ քաղաքի մարդիկ են, քանի որ Աստծո Հոգին հաղորդ է նրանց հոգիների հետ:

224. Առաքյալն ասում է՝ ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր, առանց բարկության և երկստորության (Ա Տիմ., 2, 8), քանի որ, ըստ Ավետարանի, խորհուրդները սրտից են դուրս գալիս (Մատթ., 15, 19): Այդ պատճառով էլ ձեռնամուխ եղիր աղոթելու և ուշադրություն դարձրու քո սրտին և մտքին, ցանկացիր, որպեսզի քեզնից մաքուր աղոթք հղվի առ Աստված, առավելապես հետևիր այդ դեպքում, չկա՞ արդյոք աղոթքին խոչընդոտող բան, մաքո՞ւր է արդյոք աղոթքը, արդյո՞ք քո միտքը Տիրոջով զբաղված է այնպես, ինչպես հողագործինը՝ հողագործությունը, ամուսնունը՝ կնոջով, վաճառականինը՝ առևտրով, և երբ ծունկի ես գալիս աղոթելու, արդյո՞ք ուրիշները չեն հափշտակում, կողոպտում քո խորհուրդները:

225. Գրված է՝ սիրի՛ր քո Տեր Աստծու՜ն քո ամբողջ սրտով (Բ Օր., 6, 5): Եվ դու ասում ես՝ ես սիրում եմ և ունեմ Սուրբ Հոգին: Բայց քո մեջ արդյո՞ք իսկապես կա Տիրոջ հիշողությունը, սեր և անձկություն Նրա հանդեպ: Կապվա՞ծ ես արդյոք դու զօր ու գիշեր Տիրոջը: Եթե այդպիսի սեր ունես, ապա դու մաքուր ես: Իսկ եթե չունես, ապա, երբ գալիս են երկրային հոգսերը, պիղծ և չար խորհուրդները, փնտրի՛ր պարզի՛ր, դու իրո՞ք անհողողդ ես դրանց նկատմամբ, արդյո՞ք միշտ է քո հոգին փափազում Աստծո սերը և հավատարիմ է Աստծուն: Քանզի աշխարհիկ խորհուրդները զբաղեցնում են միտքը երկրայինով և անցողիկով, շեղում են Աստծո սիրուց կամ մոռացնել են տալիս Տիրոջը: Երբեմն անգեստ մարդն սկսում է աղոթել, ծունկի է գալիս, և նրա միտքը հանգստություն է ստանում: Եվ ինչ չափով որ փորում է չարի ընդդիմադիր պատը և խորանում դրա տակ, այդքանով խորտակվում է այն, մարդը հասնում է մինչև տեսիլքների և իմաստությունների, ինչին չեն հասնում հզորները, կամ իմաստունները, կամ ճարտարները և նրանք չեն կարող հա-

սու լինել կամ իմանալ նրա մտքի նրբությունը, քանի որ նա զբաղված է Աստվածային գաղտնիքներով:

226. Երբ պղնձե կաթսայից դուրս կրակ է արված, և սկսում ես հետո փայտ ավելացնել, կաթսան տաքանում է, և մեջը ինչ կա, դա էլ եփվում և եռում է դրսում արված կրակից: Իսկ եթե մեկը ծուլանա և փայտ չավելացնի, ապա կրակը կնվազի և կարծես թե կսկսի մարել: Այդպես և շնորհն երկնային կրակն է քո մեջ: Եթե աղոթես, քո խորհուրդները հանձնես Քրիստոսի սիրուն, ապա ասես փայտ կդնես կրակին, և քո խորհուրդները կդառնան կրակ ու կընկղմվեն Աստծո սիրո մեջ: Թեկուզ և Հոգին հեռանում է և գտնվում է կարծես քեզանից դուրս, սակայն Նա և՛ քո ներսում է, և՛ հայտնվում է քեզանից դուրս: Եթե մեկն անփույթ լինի, թեկուզ չնչին չափով տրվելով կա՛մ աշխարհիկ գործերին, կա՛մ ցրվածությունը, ապա կրկին գալիս է մեղքը և պարուրում հոգին և սկսում է ճնշել մարդուն: Հոգին վերհիշում է երբեմնի հանգիստը և սկսում է ողբալ և հաճախակի տառապել:

227. Միտքը կրկին դառնում է առ Աստ-

ված, կրկին համակում է նրան երբեմնի հանգիստը, այն կրկին եռանդագին սկսում է փնտրել Աստուծուն և ասել. «Աղաչում եմ Քեզ, Տեր»: Աստիճանաբար ծավալվում է հոգին բոցավառող և հանգստացնող կրակը, ինչպես կարթն է ձկանը կամաց-կամաց դուրս քաշում ջրի խորքից: Իսկ եթե դա չլինի, և հոգին չճաշակի դառնությունն ու մահ, ապա ինչպե՞ս կարող էր տարբերել դառը քաղցրից, մահը՝ կյանքից և գոհություն հայտնել Կենարար Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյանս:

228. Ինչպես նավի վրա, եթե այն լիովին սարքավորված է, ամեն ինչ տնօրինում և ղեկավարում է նավավարը. մեկին հանդիմանում է, մյուսին ցույց է տալիս, թե ինչ անի, այդպես էլ սիրտն ունի նավավար՝ միտքը, և դատափետող խիղճը, և մեղադրող ու արդարացնող խորհուրդները: Առաքյալն ասում է՝ իրե՛նց խորհուրդների մեջ մեղադրելով կամ արդարացնելով (Հռոմ., 2, 15):

229. Եթե կառքը, սանձերը, կենդանիները և անհրաժեշտ ամեն ինչը մեկ կառավարի ձեռքում են, ապա, երբ կամենում է, կառքով սլանում է ամբողջ արագությամբ,

իսկ երբ կամենա, կանգնեցնում է կառքը, և դարձյալ՝ ուր ուզենա, կուղղի, այդտեղով էլ կանցնի, քանի որ ողջ կառքը կառավարի իշխանության տակ է: Այդպես և սիրտն ունի շատ բնական խորհուրդներ, որոնք սերտորեն կապված են նրա հետ, իսկ միտքը և խիղճը սրտին տալիս են խրատ և ուղղություն և քննեցնում են սրտում ծագող բնական խորհուրդները, քանի որ հոգին շատ բաղկացություն ունի, թեև այն նաև մեկ է:

230. Լծելով նժույգները, մարդիկ վարում են մարտակառքերը և սլանում են մեկը մյուսի վրա: Յուրաքանչյուրը ցանկանում է ցած գլորել և հաղթել հակառակորդին: Այդպես և ճգնավորների սիրտն է իրենից ներկայացնում ասպարեզ. այնտեղ չար ոգիները մարտնչում են հոգու հետ, իսկ Աստված և Հրեշտակները դիտում են սխրանքները: Դրանից զատ, ամեն ժամ բազում նոր խորհուրդներ նաև հոգուց են ծագում, և սերմանվում են խորհուրդներ չարից: Քանզի հոգին ունի բազում գաղտնի խորհուրդներ, և այդ պահին արարում և ծնում է դրանք: Չարն էլ ունի բազում խորհուրդներ ու նախաձեռնություններ և ամեն ժամ նա ծնում

է նոր խորհուրդներ հոգու դեմ: Քանի որ միտքը հեծյալ է, նա լծում է հոգու մարտակառքը՝ պահելով խորհուրդների սանձերը, և սլանում է սատանայի մարտակառքի վրա, քանի որ սատանան պատրաստել է այն հոգու դեմ:

ը) Դրանից երևում է, որ մեղքի և թշնամու պատերազմը այստեղ էլ չի դադարում: Այստեղից էլ անդուլ պայքարը սրտի խորհուրդների և մղումների հետ: Այստեղ այն ավելի նուրբ է:

231. Շատերը, թեև հաղորդ են շնորհին, չգիտեն, որ կողոպտված են մեղքի կողմից: Ինչպես, եթե մի տան մեջ ապրում են մի երիտասարդ կին, ինչպես նաև մի երիտասարդ տղամարդ, և կինը, գայթակղվելով տղամարդու կողմից, ի վերջո համաձայնություն մեջ է մտնում նրա հետ, շնանում է և դառնում արհամարհելի, այդպես և մեղքի սարսափելի օձը ապրում է հոգու հետ, գայթակղում և համոզում է նրան, և եթե այն համաձայնվում է, անմարմին հոգին կապի մեջ է մտնում անմարմին ոգու՝ չարության հետ, այսինքն՝ հոգին կապի մեջ է մտնում ոգու հետ, և նա, ով ընդունում է իր մեջ չարի խորհուրդը և համաձայնվում է դրա հետ,

շնանում է իր սրտում: Այդ պատճառով էլ քո սխրանքի չափն այն է, որպեսզի չշնանաս մտքերի մեջ, այլ դիմադրես մտքով և ներքնապես կռիվ մղես ախտերի դեմ և չենթարկվես ու չհաճոյանաս դրանց խորհուրդներում: Եվ եթե Տերը գտնի քո մեջ այդ պատրաստակամությունը, ապա վերջին օրը կընդունի քեզ իր Արքայություն:

232. Մարդն այնպիսի բնություն ունի, որ դեպի բարին շրջվել կարող է նաև նա, ով արատների խորքում է և ծառայում է մեղքին, իսկ նա, ով կապված է Սուրբ Հոգով և արբեցած երկնայինով, իշխանություն ունի շրջվելու դեպի չարը: Եվ հենց նրանք, ովքեր ճաշակել են Աստծո շնորհը և դարձել արդեն Հոգու հաղորդակիցներ, եթե զգուշություն չցուցաբերեն, հանգչում են և դառնում են ավելի վատթար, քան որպիսին եղել են աշխարհում ապրելիս: Եվ դա լինում է ոչ այն պատճառով, որ Աստված փոփոխական է և տկար, կամ Հոգին մարում է, այլ այն պատճառով, որ մարդիկ իրենք չեն միաբանվել շնորհին, ինչի պատճառով էլ խոտորվում են և ընկնում հազար ու մի չարիքի մեջ:

233. Ոմանք, արդեն իսկ ճաշակած լինելով Աստծո քաղցրությունը, իրենց ներսում դեռ ենթակա են հակառակորդի ազդեցությանը և անփորձ լինելով՝ զարմանում են, որ Աստծո այցելությունից հետո էլ չար խորհուրդներն ազդեցություն են թողնում նաև քրիստոնեական խորհուրդների ժամանակ: Բայց կոփվածները նման վիճակներում չեն զարմանում դրանից, ինչպես փորձառու հողագործները երկարատև վարժվածությամբ, երբ բերրիություն է լինում, չեն մնում լիովին հոգսերից ազատ, այլ սպասում են և՛ սովի, և՛ սակավության, և հակառակը, երբ վրա է հասնում սովը, կամ սակավությունը, ամբողջովին չեն կորցնում հույսը, իմանալով, որ եղանակները փոփոխվում են: Այդպես և հոգևորի պարագայում. երբ հոգին ենթարկվում է զանազան փորձությունների, նա չի զարմանում և չի հուսահատվում, քանզի գիտի, որ Աստծո թողտվությամբ է չարին թույլ տրվում փորձել և պատժել նրան, և հակառակը, իր մեծ հարստությամբ և խաղաղությամբ հանդերձ, չի անհոգանում, այլ սպասում է փոփոխության:

234. Երբ մարդը շնորհի խորքում է և ճո-

խացած է նրանով, այդ ժամանակ էլ դեռ նրա մեջ կա ախտերի թուլյնը: Բայց նրա մեջ կա նաև պաշտպան, որն օգնում է նրան: Եթե աղբյուրը չի ցամաքել, ապա նրան շրջապատող տեղանքը լինում է թաց և խոնավ: Իսկ հենց որ սկսվում է տապը, չորանում են և՛ աղբյուրը, և՛ մերձակա տեղանքը: Այդպես է և Աստծո ծառաների մեջ, որոնցում հորդառատ է շնորհը, որը չորացնում է ինչպես չարից սերմանածը, այնպես էլ բնական ցանկությունները, քանզի արդ Աստծո մարդիկ բարձր են առաջին Ադամից:

235. Ոմանք այնչափ են խաղաղվում Աստծո շնորհով, որ դառնում են իրենց մեջ եղող արատից ավելի զորեղ, և աղոթքի մեջ լինելով ու մեծագույն հանգիստ վայելելով Աստծո առաջ, մեկ էլ տեսար մի այլ ժամի ընկնում են չար խորհուրդների ազդեցության տակ և հափշտակվում են մեղքի կողմից, թեև դեռ գտնվում են Աստծո շնորհի մեջ: Բայց թեթևամիտ և անգետ մարդիկ, երբ նրանց մեջ մասնակիորեն գործում է շնորհը, կարծում են, որ իրենց մեջ այլևս մեղք չկա, իսկ ողջամիտներն ու խելամիտները չեն կարող ուրանալ, որ իրենց մեջ

Աստծո շնորհն ունենալով հանդերձ, ենթարկված չեն եղել ամոթալի և անմաքուր խորհուրդների ազդեցութեան:

236. Եղբայրների մեջ հաճախակի տեսնում ենք, որ ոմանք ձեռք էին բերել մեծ ուրախությունն ու շնորհ և հինգ կամ վեց տարվա ընթացքում ասում էին իրենց մասին. «Մեր մեջ խամրել է ցանկասիրությունը», և դրանից հետո, երբ իրենց համարել են լիովին ազատագրված հեշտասիրությունից, նրանցում թաքնված արատը արթնացել է և նրանք բռնկվել են ցանկասիրությամբ, ինչից ապշել են և ասել. «Այսքան երկար ժամանակից հետո մեր մեջ որտեղի՞ց բարձրացավ այդպիսի ախտը»: Այդ պատճառով էլ ոչ մի առողջ դատող մարդ չի համարձակվի ասել. «Քանի որ շնորհն առկա է իմ մեջ, ապա ես կատարելապես ազատ եմ մեղքից»: Հակառակ դրա, մտքի վրա ազդում են երկու անձ: Անփորձները գործնականում, հենց որ թեկուզ չնչին չափով ներգործում է նրանց վրա շնորհը, մտածում են, որ արդեն հաղթանակել են և դարձել են կատարյալ քրիստոնյաներ: Իսկ իմ կարծիքով, գործը իրականում այսպես է լինում. երբ մաքուր երկն-

քում փայլում է արևը, և ամպերը, վրա հասնելով, և՛ ծածկում են նրան, և՛ խտացնում օդը, մնալով ամպերի տակ՝ արևը ո՛չ իր լույսն է կորցնում, ո՛չ էլ իր էությունը փոխում: Այդպես է լինում նաև նրանց մեջ, ովքեր չեն հասել կատարյալ մաքրութեան: Ե՛վ Աստծո շնորհի մեջ լինելով, և՛ հոգու խորքում դեռևս մեղքով բռնված՝ նրանք իրենց մեջ ունենում են և՛ բնական մղումներ, և՛ խորհուրդներ, որոնք զորացնում են նրանց առ Աստված ձգտելիս, թեև դեռ լիովին չեն հաստատվել բարու մեջ:

237. Այդպես, ընդհակառակը, նաև նրանք, ովքեր հոգու խորքում բարու կողմն են ընտրել, այսինքն՝ նրանցում գերիշխում է շնորհը, մնում են դեռ ստրուկներ և գերիներ չար խորհուրդների և բռնում են արատի կողմը: Այդ պատճառով էլ առավել խոհեմություն է հարկավոր, որպեսզի մարդը փորձով հասու լինի, թե իրականում ինչպես է դա տեղի ունենում: Ասում եմ քեզ, որ անգամ Առաքյալները, Մխիթարիչն ունենալով իրենց մեջ, լիակատար անհոգություն չունեին: Նրանցում ուրախութեան և խնդութեան պահին միաժամանակ կար նաև սարսափ

և ահ ու դող հենց շնորհի ազդեցութեամբ և ոչ թե արատի կողմից. ինքը շնորհը զգաստացնում էր նրանց, որպեսզի նրանք չխտորվեին նույնիսկ չնչին բաներում: Ինչպես քարի կտորը պատին շարտողը դրան ամենևին չի վնասի կամ էլ տեղից չի շարժի, կամ էլ զրահակիրի վրա նետ արձակողը չի վնասի երկաթը, ոչ էլ մարմինը, քանի որ զրահը հետ է մղում նետը, այդպես և, եթե Առաքյալներին էլ են մոտեցել ինչ-ինչ արատներ, ապա չեն վնասել նրանց, քանի որ զգեստավորված էին Քրիստոսի կատարյալ գորութեամբ և իրենք, կատարյալ լինելով, ազատ էին արդար գործեր գործելու: Թեև ումանք պնդում են, որ շնորհի առկայութեան դեպքում հոգին այլևս ոչ մի բանի մասին չպետք է հոգա, սակայն Աստված կատարյալներից էլ է պահանջում Հոգուն ծառայելու կամք ի սրտե, որպեսզի գործեն համաձայն շնորհի: Քանզի Առաքյալն ասում է՝ սի՛ հանգրեք Հոգին (Ա թեսաղ., 5, 19):

238. Տեսանելի աշխարհում երկիրն ինքն իրենից ավելի հաճախ անեցնում է տատասկներ. հողագործը փորում է հողը, խնամքով մշակում և ցանում է, սակայն

փշերը և չցանվածները անում ու բազմապատկվում են, քանի որ Ադամին, զանցառութեան պատճառով ասված է՝ փուշ ու տատասկ թող անեցնի քեզ համար երկիրը (Ծննդ., 3, 18): Հողագործը դարձյալ չարչարվում է, քաղհանում է տատասկները, բայց դրանք էլ ավելի են բազմապատկվում: Հասկացիր դա հոգևորապես. զանցառութեան պատճառով սրտի երկիրն անեցնում է փուշ ու տատասկ: Մարդը մշակում է հողը, չարչարվում է, իսկ չար ոգիների փշերը շարունակում են ծլել: Հետո ինքը՝ Սուրբ Հոգին, աջակից է լինում մարդկային տկարութեանը և Տերը սրտի այդ հողում զետեղում է երկնային սերմը և մշակում է: Եվ երբ զցվում է Տիրոջ սերմը, դեռևս ծլում են փշեր և տատասկներ: Տերը՝ ինքը և մարդը կրկին մշակում են հոգու հողը, և դեռ էլի ծլում և հատած արմատից այնտեղ վերընձյուղվում են բազում չար ոգիներ և փշեր, մինչև չի գալիս ամառը, չի բազմապատկվում շնորհը, և փշերը չեն չորանում արևի տապից:

239. Չնայած արատը հենց բնութեան մեջ է, սակայն միայն այնտեղ է գերիշխում, որտեղ արոտատեղ է գտնում իր համար: Ցորե-

նի նուրբ ցողունները կարող են խեղդվել ուրոմով: Սակայն, երբ ամառվա գալուսն պես բույսերը չորանում են, այդ ժամանակ ուրոմն ամենևին չի վնասի ցորենին: Թող լինի երեսուն չափ մաքուր ցորեն, բայց դրա մեջ, ասենք, կա մի քանի բուռ խառնուրդ և ուրոմ, այդ դեպքում ուրոմն աննշան կլինի ցորենի առատության մեջ: Այդպես և շնորհի պարագայում. երբ Աստծո պարգևը և շնորհը բազմապատկվում են մարդու մեջ և նա հարստանում է Տիրոջով, այդժամ ախտերը, թեև մասամբ մնում էլ են մարդու մեջ, չեն կարող նրան վնասել և նրա վրա իշխանություն կամ էլ նրա մեջ ինչ-որ մաս ունենալ: Քանզի դրա համար է Տիրոջ գալուստը և տնօրինությունը, որպեսզի մեզ՝ ստրկացածներին, մեղավորներին և ախտերին հնազանդվածներին, ազատի և դարձնի մահին և մեղքին հաղթողներ:

240. Առաքյալները կարող էին մեղանչել արդյոք, եթե ցանկանային, կամ շնորհը հզոր էր կամքի մեջ: Մեղանչել նրանք չէին կարող, քանի որ, լինելով լույսի մեջ և ունենալով նման շնորհ՝ չհպարտացան: Ընդամին, չենք ասում, թե շնորհը նրանց մեջ

հզոր չէր, պնդում ենք, որ կատարյալ հոգևոր այրերին շնորհը թույլ է տալիս նաև ունենալ իրենց կամեցողությունը և հնարավորությունը անելու այն, ինչ ցանկանում են, և ընտրելու, ինչը որ ցանկանում են: Եվ մարդկային բնությունն ինքն էլ, լինելով տկար, հնարավորություն ունի շեղվել իր հետ ապրող բարուց: Ինչպես զենք ու զրահով լիակատար սպառազինվածները ներքուստ բերված են անվտանգության վիճակի և թշնամիները չեն հարձակվում նրանց վրա, իսկ եթե հարձակվում են, ապա նրանց կամքն է արդեն զենք գործածել, դիմազրավել թշնամիներին, պայքարի մեջ մտնել և հաղթել, կամ էլ զինված լինելով, չկռվել թշնամիների հետ, այլ ուրախանալ նրանց հետ և հաշտության մեջ լինել: Այդպես և քրիստոնյաները, լինելով հանդերձավորված կատարյալ զորությունք և ունենալով իրենց հետ երկնային զենքը, եթե ցանկանում են՝ տրվում են սատանայի քմահաճուքներին և նրա հետ հաշտության մեջ են լինում, և չեն կռվում, քանի որ բնությունը դուրափոփոխ է և մարդը, իր մեջ մնացած քմահաճության պատճառով, եթե ուզենա՝ կղառ-

նա Աստծո որդի, կամ էլ՝ կորստյան որդի:

241. Սպասո՞ւմ են արդյոք կատարյալներին վիշտ կամ պատերազմ: Թե՞ նրանք ամբողջովին անհոգ են: Չկա մարդ, որի վրա թշնամին դադարի հարձակվել: Սատանան անողորմ և մարդատյաց է, այդ պատճառով էլ չի ծուլանում հարձակվել ցանկացած մարդու վրա, սակայն կարծես թե նա ոչ բոլորի վրա է հարձակվում միատեսակ ուժով: Ոմանք ուժեղ պատերազմի և մեղքի տվայտանքների մեջ են, բայց ամրանում և իմաստնանում են կռիվներում, արհամարհելով հակառակ ուժը, և նրանց վտանգ չի սպառնում այդ առումով, քանի որ անսասան են և վստահ են իրենց փրկության գործում, քանզի, հաճախակի վարժվելով, փորձ են ձեռք բերել չարի դեմ վարած պատերազմում, և Աստված ինքը նրանց հետ է: Աստծով են առաջնորդվում նրանք և խաղաղվում: Իսկ ուրիշները՝ դեռ չվարժված, եթե մեկ անգամ ընկնում են վշտի մեջ և վրա է հասնում պատերազմը, իսկույն ևեթ փորձանքի և կորստյան մեջ են ընկնում:

242. Ոմանք պարսպվելով և իրենց մեջ եղող Աստծո շնորհի ուժգին ներգործությամբ

իրենց անդամները այնքան լուսավորված կարծեցին, որ իրենց մասին եզրակացրեցին, թե իբր քրիստոնեություն մեջ այլևս տեղ չկա ցանկության համար, այլ ձեռք է բերվում ողջախոհ և մաքուր միտք, և որ ներքին մարդն արդեն ճախրում է Աստվածայինում և երկնայինում: Այդ պատճառով էլ այդպիսի մարդը մտածում է, որ, անտարակույս, հասել է կատարելության աստիճանին, և երբ համարում է, որ անվտանգ նավահանգիստ է մտել, ալիքները բարձրանում են նրա վրա, և նա իրեն կրկին տեսնում է բաց ծովում, քչվել է այնտեղ, որտեղ միայն ջուր է ու երկինք և անխուսափելի մահ: Այդպես էլ մեր մեջ մտած մեղքը ծնում է ամեն տեսակ չար ցանկություն: Սակայն այդպիսիները, կրկին արժանանալով դույզն ինչ շնորհի, և, այսպես ասած, ծովի ամբողջ խորքերից հագիվ ընդունելով չնչին մի կաթիլ, հենց դրանում են գտնում ամեն ժամ և ամեն օր կատարվող հրաշքը, ինչի պատճառով այսպիսի նոր ու անսովոր Աստվածային ներգործության ենթարկվողը ապշում է և զարմանում է, թե ինչպես է ինքը խաբվել: Վերջապես շնորհը՝ Աստվածային և երկնա-

յին, լուսավորում, առաջնորդում, խաղաղեցնում է նրան, ամեն ինչ կարգավորում է ի բարին:

243. Գործի՛ր ներքին մարդու մեջ կատարվող արդարութուն, որտեղ դրված է Քրիստոսի զոհասեղանն անեղծ սրբարանի հետ մեկտեղ, որպեսզի քո խղճի վկայութունը պարծենա մեռած գործերից քո խիղճը մաքրող Քրիստոսի խաչով, և կծառայես Աստծուն քո հոգով, կիմանաս՝ Ում ես երկրպագում, ըստ ասվածի՝ մեք երկրպագում ենք Նրան, ում գիտեմք (Հովհ., 4, 22): Ապավինի՛ր քեզ առաջնորդող Աստծուն, թող քո հոգին մտնի Աստծո հետ հաղորդության մեջ, ինչպես հարսը փեսայի հետ: Քանզի ասված է՝ Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ (Եփես., 5, 32) և անարատ հոգու վերաբերյալ:

244. Պատկերացրու մի այգի, որտեղ պտղատու ծառեր և ուրիշ բուրումնավետ բույսեր են աճում: Այգին ամբողջովին հիանալի կերպով մշակված և զարդարված է, իսկ պահպանության համար, ցանկապատի փոխարեն, շրջափակված է ցածր պատով: Պատահականության բերումով այդտեղով

արագահոս գետ է հոսում: Եթե ջուրը թեկուզ թեթևակի խփվի պատերին, ապա կվնասի դրա հիմքը, իր համար անցատեղ կգտնի, քիչ-քիչ ամբողջովին կխարխլի հիմքը և լցվելով այգի, կջարդի ու արմատախիլ կանի բոլոր բույսերը, կոչնչացնի ողջ աշխատանքը և այգին կդարձնի անպտուղ: Այդպես լինում է և մարդկային սրտի հետ: Նրա մեջ կան սքանչելի խորհուրդներ, սակայն սիրտը պարուրում են նաև մեղքի հորձանքները՝ պատրաստ նրան ցած գլորելու և իրենց կողմը գրավելու: Եվ եթե միտքը, թեկուզ դույզն ինչ անկշռադատ է և անձնատուր է լինում անմաքուր խորհուրդների, պատրող ոգիները իրենց համար այնտեղ ահա արդեն արոտավայր գտան, ներս խուժեցին և ավերեցին ողջ գեղեցկութունները և ոչնչի վերածեցին բարի խորհուրդներն ու ամայացրին հոգին:

թ) Բացի այդ պատերազմից, վրա է հասնում մյուսը՝ արտաքինը: Հենց որ Աստծո շնորհը սկսում է ի հայտ գալ մշակի սրտում, դրա հետ մեկտեղ ուրիշների կողմից անբարյացկամորեն սկսվում են հարձակումները նրա վրա: Ներսից արտաքսված թշնամին զինվում է դրսից: Դա

քրիստոնյայի համար անխուսափելի պայման դարձավ հոգևոր կատարելության ճանապարհին:

245. Աստծո մարդիկ պետք է իրենց նախապատրաստեն պատերազմի և սխրանքների: Ինչպես խիզախ պատանին է դիմանում պայքարի և իրեն հասցված հարվածներին պատասխանում է հարվածներով, այդպես և քրիստոնյաները պետք է կարողանան դիմանալ վշտերին, և՛ արտաքին, և՛ ներքին պատերազմներին, որպեսզի հարվածներ ընդունելով, հաղթեն համբերությամբ: Այսպիսին է քրիստոնեությունը ճանապարհը: Որտեղ Սուրբ Հոգին է, այնտեղ ստվերի նման հետևում են հալածանքն ու պատերազմը: Տեսնո՞ւմ ես, թե Մարգարեներն ինչպես, չնայած նրանց մեջ գործում էր Հոգին, մշտապես հալածվեցին ցեղակիցներից: Տեսնո՞ւմ ես, ինչպես Տերը, Ով ճանապարհն է և ճշմարտությունը, հալածվեց ոչ թե ուրիշ ժողովրդից, այլ՝ յուրայիններից: Իր ցեղը՝ իսրայելցիները, հալածեցին և խաչեցին Նրան: Այդպես եղավ նաև Առաքյալների հետ, քանի որ Խաչի ժամանակներից սկսած եկավ Մխիթարիչը՝ Հոգին և բնակվեց քրիստոն-

յաների մեջ և հրեաներից ոչ մեկն արդեն չհալածվեց, այլ միայն քրիստոնյաները դարձան մարտիրոսներ: Այդ պատճառով էլ նրանք չպետք է զարմանան դրանից: Ըշմարտությունը անհրաժեշտաբար պետք է հալածվի:

246. Պատահական չէ և այն, ինչ գրված է Հոբի մասին, թե ինչպես սատանան նրան խնդրեց իր համար, քանի որ ոչինչ չէր կարող անել ինքնուրույն, առանց թողտվություն: Ի՞նչ է ասում բանասերկուն Տիրոջը: Իմ ձեռքը տուր նրան, միթե ձրի՞ք է պաշտում Քեզ (Հոբ, 1, 11): Այդպես է և այժմ. և՛ Հոբն է նույնը, և՛ Աստված է Նույնը, և՛ բանասերկուն է նույնը: Այն ժամանակ, երբ Հոբը տեսնում էր Աստծո օգնությունն իրեն, շնորհով ջերմեռանդ էր և նախանձախնդիր, սատանան խնդրում է իրեն տալ Հոբին և ասում է Տիրոջը. «Քանի որ օգնում ես և պաշտպանում նրան, ծառայում է Քեզ: Թո՞ղ նրան և հանձնի՛ր ինձ, միթե ձրի՞ք է պաշտում Քեզ»: Ի վերջո, կարծես թե հենց նրա համար, որ Հոգին մխիթարվում է, շնորհը հեռանում է նրանից, և Հոգին տարվում է փորձությունների: Այդ պատճառով էլ

գալիս է բանսարկուն և հազարավոր չարիք է պատճառում նրան. անհուսուլթյուն, հուսալքուլթյուն, վհատուլթյուն, չար խորհուրդներ, և խորտակում է հոգին, որպեսզի թուլացնի նրան և հեռու պահի Աստծուն ապավինելուց: Ե՛վ պատուհասների, և՛ վշտերի մեջ խելամիտ անձը չի կորցնում հույսը, այլ կրկին ձեռք է բերում, ինչն ունեք, և ինչ հարվածներ էլ հասցվի նրան, հազարավոր փորձուլթյունների մեջ, ամեն ինչին համբերելով, ասում է. «Եթե մեռնեմ էլ, չեմ թողնի Նրան»:

247. Եվ բոլոր արդարները, գնալով նեղ և անձուկ ճանապարհով, մինչև վերջ հաճո եղան Աստծուն: Աբրահամը հարուստ էր Աստծով, իսկ աշխարհի համեմատուլթյամբ իրեն անվանեց հող և մոխիր (Ծննդ., 18, 27): Եվ Դավիթն է իր մասին ասում՝ բայց ես որդեմ և ոչ թե մարդ, մարդկանց համար նախատինք եմ և անարգանք՝ ժողովուրդներից (Սաղմ., 21, 7): Նմանապես բոլոր Առաքյալներն ու Մարգարեները սաստիկ չարչարվեցին, կշտամբվեցին: Ինքը Տերը, որ ճանապարհն է և Աստված, իր համար չեկավ, այլ՝ հանուն քեզ, որպեսզի քեզ համար դառնա ամենայն

բարիի օրինակ, նայի՛ր՝ ինչ խոնարհուլթյամբ եկավ. Աստված, Աստծո Որդին, Թագավորը և Թագավորի Որդին ծառայի կերպարանք առավ: Նա տալիս է դարմանող բժշկուլթյուն և բուժում է խոցոտվածներին, իսկ արտաքուստ կարծես թե խոցոտվածներից մեկն է:

248. Բայց մի՛ արհամարհիր Աստվածային մեծուլթյունը, երբ Նրան տեսնում ես արտաքուստ խոնարհված և կարծես թե նման մեզանից մեկին: Նա այդպես հայտնվեց հանուն մեզ, ոչ թե հանուն իրեն: Խորհի՛ր, արդյո՞ք Նա բոլորից առավել չէր նվաստացված այն պահին, երբ աղաղակում էին՝ խաչի՛ր, խաչի՛ր Նրան, և խոնվեց ամբոխը: Ինչպես աշխարհում, եթե մի չարագործի դատավճիռ է հրապարակվում Իշխանի կողմից, ապա ամբողջ ժողովուրդը գարշում է նրանից և արհամարհում է նրան, այդպես և Տերը խաչելուլթյան ժամանակ, որպես մահվան դատապարտված մարդ, փարիսեցիներից արհամարհվեց: Եվ երբ թքեցին Նրա դեմքին, Նրա գլխին փշե պսակ դրեցին, ապտակեցին, մի՞թե դա չանցավ նվաստացման ամեն մի սահման: Քանզի գրված է՝ Թիկուճքս

հարվածների տվեցի, ծնոտներս՝ապտակի, և երեսս շուտ չտվի Ասիստիոսից ու թքից (Եսայի, 50, 6): Եթե Աստված կրեց այդչափ անարգանք, չարչարանք և նվաստացում, ապա ինչքան էլ որ դու քեզ խոնարհեցնես, բնությամբ տիրմդ և մահկանացուդ, չես անի ոչինչ քո Տիրոջ նման: Հանուն քեզ Աստված խոնարհեցրեց Իրեն: Իսկ դու նաև հանուն քեզ չես խոնարհվում, այլ մեծամտանում ես և գոռոզանում: Նա եկավ Իր վրա վերցնելու վշտերն ու չարչարանքները, իսկ քեզ տալու Իր խաղաղությունը: Իսկ դու չես ցանկանում դժվարություններ կրել և տառապել, որպեսզի դրա միջոցով կարողանաս բուժել քո խոցերը: Փա՛ռք Նրա չարչարանքին և համբերատարությանը հավիտյանս:

249. Եթե Աստված երկրի վրա ընթացավ այդպիսի ճանապարհով, ապա և դու պետք է դառնաս Նրան ընդօրինակող: Այդպես են ընթացել և՛ Առաքյալները, և՛ Մարգարեները: Եվ մենք, եթե ցանկանում ենք բարձրացած լինել Տիրոջ և Առաքյալների հիմքի վրա, պետք է դառնանք նրանց ընդօրինակողներ: Քանզի Առաքյալը Սուրբ Հոգով ասում է՝ արդ, աղաչում եմ ձեզ, Ամսնվեցե՛ք ինձ

(Ա Կորնթ., 4, 16): Եթե սիրում ես դու մարդկային փառքը, ցանկանում ես, որպեսզի խոնարհվեն քո առաջ, քեզ հանգիստ ես փնտրում, ապա շեղվել ես ճանապարհից: Քեզ պետք է խաչվել Խաչվածի հետ, տառապել Տառապածի հետ, որպեսզի դրանից հետո նաև փառավորվես Փառավորվածի հետ (Հռոմ., 8, 17): Քանզի հարսնացուին անհրաժեշտ է տառապել Փեսայի հետ և դրա միջոցով դառնալ Քրիստոսի հաղողակիցը և ժառանգակիցը: Եվ ոչ մեկին թույլ չի տրված առանց տառապանքների, հարթ, ոչ լայն ու դյուրին ճանապարհով մտնել սրբերի քաղաքը, հանգստանալ և թագավորել Թագավորի հետ անվերջանալի դարեր:

250. Սատանային ինչ որ հայտնի չափո՞վ է թույլ տրված մեզ վրա հարձակվելու, թե՞ ինչքան ուզենա: Նրա թիրախը ոչ միայն քրիստոնյաներն են, այլև՝ կռապաշտները և ողջ աշխարհը: Այդ պատճառով էլ, եթե նրան թույլ տրված լիներ հարձակվել ինչքան ուզում է, ապա կբնաջնջեր բոլորին: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ դա նրա գործն է և այդպիսին է նրա կամքը: Սակայն ինչպես բրուտը, երբ դնում է անոթները կրակի

մեջ, վառարանը չափով է բորբոքում, և ոչ չափից շատ, որպեսզի հարկ եղածից ավելի երկար ժամանակ թրծված անոթները չճաքեն, և ոչ էլ չափից քիչ, որպեսզի չթրծված մնալով, իզուր չփչանան: Այդպես և արծաթյա և ոսկյա իրեր պատրաստողն է դրանք կրակի մեջ դնում չափով: Իսկ եթե թեժացնի կրակը, ապա ոսկին և արծաթը կհալվեն, կդառնան հեղուկ և կկորչեն: Մարդկային միտքն էլ է ընդունակ համակշռել բեռները՝ ըստ բեռնակիր կենդանիների ուժի, կամ ուղտի, կամ էլ ուրիշ որևէ կենդանու, թե հատկապես ինչպիսի ծանրություն կարող է տանել: Ապա առավել ևս Աստված, Ով գիտի մարդկային անոթների ամրությունը, հակառակ ուժին ըստ չափի է թուլյատրում գործելու:

Ժա) Այս ամենը համբերատար կերպով տանելով և ոչ մի բանում չզիջելով թշնամուն, հոգին ավելի ու ավելի է մաքրվում և ընդլայնում է Սուրբ Դոգու շնորհի հուժկու ներգործության ոլորտը, ինչը, ի վերջո, ի հայտ է գալիս մտքի պայծառացումներում, բարոյական բացառիկ բերկրալի հոգեվիճակներում, տեսիլքներում և առաջնորդություններում: Զգացվում է, որ հոգին մոտենում է կատարելության:

251. Եթե մեկը սիրում է Աստծուն, ապա Աստված էլ իր սերն է հայտնում նրան, ով մի անգամ հավատ ընծայեց Աստծուն, դրան հավելվում է երկնային հավատը, և մարդը դառնում է ընտրյալ: Այդ պատճառով էլ, երբ դու քո անդամներից Նրան նվեր ես բերում, այպես էլ ինքն իր սեփական անդամներից բաժին կհանի քո հոգուն, որպեսզի դու ամեն ինչ գործես, և՛ սիրես, և՛ աղոթես մաքուր կերպով:

252. Մարիամը թողեց ամեն գործ, նստեց Տիրոջ ոտքերի առաջ և ամբողջ օրը օրհնում էր Աստծուն: Տեսնո՞ւմ ես, ոտքերի առաջ նստելը զերազանց սեր է: Բայց որպեսզի պայծառորեն շողշողա Աստծո խոսքը, դարձյալ լսի՛ր:

Եթե մեկը սիրում է Հիսուսին և Նրան ունկնդրում է ինչպես հարկն է և ոչ թե ունկնդրում է պարզապես, այլ՝ սիրով լեցուն, ապա Աստված էլ արդեն կամենում է այդ հոգուն հատուցել ինչ-որ բանով այդ սիրո համար, չնայած մարդը չգիտի, թե ինքը ինչ կստանա, կամ ինչ չափով Աստված կվարձատրի հոգին: Քանզի նաև իրեն սիրող և իր ոտքերի մոտ նստող Մարիամին

պարզապես ոչ թե պարզեւ է տվել, այլ Իր էությունից է շնորհել Նա ինչ-որ նվիրական գորություն: Այն խոսքերն իսկ, որոնք Աստված խաղաղությամբ Իր ներսից ասում էր Մարիամին, Հոգի էին և գորություն: Այդ խոսքերը թափանցեցին սրտի մեջ, դարձան շունչ՝ շնչի մեջ, Հոգի՝ Հոգու մեջ, և Աստվածային գորությունը լցվեց նրա սիրտը, քանզի այդ գորությունը որտեղ թեւածում է, այնտեղ անհրաժեշտաբար դառնում է և ներկա լինում որպես անկապտելի վաստակ: Այդ պատճառով էլ Տերը, իմանալով, թե ինչ շնորհեց նրան, ասաց՝ Մարիամը ընտրել է լավ սաւր (Ղուկ., 10, 42): Սակայն ժամանակի ընթացքում նաև այն, ինչ արեց Մարթան՝ ջանասիրաբար ծառայություն մատուցելով, նրան էլ հասցրեց այդ նույն պարզեւին, քանի որ նա էլ ընդունեց Աստծո գորությունն իր Հոգու մեջ:

253. Ի՞նչ կա զարմանալու, եթե դեպի Տերը եկողները և Նրան կապվածները մարմնապես գորություն ստացան: Երբեմն Առաքյալները բարբառում էին Բանը և Սուրբ Հոգին իջնում էր հավատացյալների վրա (Գործք., 10, 44): Կոռնելիոսը Աստծո խոս-

քից գորություն ստացավ: Առավել ևս, երբ Տերը խոսում էր Մարիամին, կամ էլ Զաքեոսին, կամ էլ մեղավոր կնոջը, որն արձակած մագերով սրբում էր Տիրոջ ոտքերը, կամ էլ սամարացի կնոջը, կամ ավագակին, այդժամ հայտնվեց գորությունը, և Սուրբ Հոգին նրանց Հոգիների հետ միության մեջ մտավ: Եվ արդ Տիրոջ սիրողները, ամեն ինչ թողած և մշտապես աղոթքի մեջ լինելով, ծածկաբար սովորում են այն, ինչը չգիտեին: Ծշմարտությունն Ինքն իրենց իսկ հոժարությամբ բացվում է նրանց և սովորեցնում նրանց. Ես եմ Ծշմարտությունը (Հովհ., 14, 6): Առաքյալներն իրենք, մինչև խաչելությունը լինելով Տիրոջ հետ, ակնառես եղան մեծագույն հրաշքների, թե ինչպես մաքրվեցին բորոտները և հարություն առան մեռելները, բայց չգիտեին, թե ինչպես է աստվածային գորությունը ներկա լինում և գործում սրտի մեջ, չգիտեին, որ իրենք էլ կվերածնվեն Հոգով, միության մեջ կմտնեն երկնային Հոգու հետ և կդառնան նոր արարած: Նրանք սիրում էին Տիրոջը հանուն Նրա կատարած հրաշքների: Ի վերջո, Տերն ասաց նրանց. «Ինչո՞ւ եք զարմանում հրաշքներից:

Ես ձեզ տալիս եմ մեծ ժառանգութիւն, որը չունի ամբողջ աշխարհը»:

254. Նրանց համար զարմանալի էին նաև Տիրոջ խոսքերը, քանի դեռ Նա հարուստ չէր առել մեռելներից և հանուն մեզ մարմինը երկինք չէր բարձրացրել: Եվ այդքան նրանց վրա իջավ Մխիթարիչ Հոգին և նրանց հոգիների հետ միութեան մեջ մտավ: Ծշմարտութիւնն ինքը հայտնում է Իրեն հավատարիմ հոգիներին, և երկնային մարդը գալիս է քո մարդու մոտ և նրանց միջև լինում է միասնական հաղորդութիւն: Այդ պատճառով էլ նրանց, ովքեր ծառայութեան մեջ են և ամեն ինչ անում են եռանդազգի, հավատի նախանձախնդրութիւնից, առ Աստված ունեցած սիրուց, հենց դա էլ ժամանակի ընթացքում նրանց հասցնում է ծշմարտութեան գիտութեանը, որովհետև Տերը հայտնում է Իրեն նրանց հոգիներին և ուսուցանում Սուրբ Հոգու համագոյութիւնը:

255. Ասված է՝ ճաշակեցե՛ք և տեսե՛ք, թե որքան քաղցր է Տերը (Սաղմ., 33, 9): Այդ ճաշակումը, անշուշտ, սրտում ծառայութիւն կատարող Հոգու գործող գորութիւնն է: Քան-

զի նրանք, ովքեր լույսի և Սուրբ Հոգու Նոր Ուխտի ծառայութեան որդիներ են՝ մարդկանցից ոչինչ չեն սովորում, ինչպես Աստուծոց սովորողները: Ծնորհն ինքն է գրում նրանց սրտերում Հոգու օրենքները: Այդ պատճառով էլ նրանք պետք է իրենց համար հավաստիացում գտնեն ոչ միայն Գրվածքներում՝ թանաքով գրված, այլև սրտի տախտակների վրա է Աստուծո շնորհը գրում հոգու օրենքները և երկնային խորհուրդները, քանզի սիրտը տիրական և արքայական է մարմնական ողջ հոգավորութեան մեջ: Եվ երբ շնորհը տիրում է սրտի արտաներին, այնքամ թագավորում է մնացյալ անդամների և խորհուրդների վրա, քանզի այնտեղ են միտքը, բոլոր խորհուրդները և հոգու սպասումները: Դրա համար էլ շնորհը թափանցում է նաև մարմնի բոլոր անդամների մեջ:

256. Այդպիսին, ըստ գրվածի, (Ա Կորնթ., 2, 14) քննում է ամեն մարդու: Գիտի, թե յուրաքանչյուրն ինչ աղբյուրից է վերցնում խոսքը, որտե՞ղ կանգ առավ և ի՞նչ աստիճանի վրա է, մինչդեռ նրա մասին աշխարհի հոգին իրենց մեջ ունեցող մարդկանցից ոչ ոք չի կարող իմանալ և դատել: Միայն նա,

ով իր մեջ ունի երկնային Աստծո Հոգու նմանը, ճանաչում է իր նմանին, ինչպես ասում է Առաքյալը՝ հոգևոր բաները հոգևորների հետ ենք համեմատում:

257. Աստծո որդիներ դառնալու և ի վերուստ Սուրբ Հոգուց ծնվելու արժանացածները, իրենց մեջ ունենալով իրենց լուսավորող և հանգստացնող Քրիստոսին, բազմակերպ և տարբեր եղանակներով առաջնորդվում են Հոգով և շնորհը անտեսանելիորեն գործում է նրանց սրտերում Հոգևոր հանգստություն պարգևելով: Բայց աշխարհի տեսանելի վայելքներից վերցնենք օրինակներ, որպեսզի այդ նմանությունը մասնավորապես ցույց տանք, թե ինչպես է շնորհը գործում այդպիսիների Հոգիներում: Նրանք երբեմն լինում են բերկրանքի մեջ, ինչպես թագավորական երեկոյի ժամանակ, և հրճվում են ուրախությունը ու անբարբառելի բերկրանքով: Մի այլ պահի լինում են հանց հարս՝ հանրության մեջ իրենց փեսայի հետ՝ խաղաղված Աստվածային խաղաղությունը: Երբեմն էլ, ինչպես անմարմին Հրեշտակներ, գտնվելով դեռևս մարմնում, զգում են իրենց մեջ համանման թեթևություն:

յուն և թևավորվածություն: Երբեմն էլ լինում են կարծես թե խմիչքով արբեցած, Հոգով ուրախացած և խաղաղված, Աստվածային Հոգևոր խորհուրդներով զմայլված:

258. Բայց երբեմն կարծես սգում են և ափսոսում մարդկային ցեղի համար, և, աղոթելով բովանդակ Աղամի համար, արցունքներ են հեղում և լալիս՝ մարդկություն հանդեպ Հոգևոր սիրով բոցավառված: Երբեմն Հոգին այնպիսի խնդություն է սիրով է բոցավառում նրանց, որ, եթե կարելի լինի, կամփոփեին ամեն մի մարդու իրենց սրտում՝ չտարբերելով չարը բարուց: Հաճախ Հոգու խոնարհությունը այնքան են նվաստացնում իրենց ամեն մի մարդու առաջ, որ համարում են իրենց ամենավերջինը և ամենանվաստը: Երբեմն Հոգին նրանց մշտապես պահում է անբարբառելի ուրախության մեջ: Երբեմն նմանվում են Հոգու ռազմիկի, որը արքայական սպառազինությունը մարտի է դուրս է գալիս թշնամիների դեմ և մարտնչում է ուժերի լարումով՝ նրանց հաղթելու համար: Քանզի, ճիշտ այդպես և Հոգևորն է սպառազինվում Հոգու երկնային զենքերով, հարձակվում է թշնամիների վրա և պատերազ-

մում է նրանց հետ, որպեսզի ընկճի նրանց իր ոտքերի տակ:

259. Երբեմն հոգին խաղաղվում է ինչ-որ մեծ լուսթյամբ, անդորրով և խաղաղությամբ, լինելով լիակատար հոգևոր վայելքի, անճառելի հանգստի և բարօրության մեջ: Երբեմն շնորհով խորագիտանում է ինչ-որ բանի ճանաչողության մեջ, անճառելի իմաստությամբ, անքննելի Հոգու իմացությամբ, ինչն անհնար է բարբառել լեզվով և շուրթերով: Երբեմն մարդը դառնում է սովորականներից մեկը: Այդքան բազմակերպ է գործում շնորհը մարդկանց մեջ և շատ եղանակներով է առաջնորդում հոգին, հանգստացնելով նրան Աստծո կամոք և տարբեր ձևերով կրթում է նրան, որպեսզի կատարյալ, անբիծ և մաքուր ներկայացնի Երկնային Հորը:

260. Մեր կողմից թվարկված Հոգու այդ ներգործությունները ավելի մեծ չափերի են հասնում կատարելությանը մոտ եղողների մեջ: Քանզի շնորհի թվարկված բազմակերպ հանգստացումները տարբեր կերպ են արտահայտվում խոսքով և մարդկանց մեջ կատարվում են անդադար, այնպես որ մի ներ-

գործությունը հաջորդում է մյուսին:

Երբ հոգին հասնի Հոգու կատարելության, լիակես մաքրվելով բոլոր ախտերից, և՛ անճառելի հաղորդությամբ միավորվելով, և՛ շաղախվելով Մխիթարիչ Հոգու հետ, և՛ շաղախվելով Հոգով, ինքն էլ արժանի կլինի դառնալ հոգի:

Այդ ժամանակ այն դառնում է համակ լույս, համակ աչք, համակ հոգի, համակ ուրախություն, համակ հանգստություն, համակ ցնծություն, համակ սեր, համակ գթասրտություն, համակ ողորմածություն և բարություն: Ինչպես ծովի անդունդում քարը բոլոր կողմերից շրջապատված է ջրով, այդպես էլ այդ մարդիկ՝ ամեն ձևով շաղախված Սուրբ Հոգով, նմանվում են Քրիստոսին, անկասկածաբար ունենալով հոգևոր առաքինությունների գործությունը, ներքնապես լինելով անբիծ, անարատ և մաքուր:

Քանզի Հոգով նորոգվածները ինչպե՞ս կարող են արտաքուստ ի հայտ բերել մեղքի պտուղ: Հակառակ դրան, մշտապես և ամեն ինչում փայլում են նրանցում Հոգու պտուղները:

261. Մի այլ ոք մտնում է ծունկի գալու և

սիրտը նրա տոգորվում է Աստվածային ներգործութեամբ, հոգին հրճվում է Տիրոջ հետ, ինչպես հարսը փեսայի հետ, Եսայի Մարգարեի բառերով, որն ասում է՝ և ինչպես որ, օրինակ, փեսան է ուրախանում հարսի համար, այնպես էլ Տերն է ուրախ լինելու քեզ համար (Եսայի, 62, 5): Եվ երբեմն ամբողջ օրը ինչ-որ բանով զբաղված լինողը մի ժամ նվիրում է իրեն աղոթքին, և նրա ներքին մարդը աղոթքի հոգեվիճակում մեծագույն զմայլանքով վերանում է այն աշխարհի անհուն խորքերը, այնպես որ ամբողջովին մեկուսանում է այնտեղ ճախրող և սքանչացած միտքը: Այդ նույն ժամանակ խորհուրդներում մոռացվում է երկրային իմաստությունը, քանի որ խորհուրդները հագեցած են և զերված Աստվածայինով, երկնայինով, անսահմանով, անըմբռնելիով և ինչ-որ զարմանահարաչ բանով, ինչը մարդկային շուրթերով անհնար է բարբառել: Այդ ժամին մարդը աղոթում է և ասում. «Ա՛խ, եթե հոգիս էլ աղոթքի հետ գնար»:

262. Մշտապե՞ս է արդյոք մարդը հայտնվում այդ վիճակում: Ծշմարիտ է, որ շնորհն անընդհատ ներկա է, մարդու մեջ արմատա-

վորում և գործում է ինչպես թթխմոր պատանի հասակից, և մարդու մեջ առկա այդ շնորհը դառնում է որպես թե մի բնական և անքակտելի ու նրա հետ միասնացած էություն: Սակայն, ինչպես իրեն հաճելի է, զանազան ձևերով նա կերպափոխում է իր գործողությունները մարդու մեջ՝ հօգուտ նրա: Երբեմն այդ կրակը բռնկվում է և բոցավառվում ավելի ուժեղ, իսկ երբեմն՝ կարծես ավելի մարմրուն ու հանդարտ: Մի այլ ժամանակ այդ լույսը վառվում է և ավելի է պայծառանում, իսկ երբեմն էլ նվազում է և առկայծում: Եվ այդ ճրագը, մշտապես վառվելով և պայծառանալով, երբեմն դառնում է լուսավոր, ավելի է բռնկվում Աստծո սիրո արբեցումից, իսկ մի ուրիշ ժամանակ իր փայլն արձակում է խնայողաբար և մարդու մեջ ներկա լույսը լինում է ավելի աղոտ:

263. Ավելին, ոմանց լույսի մեջ հայտնվեց խաչի նշանը և մեխվեց ներքին մարդու մեջ: Երբեմն նաև մարդն աղոթելիս կարծես թե հուզավառության մեջ է ընկնում, թվում է, թե նա կանգնած է եկեղեցու զոհասեղանի առաջ և նրան երեք հաց է մատուցված, իբրև թե թաթախված ձեթի մեջ, և ինչ չափով

որ ճաշակում է դրանք, այդ չափով էլ հացերը բազմապատկվեցին և բարձրացան: Երբեմն երևում է լուսակիր ինչ-որ հանդերձ, որ պիսին չկա երկրի վրա այս կյանքում և որ պիսին չեն կարող պատրաստել մարդկային ձեռքերը: Քանզի, ինչպես Տերը Հովհաննեսի և Պետրոսի հետ բարձրանալով լեռան վրա, պայծառակերպեց Իր հագուստները և դարձրեց դրանք կայծականման, այդպես եղավ նաև այդ հանդերձների հետ, և դրանցով զգեստավորված մարդը զարմանում էր և զմայլվում: Մի այլ ժամանակ այդ լույսը, ծագելով սրտում, ի հայտ բերեց նրբին, խորունկ և ծածուկ լույս, ինչի պատճառով էլ մարդը, ամբողջովին կլանվելով նրա քաղցրությունը և նրա հայեցողությունը, այլևս ինքն իրեն չէր տիրապետում, այլ այս աշխարհի համար կարծես թե վայրագ ու բարբարոս էր՝ հորդահոս սիրո և քաղցրության ու նվիրական խորհուրդների պատճառով, այնպես որ մարդը, ստանալով այդ ժամանակ ազատություն, հասնում է կատարելության չափին, լինում է անբիծ և մեղքից զերծ: Բայց դրանից հետո շնորհը դարձյալ նվազում է և իջնում է հակառակ

ուժի մշուշը, իսկ շնորհը տեսանելի է լինում ասես մասամբ, և կատարելության ինչ-որ մի ցածր աստիճանում:

264. Մարդուն անհրաժեշտ է անցնել, այսպես ասած, տասներկու աստիճաններ և հետո հասնել կատարելության: Լինում է ժամանակ, երբ նա իսկապես նվաճում է այդ սահմանը և հասնում է կատարելության: Այնուհետև շնորհը կրկին սկսում է գործել ավելի թույլ, և մարդը ցած է իջնում մի աստիճան և կանգնում արդեն տասնմեկերորդին: Իսկ մի ուրիշը՝ հարուստ շնորհով, զօր ու գիշեր միշտ կանգնած է բարձրագույն աստիճանին, լինելով ազատ և մաքուր, մշտապես դյուլթված և զմայլված: Եվ արդ մարդը, որին ցույց են տրված այդ հրաշալիքները, և որը ճանաչել է դրանք փորձով, եթե նրա հետ միշտ այդպես լինեն, ապա արդեն չէր կարող ընդունել խոսքի տնօրինությունը կամ էլ մի այլ բեռ, չէր համաձայնվի ոչ լսել, ոչ հոգալ, ըստ սովորության, իր մասին և անցյալ առավոտովա մասին, այլ կնստեր մի անկյունում զմայլված և կարծես թե արբեցած: Այդ պատճառով էլ կատարելության չափը չի տրվում նրան, որ-

պեսզի նա կարողանա զբաղվել եղբայրների մասին հոգալով և խոսքի ծառայութեամբ, եթե տակավին քանդված չէ պարիսպների միջնապատը և մահը պարտված չէ:

265. Իսկ իրականում լինում է այսպես. ծանրացած օդի նման ասես մթամած մի ուժ նստած է մարդու վրա և թեթևակի ծածկում է նրան: Ճրագը մշտապես վառվում է և լուսավորում, սակայն լույսն ասես շղարշված է քողով, այդ պատճառով էլ մարդը խոստովանում է, որ ինքը դեռ կատարյալ չէ և դեռ կատարելապես ազատ չէ մեղքից, ինչի պատճառով, կարելի է ասել, պարիսպների միջնապատն արդեն ավերված և խորտակված է, իսկ մի ուրիշ տեղում չի քանդված ամբողջովին և մեկընդմիջտ: Քանզի լինում է, երբ շնորհն ուժգին խանդավառում է, մխիթարում և հանգստացնում է մարդուն, և լինում են պահեր, երբ այն ազդեցություն է և մարում, ինչպես ինքն է տնօրինում դա՝ ի օգուտ մարդու: Ո՞վ է թեկուզ մի պահ հասել կատարելության չափին, ճաշակել և փորձով հասու եղել դրան: Մինչ այժմ չեմ ճանաչում կատարյալ կամ ազատ որևէ քրիստոնյա մարդու: Ընդհակառակն, եթե

մեկը նույնիսկ հանգստանում է շնորհի մեջ, հասնում է խորհուրդների և հայտնությունների, շնորհական քաղցրություն զգացողության, ապա մեղքն էլ դեռևս առկա է նրանում: Այդպիսի մարդիկ, իրենց մեջ եղած շնորհի և լույսի առատություն պատճառով, իրենց համարում են ազատ և կատարյալ, բայց մեղանչում են դրանում՝ անփորձություն պատճառով խաբվելով հենց դրանով, որ իրենց մեջ գործում է շնորհը: Իսկ ես մինչ այժմ չեմ տեսել ոչ մի ազատ մարդու, և քանի որ մի ժամանակ ես էլ էի մասամբ հասել մինչև այդ չափին, ապա հասու եղա և գիտեմ, թե ինչու կատարյալ մարդ չկա:

266. Ասա՛ մեզ, թե ո՞ր աստիճանում ես դու: Արդ, խաչի նշանից հետո, շնորհն այնպես է գործում և խաղաղեցնում բոլոր անդամները և սիրտը, որ հոգին մեծ ուրախությունից նմանվում է անչար մանկան, և մարդը այլևս չի դատապարտում ո՛չ հեղինին, ո՛չ հրեային, ո՛չ մեղավորին, ո՛չ աշխարհականին, այլ բոլորին ներքին մարդը նայում է պարզ հայացքով և ուրախանում է ամբողջ աշխարհով և ամեն կերպ ցանկանում հարգել ու սիրել հեղիններին և հրեա-

ներին: Մի ուրիշ ժամի նա՝ թագավորի որդին, այնպես ամուր է ապավինում Աստուծո Որդուն որպես հորը: Բացվում են նրա առջև դռները, և ներս է մտնում նա բազմաթիվ օթեաններ. և ինչ չափով որ մտնում է, կրկին բացվում են նրա առաջ դռները համապատասխան թվով, օրինակ, հարյուր օթեանից ուրիշ հարյուր օթեան, և հարստանում է նա. և ինչ չափով հարստանում է, այդ չափով էլ նրան ցույց են տրվում նոր սքանչելիքներ: Նրան, որպես որդու և ժառանգորդի, վստահվում է այն, ինչը անհնար է բարբառել մարդկային բնությամբ, կամ էլ ասել շուրթերով և լեզվով:



Է

Քրիստոնյաների կատարելության բարձրագույն աստիճանը

267. Եզեկիել Մարգարեն պատմում է այն Աստվածային և փառավոր Հայտնության և տեսիլքի մասին, որը տեսավ ինքը, և նկարագրում է այն որպես անճառելի խորհուրդներով լեցուն Հայտնություն: Տեսավ նա դաշտում քերովբեական կառքը և չորս հոգևոր կենդանիներ: Յուրաքանչյուր կենդանի ուներ չորս դեմք. մի դեմքը առյուծի էր, մյուս դեմքը արծվի էր, մյուսը՝ զվարակի և մյուս դեմքը՝ մարդու: Եվ ամեն դեմքն ուներ թևեր, այնպես որ դրանցից ոչ մեկին հնարավոր չէր տարբերել՝ ո՞րն է առջևի կամ հետևի կողմը: Նրանց թիկունքները պատված էին աչքերով, և առջևից նույնպես լցված էին աչքերով, և տեղ չկար, որ աչքերով լեցուն չլինեին: Յուրաքանչյուր դեմքի վրա կար երեք անիվ, ասես անիվը անիվի մեջ և անիվների մեջ կենդանի հոգի կար:

Եվ Մարգարեն տեսավ մարդու նմանութ-
յամբ մեկին, որի գահը կարծես թե շափյու-
ղա էր: Այդ կառքը (այսինքն՝ Քերովբեները
և կենդանիները) կրում էր իր վրա վրա բազ-
մաժ Տիրոջը: Ուր էլ որ այն ցանկանար ըն-
թանալ, կենդանիները դեմքով դառնում
էին դեպի այդ կողմը: Եվ Մարգարեն Քերով-
բենների թևերի տակ կարծես թե մարդու ձեռք
տեսավ, որը նրանց պահում էր և թռցնում
տանում (Եզեկ., 1, 5-28):

268. Ճշմարիտ և անկասկած է եղել այն,
ինչը տեսավ Մարգարեն զմայլված: Բայց
այն կանխանչել է մի այլ խորհրդավոր և
Աստվածային իրողություն, սերունդներից
խկապես ծածկված խորհուրդը՝ հայտնված
վերջին ժամանակներում Քրիստոսի գալստ-
յամբ: Մարգարեն այդ տեսիլքի մեջ մտահա-
յել է հոգու գաղտնիքը, որն ընդունելու էր
իր Տիրոջը և դառնալու էր նրա փառքի գա-
հը:

Քանզի հոգին, որին հոգին, պատրաստե-
լով իր համար որպես աթոռ և օթևան, ար-
ժանացրեց հաղորդակից լինելու իր լույսին
և շողարձակեց իր անճառելի փառքի գեղեց-
կությամբ, դառնում է ամբողջովին լույս,

ամբողջովին դեմք, ամբողջովին աչք: Չկա
նրանում հոգևոր լուսեղեն աչքերով չհա-
մակված ոչ մի մաս, այսինքն՝ չկա նրանում
ոչինչ խավարչտին, այլ այն ամբողջութ-
յամբ լույսից է և հոգուց, ամբողջովին լե-
ցուն է աչքերով և չունի ոչ մի վերջին կամ
հետին կողմեր, այլ ամեն կողմից երևում է
դեմքով, քանի որ իջել է նրա վրա և բազ-
մում է նրա վրա Քրիստոսի Լույսի փառքի
անճառելի գեղեցկությունը:

Եվ ինչպես արեգակն ամենուր նման է ի-
րեն. չկա նրանում ոչ մի վերջին կամ պա-
կաս մաս, այլ, բաղկացած լինելով միանման
մասերից, այն ամբողջովին փայլում է լույ-
սով, և ամբողջովին լույս է, կամ ամբողջո-
վին կրակ, այսինքն՝ հենց կրակի լույս է,
ամբողջովին նման է ինքն իրեն և չունի իր
մեջ ոչ մի բան, որը առաջին լինի կամ վեր-
ջին, կամ էլ՝ մեծ կամ փոքր:

Այդպես և հոգում՝ կատարելապես լուսա-
վորված Քրիստոսի երեսից ճառագող լույսի
փառքի անճառելի գեղեցկությամբ և կա-
տարելապես հաղորդության մեջ լինելով
Սուրբ Հոգու հետ ու արժանանալով դառ-
նալ Աստծո բնակարան և գահ, ամեն ինչ

դառնում է համակ աչք, համակ լույս, համակ դեմք, համակ փառք, համակ հոգի, ինչպես որ պատրաստել է և զարդարել նրան հոգևոր վայելչությամբ Քրիստոսը, Որը և՛ տանում է, և՛ առաջնորդում է, և՛ պահպանում է, և՛ բարձրացնում է նրան: Քանզի ասված է, որ Քերովբեների տակ մարդկային ձեռքեր կային (Եզեկ., 1, 8): Ինքը Քրիստոսը և՛ բնակվում է հոգում, և՛ վարում է այն:

269. Կառքը տանող չորս կենդանիները հոգու իշխանական և բանական զորությունների պատկերներն են: Ինչպես արծիվը թագավորում է թռչուններին, առյուծը՝ վայրի գազաններին, եզր՝ հեզ կենդանիներին, խակ մարդը՝ բոլոր արարածներին. այդպես և հոգում կան առավել արքայական բանական զորություններ, այն է՝ կամք, խիղճ, միտք և սիրելու կարողություն:

Դրանցով կառավարվում է հոգու կառքը, դրանցում հանգչում է Տերը: Իսկ բացատրություն մի այլ եղանակով դա խորհրդանշում է Սրբերի երկնային Եկեղեցին: Եվ ինչպես այդտեղ մարգարեն խոսում է կենդանիների մասին, որ նրանց բարձրությունը չափազանց մեծ էր, որ նրանք լեցուն էին աչ-

քերով և որ ոչ ոք չէր կարող ընդգրկել աչքերի թիվը կամ բարձրությունը, քանզի տրված չէ դրա իմացությունը: Ինչպես ամեն մի մարդու տրված է տեսնել աստղերն երկնքում և հիանալ, բայց դրանց թիվը ոչ ոք չի կարող իմանալ, այդ կերպ և Սրբերի երկնային Եկեղեցի մտնելը և նրա ներսում վայելելը տրված է բոլոր ցանկացողներին, սակայն իմանալ և ընդգրկել Սրբերի թիվը Միակ Աստծո մենաշնորհն է:

Կառքում և բազմաչ կենդանիների գահին, կամ էլ Նրա գահը և օթևանը դարձած յուրաքանչյուր հոգում Նստածը՝ աչք և լույս դարձած, շարժվում է և տարվում է՝ նստած նրա վրա, հոգու սանձերով կառավարելով և ուղղություն տալով նրան ինչպես Ինքն է ուզում: Ինչպես հոգևոր կենդանիները շարժվում էին ոչ այնտեղ, որտեղ իրենք էին ուզում, այլ ուր գիտեր և ուզում էր նրանց վրա Նստածը և նրանց կառավարը, այդպես էլ այստեղ Ինքն է վարում և առաջնորդում՝ ճանապարհը ցույց տալով Իր Հոգով:

Այսպիսով, հոգիներն իրենց կամքով երկինք բարձրանալ չեն կարող, երբ ուզենան,

այլ Աստված է ուղղորդում հոգին, որը թոթափելով մարմինը, մտքով սլանում է երկինք. և դարձյալ, երբ հաճելի է Նրան, նա գործում է մարմնի և խորհուրդների մեջ, իսկ Նրա կամքով մոտենում է երկրի սահմաններին, և Նա ցույց է տալիս նրան գաղտնիքների հայտնություններ: Օ՛, հիրավի սքանչելի, բարի, միակ և ճշմարիտ Կառավար: Այսպես, եթե հոգին արդ կանխապես փառավորված է և միասնացել է Հոգու հետ, ապա մարմիններն էլ արժանի կլինեն բաժին ունենալու հարության մեջ:

270. Այն, որ բարեպաշտների հոգիները դառնում են երկնային լույս, այդ մասին Ինքը Տերն ասաց Առաքյալներին. Դո՛ւք եք աշխարհի լույսը (Մատթ., 5, 14): Ինքը, նրանց լույս դարձնելով, պատվիրեց, որ նրանց միջոցով լուսավորվի աշխարհը, և ասում է. Եւ ճրագ վառելով կաթսայի տակ չեմ դնում, այլ՝ աշտանակի վրա, և նա լույս է տալիս բոլոր նրանց, որ տան մեջ եմ: Թող այդպես փալի ձեր լույսը մարդկանց առաջ (Մատթ., 5, 15-16): Իսկ դա նշանակում է. մի՛ թաքցրեք շնորհը, որն ընդունել էք Ինձանից, այլ՝ փոխանցե՛ք բոլոր ցանկացողներին: Եվ դարձյալ՝ Մարմնի ճրագ

գը աչքն է. եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Եւ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչա՛փ ևս ավելի (Մատթ., 6, 22, 23): Ինչպես աչքերն են լույս մարմնի համար, և երբ դրանք առողջ են՝ ողջ մարմինը լուսավոր է. և, երբ աչքերի մեջ ինչ-որ բան է ընկնում, դրանք խավարում են, ապա ողջ մարմինը լինում է խավարում. այդպես Առաքյալները դրված են որպես աչքեր և լույս ողջ աշխարհի համար:

Այդ պատճառով էլ Տերը, պատգամելով նրանց, ասաց. «Եթե դուք, լինելով լույս աշխարհի համար, դիմանաք, անդրդվելի մնաք և չխոտորվեք, ապա լուսավոր կլինի ողջ աշխարհի մարմինը: Եվ, եթե դուք՝ աշխարհի լույսը, խավարեք, ապա խավարը՝ այսինքն՝ աշխարհը, որքա՛ն ևս ավելի»: Այսպիսով, Առաքյալները, դառնալով լույս, ծառայեցին հավատացյալների համար որպես լույս, լուսավորելով նրանց սրտերը Հոգու այն երկնային լույսով, որով լուսավորվել էին իրենք:

271. Ովքեր թոթափեցին իրենց վրայից

նախկին և հողեղեն մարդուն և որոնց վրայից Հիսուսը պոկեց խավարի թագավորութ-
յան հագուստները, նրանք զգեստավորվե-
ցին Հիսուս Քրիստոսի նոր և երկնային
մարդով: Եվ Տերը զգեստավորեց նրանց ան-
ճառելի լույսի արքայության հանդերձնե-
րով՝ հավատի, հույսի, սիրո, ուրախության,
խաղաղության, գթասրտության, բարութ-
յան հանդերձներով, նմանապես և Աստվա-
ծային ու կենարար մնացյալ բոլոր՝ լույսի,
կյանքի, անբարբառելի հանգստության
հանդերձներով, որպեսզի, ինչպես որ Աստ-
ված սեր է, ուրախություն, խաղաղություն,
բարություն, ողորմածություն, այդպես էլ
նոր մարդը շնորհով դառնա այդպիսին:

272. Կատարյալ քրիստոնյաները, արժա-
նանալով հասնելու կատարելության չափին
և դառնալու թագավորին մերձավորներ,
մշտապես նվիրաբերում են իրենց Քրիստո-
սի խաչին: Ինչպես Մարգարենների ժամա-
նակ առավել արժանապատիվն օծումն էր, ո-
րովհետև օծյալները թագավորներ էին և
Մարգարեններ, այդպես էլ հիմա հոգևոր
մարդիկ՝ օծվելով երկնային օծումով, շնոր-
հով են դառնում քրիստոնյաներ, երկնային

գաղտնիքների թագավորներ և մարգարեններ
լինելու համար: Նրանք և՛ որդիներ են, և՛
տերեր, և՛ աստվածներ՝ կապկապված, գերե-
վարված, գահընկեց արված, խաչված, ընծա-
յաբերված:

Եթե օծումը ձեթով, ինչպիսին ստանում
ենք երկրի բույսերից, տեսանելի ծառից, ու-
նեցավ այդպիսի զորություն, որ օծյալներն
անառարկելիորեն ստացան աստիճան (քան-
զի բոլորը խոստովանեցին, որ նրանք ձեռ-
նադրված են թագավորներ, և օծյալ Դա-
վիթն այդժամ ենթարկվեց հալածանքների և
վշտերի, իսկ յոթ տարի անց դարձավ թագա-
վոր), ապա որչափ առավել ևս նրանք, որոնց
միտքը և ներքին մարդը օծվում են լուսավո-
րող և ուրախացնող, երկնային և հոգևոր
ուրախության յուզով, կընդունեն այդ անա-
պական արքայության և հավիտենական զո-
րության կնիքը՝ առհավատչյան Հոգու,
Նույն Ինքը Սուրբ Հոգու և Մխիթարիչի
առհավատչյան (հասկացիր, որ Մխիթարիչը
և՛ մխիթարում է, և՛ ուրախացնում է վշտե-
րի մեջ եղողներին):

273. Նրանք, օծվելով երկնային տունկի՝
կենաց ծառի՝ Հիսուս Քրիստոսի յուզով,

արժանի են լինում հասնելու կատարելութ-
յան չափին, այսինքն՝ թագավորության և
որդեգրության, քանզի դեռևս գտնվելով
այս աշխարհում, արդեն երկնային թագա-
վորի խորհրդակից են, համարձակություն
ունեն Ամենակալի առաջ, մտնում են Նրա
պալատը, որտեղ Հրեշտակներն են և Սրբերի
հոգիները:

Քանզի, դեռևս չստացած իրենց համար
այն կյանքում պատրաստված կատարյալ
ժառանգությունը այն գրավականով, ինչ-
պիսին ընդունել են այստեղ, իրենց ապահո-
վել են որպես արդեն պսակվածներ և թագա-
վորողներ, և ունենալով Հոգու առատաբաշ-
խությունը և համարձակությունը, զարմա-
նալի չեն գտնում, որ թագավորելու են
Քրիստոսի հետ: Ինչո՞ւ: Քանի որ լինելով
դեռևս մարմնի մեջ, արդեն ունեին այն
քաղցրության զգացումը և այն զորության
ներգործությունը:

274. Ինչպես աշխարհի վախճանի ժամա-
նակ, երբ այս երկիրը չի լինի, արդարներն
արդեն կապրեն արքայության մեջ, լույսի
մեջ, փառքի մեջ, չտեսնելով ուրիշ ոչինչ,
բացի Քրիստոսից՝ մշտապես Հոր աջ կող-

մում փառքի մեջ նստած, այդպես էլ արդեն
այստեղ զմայլվածները և հափշտակվածները
և այն կյանք տարվածները, հայում են այն-
տեղի ողջ վայելչությունները և հրաշալիք-
ները: Քանզի մենք, տակավին երկրի վրա
բնակություն ունենք երկնքում որպես բնա-
կիչներ և քաղաքացիներ այդ աշխարհի՝
ըստ մտքի և ըստ ներքին մարդու: Ինչպես
տեսանելի աչքը, լինելով պարզ, մշտապես
պարզ է տեսնում արեգակը, այդպես և միտ-
քը, կատարելապես մաքրվելով, մշտապես
տեսնում է Քրիստոսի լույսի փառքը և զօր
ու գիշեր լինում է Տիրոջ հետ, նման այն բա-
նին, ինչպես Տիրոջ մարմինը, միավորվելով
Աստվածություն հետ, մշտապես գոյակից է
Սուրբ Հոգուն: Բայց այդ չափին մարդիկ
չեն հասնում միանգամից, այն էլ միայն ջան-
քերով, վշտերով, մեծ ճիգով:

275. Ինչպես Տերը թողեց ամենայն պե-
տություն և իշխանություն, մարմին առավ,
այդպես և քրիստոնյաները, զգեստավորվե-
լով Սուրբ Հոգով՝ լինում են խաղաղության
մեջ: Եթե անգամ պատերազմ է սկսվում
դրսից, կատաղում է սատանան, ապա
նրանք ներքուստ պարսպված են Տիրոջ զո-

րուժյամբ և չեն տագնապում սատանայի հարձակումներից: Երբ Տիրոջը փորձուժյան ենթարկեց անապատում քառասուն օր, փոքր ինչ վնասե՞ց արդյոք Նրան, երբ որ արտաքուստ մոտեցավ Նրա մարմնին: Այդ մարմնում Աստված էր: Այդպես և քրիստոնյաները, եթե անգամ փորձվում են դրսից, ապա ներքուստ տոգորված են Աստծո զորուժյամբ և չեն կրում ոչ մի վնաս: Իսկ եթե մեկը հասել է այդ աստիճանին, ապա հասել է Քրիստոսի կատարյալ սիրուն և լցված է Աստծով:

Իսկ ով այդպիսին չէ, նա նաև ներքին կռվի մեջ է դեռ: Ինչ-որ ժամի նա խաղաղվում է աղոթքով, ինչ-որ ժամի էլ հայտնվում է վշտերի և կռիվների մեջ: Քանզի այդպես է կամենում Տերը. քանի դեռ մարդը մանուկ է, կռիվներում նրան կառավարում է Տերը: Եվ ներսում հայտնվում են կարծես երկու դեմք՝ լույս և խավար, խաղաղուժյուն և վիշտ: Ինչ-որ ժամի խաղաղուժյամբ աղոթում են, իսկ ինչ որ ժամի հայտնվում են խռովքի մեջ:

276. Չե՞ս լսում, արդյոք, ինչ է ասում Պողոսը: Եթե ունենամ բոլոր պարգևները, և

եթե իմ այս մարմինը մատնեմ այրվելու և եթե խուսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներից, բայց սեր չունենամ, ոչինչ եմ (Ա Կորնթ., 13, 1-3). Քանզի այդ ձիրքերը առաջնորդում են միայն կատարելության, որին հասածները, չնայած լույսի մեջ են, սակայն դեռ մանուկ են: Շատերն են եղբայրներից բարձրացել այդ աստիճանին և ունեցել բժշկելու, հայտնագործուժյան և մարգարեուժյան շնորհներ, բայց քանի որ դեռ չեն հասել կատարյալ սիրուն, որ կապն է կատարելություն (Կողոս., 3, 14), ապա նրանց մեջ կռիվ սկսվեց և նրանք անհոգուժյան պատճառով ընկան:

Բայց ով հասնում է կատարյալ սիրո, նա դառնում է արդեն շնորհի կալանավորը և գերին: Իսկ ով աստիճանաբար մոտենում է սիրո կատարյալ չափին, բայց չի հասել դեռ այն բանին, որպեսզի դառնա սիրո կալանավորը, ապա գտնվում է դեռևս վտանգի մեջ, նրան սպառնում են պատերազմ և անկում. և եթե նա չպաշտպանի իրեն, ապա սատանան նրան կտապալի:

277. Յուրաքանչյուրը պետք է իմանա, որ կան աչքեր, որոնք ավելի ներքին են,

քան այս աչքերը, կա լսողություն, որն ավելի ներքին է, քան այս լսողությունը: Եվ, ինչպես այդ աչքերն են զգայականորեն տեսնում և ճանաչում ընկերոջ կամ սիրեցյալի դեմքը, այդպես էլ արժանավոր և հավատարիմ հոգու աչքերը՝ լուսավորված Աստվածային լույսով, հոգեպես տեսնում և ճանաչում են ճշմարիտ բարեկամին՝ քաղցր և անձկալի Փեսային՝ Տիրոջը, երբ որ հոգին պայծառացած է երկրպագության արժանի Հոգով: Եվ այդ կերպ, հոգին մտովի հայելով տենչալի և միակ անձառելի վայելչությունը, խոցվում է Աստվածային սիրով, տրամադրվում է բոլոր հոգևոր առաքինություններին և դրա շնորհիվ ձեռք է բերում անսահման և անսպառ սեր իր համար ըղձալի Տիրոջ հանդեպ:

278. Մովսեսի միջոցով տրված օրենքի սովերում Աստված պատվիրեց, որ շաբաթ օրը յուրաքանչյուրը հանգստանա և ոչինչ չանի: Իսկ դա Տիրոջ՝ հոգուն պարզեած ճշմարիտ շաբաթի օրինակն ու սովերն էր: Քանզի անպարկեշտ և անմաքուր խորհուրդներից ազատվելու արժանացած հոգին ճշմարիտ շաբաթ է պահում և հանգստա-

նում է ճշմարիտ հանգստով՝ զերծ և ազատ լինելով բոլոր խավար գործերից: Քանզի այնտեղ, նախօրինակ շաբաթում, չնայած մարմնապես հանգստացել են, սակայն հոգիները կապված են եղել նենգություններով և արատներով, իսկ այս ճշմարիտ շաբաթը իսկական հանգիստ է հոգու՝ ազատ և մաքրված սատանայական խորհուրդներից և հանգստացած Տիրոջ հավիտենական հանգստի և ուրախության մեջ:

279. Քանզի Տերը մարդուն կանչում է հանգստի, ասելով. եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգևածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ (Մատթ., 11, 28): Եվ այն հոգիները, որոնք հնազանդվում են և գալիս են, Նա հանգստացնում է այդ տանջալից և անմաքուր խորհուրդներից. ազատվում են ամեն տեսակ անօրինությունից, պահում են ճշմարիտ շաբաթը, հաճելի և սուրբ, անձառելի ուրախության և ցնծության հոգևոր տոնն են տոնում, մաքուր սրտով կատարում են սուրբ և Աստվածահաճո ծառայություն:

Եվ դա է ճշմարիտ և լուսավոր շաբաթը: Ուստի մենք էլ աղերսենք Աստծուն, որպեսզի մենք էլ մտնենք այդ հանգստի մեջ, ա-

զատվելով անպարկեշտ, նենգ և սին խորհուրդներին, և այդ կերպով կարող լինենք Աստծուն սուրբ սրտով ծառայելու և տոնելու Սուրբ Հոգու տոնը: Եվ երանի նրան, ով կմտնի այդ հանգստի մեջ:

280. Երբ հոգին կապվում է Տիրոջը, և Տերը, ներելով և սիրելով նրան, գալիս և կապվում է նրան, և նրա միտքը մշտապես արդեն լինում է Տիրոջ շնորհի մեջ, այդժամ հոգին և Տերը դառնում են մի շունչ, մի հոգի, մի շաղախ, մի միտք: Հոգու մարմինը մնում է երկրին կապված, իսկ նրա միտքը ամբողջովին բնակվում է երկնային Երուսաղեմում, հասնելով մինչև երրորդ երկինք, կապվելով Տիրոջը և այնտեղ ծառայելով Նրան:

281. Եվ Ինքը՝ երկնային քաղաքում, բարձունքներում մեծափառության գահին նստածը հոգու հետ ամբողջովին լինում է նրա մարմնում, քանի որ նրա պատկերը Նա դրեց Սրբերի քաղաքի՝ Երուսաղեմի բարձունքներում, իսկ Իր Աստվածության անճառելի լույսի սեփական Պատկերը դրեց նրա մարմնում: Նա ծառայում է նրան մարմնի քաղաքում, իսկ նա ծառայում է Նրան երկնային քաղաքում: Հոգին դար-

ձավ Նրա ժառանգորդը երկնքում, իսկ Նա ընդունեց նրան որպես ժառանգություն երկրի վրա:

Քանզի Տերը դառնում է հոգու ժառանգություն և հոգին՝ Տիրոջ ժառանգություն: Անգամ խարխափող մեղավորների խոհերը և միտքը կարող են շատ հեռու լինել մարմնից, կարող են մի ակնթարթում սրընթաց անցնել մեծ տարածություններ, տեղափոխվել հեռավոր երկրներ, և հաճախ մարմինը գամված է երկրին, իսկ միտքը մյուս կողմում լինում է սիրած էակի կամ էլ սիրեցյալի հետ, և կարծես թե իրեն տեսնում է այնտեղ ապրելիս:

Իսկ եթե մեղավորի հոգին այդչափ նուրբ է և սրաթուիչ, և նրա հոգու միտքն արգելքներ չունի հեռավոր վայրերում լինելու, առավել ևս հոգին, որի վրայից Սուրբ Հոգու զորությունը վերցված է խավարի ծածկոցը, երբ նրա մտքի աչքերը լուսավորված են երկնային լույսով և կատարելապես ազատված է անարգ կրքերից, շնորհով դարձել է անբիծ, երկինքներում հոգով ամբողջովին կծառայի Տիրոջը, և ամբողջովին կծառայի Նրան մարմնով, և մտքով այնքան կծավալ-

վի, որ կլինի ամենուր, որտեղ և երբ կամենա, կծառայի Քրիստոսին:

282. Դա ասում է Առաքյալը՝ և կարողանաք հասկանալ բոլոր սրբերի հետ, թե ի՞նչ է լայնությունը, երկարությունը, բարձրությունը և խորությունը, այսինքն՝ ճանաչեք Քրիստոսի սերը, որ գերազանց է, քան ամեն գիտություն, որպեսզի լցվեք Աստծու լրիվ ամբողջությամբ (Եփես. 3, 18-19): Քննի՛ր անճառելի գաղտնիքները հոգու, որից Տերը հալածում է այնտեղ նստած խավարը, և բացում է նրան, և ինքն է նրան բացվում: Ինչպես է ընդարձակում և ընդլայնում նրա մտքի խոհերը բոլոր երևելի և աներևույթ արարածների և՛ լայնության մեջ, և՛ երկարության մեջ, և՛ խորության մեջ, և՛ բարձրության մեջ (46, 5):



Ը Հանդերձյալ կյանքը

283. Երբ որ մարդու հոգին դուրս գա մարմնից, այդժամ կկատարվի մեծագույն մի խորհուրդ: Քանզի, եթե այն մեղապարտ է, ապա գալիս են դեերի բազմություններ և չար հրեշտակներ, և խավար ուժեր, բռնում են այդ հոգին և տանում են իրենց սեփական տիրույթը: Եվ ոչ ոք չպետք է զարմանա դրանից, քանի որ եթե հոգին, գտնվելով այս կյանքում, գտնվելով այս աշխարհում, ենթարկվել և հպատակվել է նրանց, և եղել է նրանց կամակատարը, ապա առավել ևս պահվում է նրանցից և նրանց իշխանության տակ է մնում, երբ ելնում է աշխարհից: Իսկ ինչ վերաբերում է բարի վախճանին, ապա դու պետք է պատկերացնես, որ գործն այսպես է: Աստծո սուրբ ծառաների կողքին արդեն այստեղ լինում են Հրեշտակները, և սուրբ հոգիները նրանց շրջապատում և պահպանում են: Եվ երբ հեռանում են մարմնից, այդժամ Հրեշտակաց դասերը, ընդունելով նրանց հոգիները իրենց սեփական տիր

րույթի՝ լուսավոր կյանքի մեջ, տանում են Տիրոջ մոտ:

284. Իսկական մահը ներսում է՝ սրտում, և այն զաղտնածածուկ է, դրանով մեռնում է ներքին մարդը: Այդ պատճառով էլ, եթե մեկը մահից անցել է սրբազան կյանք, ապա նա իսկապես կապրի հավիտյան և չի մեռնի: Եթե նմանների մարմինները ինչ-որ ժամանակ անդամ քայքայվում են, ապա վերստին փառքով հարույթյուն կառնեն, քանզի լուսավորված են: Այդ պատճառով էլ քրիստոնյայի մահն անվանում ենք նինջ և վերափոխում:

285. Ինչպես հեռուներից դարձող վաճառականը, իր բազմապատկած շահույթներն ուղարկում է տնեցիներին, որպեսզի գնեն նրա համար տներ, այգիներ և անհատեղտ հանդերձանք, երբ վերադառնում է հայրենիք, բերում է իր հետ մեծ հարստություն, տնեցիները և հարազատները մեծ ցնծությամբ են ընդունում նրան: Այդպես լինում է և հոգևոր կյանքում: Եթե ոմանք գտնում են երկնային հարստություն, ապա համաքաղաքացիները, այսինքն՝ սուրբ Հրեշտակների հոգիները, իմանում են այդ մասին և զարմանում են՝ ասելով. «Մեծ հարստություն

ձեռք բերեցին մեր եղբայրները, որոնք երկրում են»: Այդպիսիք, իրենց ելքի ժամանակ, ունենալով Տիրոջն իրենց հետ, ցնծությամբ ելնում են երկնաբնակաների մոտ, և Տիրոջ հետ եղողներն ընդունում են նրանց, պատրաստելով նրանց համար այնտեղ օթևաններ, այգիներ, լուսաճաճանչ և թանկարժեք հանդերձանք:

286. Եթե մարդը, տակավին գտնվելով պատերազմների մեջ, երբ նրա հոգում գործում են և՛ մեղքը, և՛ շնորհը, հեռանա այս աշխարհից, ապա ո՞ւր կգնա և՛ մեկը, և՛ մյուսն ունեցողը: Գնում է այնտեղ, որտեղ միտքն ունի իր նպատակը և սիրած վայրը: Եթե վրա են հասնում վիշտը կամ պատերազմը, քեզ հարկ է միայն ընդդիմանալ և ատելությամբ լցվել: Քանզի, որպեսզի պատերազմ սկսվի, դա քո գործը չէ, իսկ ատելը՝ քո գործն է: Եվ այդժամ Տերը, տեսնելով քո միտքը, քանի որ ջանում ես և սիրում ես Տիրոջն ամբողջ հոգով, այդժամ հեռացնում է մահը քո հոգուց (դա դժվար չէ՝ նրա համար) և ընդունում է քեզ իր գիրկը և լույսի մեջ, ժամանակի մի ակնթարթում քեզ հափշտակում է խավարի երախից և անմիջապես տանում է իր թագավորություն:

Աստծուն դյուրին է ամեն ինչ կատարել մի ակնթարթում, միայն թե սեր ունենաս Նրա հանդեպ: Աստված մարդուց պահանջում է, որ նա գործի, քանզի հոգին արժանացել է Աստծո հետ հաղորդակցվելու:

287. Որովայնում հղանալով, կինն իր մեջ կրում է իր մանկանը խավարում, այսպես ասած, և անմաքուր տեղում: Եվ երբ, ի վերջո, մանուկը ելնում է որովայնից համապատասխան ժամանակին, տեսնում է նա երկնքի, երկրի և արեգակի համար նոր արարած, որպիսին երբեք չի տեսել, և այդժամ բարեկամները և հարազատները հրճվանքով գրկում են մանկանը: Իսկ եթե ինչ-որ անկարգության պատճառով պատահում է, որ մանուկը մեռնում է որովայնում, ապա կանչված բժիշկներին հարկ է դիմել սուր գործիքների և այդժամ մանուկն անցնում է մահվանից մահ, խավարից՝ խավար: Նույնը կիրառիր հոգևորի նկատմամբ: Իրենց մեջ Աստվածային սերմն ընդունածներն իրենց մեջ այն կրում են անտեսանելի կերպով, և իրենց մեջ ապրող մեղքի պատճառով՝ մոլթ և սարսափելի տեղերում: Դրա համար էլ, եթե պահեն իրենց և պահպանեն սերմը, ապա համապատասխան ժամանակին կծնեն այն հայտնա-

պես, և ի վերջո մարմնից բաժանվելուց հետո, Հրեշտակները և ողջ երկնային դասերն ուրախ դեմքերով կընդունեն նրանց: Իսկ եթե արիաբար մարտնչելու համար Քրիստոսի զենքն իր վրա վերցրածը թուլանա, ապա շուտով կհանձնվի թշնամիներին, և մարմնից բաժանվելուց հետո, իրեն այժմ պահող խավարից կհայտնվի մի այլ, ավելի սարսափելի խավարի և մահվան մեջ:

288. Ինչպես նեղ անցատեղերում նստած հարկահավաքներն են կանգնեցնում ու լլկում անցորդներին, այդպես և դեերը հետևում են և պահում են հոգիներին, և եթե հոգին մաքրվել է ոչ լիովին, ապա մարմնից անջատվելուց հետո, թույլտվություն չի ստանում մտնելու երկնային օթևանները և ներկայանալու Տիրոջը, այլ ներքև է տարվում օդային դեերի կողմից: Սակայն մարմնի մեջ գտնվողները, վաստակների և մեծ ջանքերի շնորհիվ, դեռ կարող են ի վերուստ Տիրոջից շնորհ ստանալ: Եվ նրանք առաքինի վարքի համար հանգստություն ձեռք բերածների հետ կգնան Տիրոջ մոտ, ինչպես որ Նա Ինքն է ուխտել. և ուր Ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան (Հովհ., 12, 26), և անհուն դարեր կթագավորեն Հոր և Որդու և Սուրբ Հոգու

հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտե-
նից:

289. Յուրաքանչյուրը պետք է աշխատի
և ջանա բոլոր առաքինությունների մեջ ա-
ռաջադիմելով ձեռք բերել այդ տաճարը՝
հավատալով, որ այն ձեռք է բերվում այս-
տեղ: Քանզի, եթե քայքայվի մեր մարմնա-
վոր տաճարը, մի այլ տաճար մենք չունենք,
որի մեջ կրնակվի մեր հոգին: Ինչպես ասված
է, փափագում ենք երկնքի բնակությունը հազնել
(Բ Կորնթ., 5, 3), այսինքն՝ զրկված չենք լի-
նի Սուրբ Հոգու հետ հաղորդակցվելու և
միավորվելու, Որի մեջ էլ միայն կարող է
հանգչել հավատարիմ հոգին: Այդ պատճա-
ռով էլ նրանք, որոնք իսկությամբ և գորութ-
յամբ էապես քրիստոնյա են, վստահորեն ա-
պավինում են և ուրախանում, այս մարմնից
դուրս գալով, որ ունեն այդ անձեռակերտ տա-
ճարը. տաճարն այդ նրանցում բնակվող Հո-
գու գորությունն է: Եվ եթե քայքայվի մարմ-
նական տաճարը, նրանք չեն սարսափի, քան-
զի ունեն երկնային հոգևոր տաճար և այն
անթառամ փառքը, որը հարության օրը
կկերտի և կփառավորի նաև մարմնի տաճա-
րը, ինչպես ասում է Առաքյալը. Ով հարույթ-
յուն տվեց Հիսուսին, մեզ էլ հարույթյուն կտա Հի-

սուսի հետ, և դարձյալ՝ որպեսզի Հիսուսի
կյանքն էլ Հայտնվի մեր մահկանացու մարմնա-
նի մեջ (Բ Կորնթ., 4, 11), և՛ ինչ որ մահկանա-
ցու է, ինչպես ասված է, կլանվի կյանքից (Բ
Կորնթ., 5, 4):

290. Հետևաբար ջանանք հավատով և ա-
ռաքինի կյանքով դեռևս այստեղ ձեռք բե-
րել այդ հազուստը, որպեսզի մենք՝ մարմնի
մեջ գտնվողներս, չերևանք մերկանդամ, և
այդժամ այն օրը ոչինչ չի փառավորի մեր
մարմինը: Քանզի ինչ չափով արժանացավ
յուրաքանչյուրը հավատի և ջերմեռանդութ-
յան համար հաղորդակիցը դառնալու Սուրբ
Հոգու, այդ չափով էլ փառավորված կլինի
այն օրը նաև նրա մարմինը: Ինչը որ այժմ
ժողովել է հոգին իր ներքին գանձարանում,
այդ էլ այնժամ կբացվի և կերևա մարմնից
դուրս: Ինչպես և ծառերը, երբ ձմեռն անց-
նելուց հետո, նրանց ջերմացնի արևի և քա-
մինների անտեսանելի ուժը, որպես հազուստ,
իրենցից աճեցնում են տերևներ, ծաղիկներ
ու պտուղներ, ինչպես նաև այդ ժամանակ
երկրի ընդերքներից դուրս են գալիս նաև
դաշտային ծաղիկները և դրանցով ծածկ-
վում և զգեստավորվում են հողը և խոտը,
նման այն դրախտաշուշաններին, որոնց մա-

սին Տերն ասաց. որ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մեջ, չհազարկեց Արամցից մեկի Աման (Մատթ., 6, 29): Քանզի այդ ամենը քրիստոնյայի օրինակը, պատկերը և նմանությունն է հարության օրը:

291. Այդպես բոլոր աստվածասեր հոգիների, այսինքն՝ ճշմարիտ քրիստոնյաների համար կա առաջին ամիսը Ապրիլ անվանումով. և դա հարության օրն է: Արդարության Արեգակի այդ զորությամբ էլ բխեցվում է ներսից Սուրբ Հոգու փառքը՝ Սրբերի մարմինները ծածկող և զգեստավորող, այդ նույն փառքը, որ նրանք ունեին իրենց հոգիներում ծածուկ կերպով: Քանզի, արդ ինչ ունի հոգին իրենում, դա էլ ի հայտ կգա մարմնում: Այս ամիս, ասում եմ, թող տարվա առաջին ամիսը լինի (Ելից, 12, 2), այն տալիս է բոլոր արարածներին ցնծություն, այն ճեղքելով երկիրը, հազուստով զգեստավորում է մերկացած ծառերը, այն ուրախություն է տալիս բոլոր կենդանիներին, այն պարգևում է բոլորին խնդություն, այն քրիստոնյաների առաջին ամիսն է: Քսանֆիկը, այսինքն՝ հարության ժամանակը, երբ կփառավորվեն նրանց մարմինները անճառելի լույսով, այստեղ նրանց մեջ ծածուկ, այսինքն՝ Հոգու գո-

րությամբ, Որը կլինի այն ժամանակ նրանց հազուստը, կերակուրը, ըմպելիքը, ուրախությունը, խնդությունը, խաղաղությունը, հանդերձանքը, հավիտենական կյանքը: Քանզի Աստծո Հոգին, որին այստեղ արդեն արժանացել են ընդունել իրենց մեջ, այնժամ նրանց համար կդառնա երկնային պայծառության և գեղեցկության վայելչություն:

292. Ուստի և մեզանից յուրաքանչյուրը պետք է աշխատի և ջանա եռանդագին վարժեցնել իրեն բոլոր առաքինությունների մեջ, հավատա և խնդրի Տիրոջից, որպեսզի ներքին մարդը դեռևս այստեղ դառնա այդ փառքին հաղորդակից և հոգին հաղորդ լինի Հոգու սրբությանը, և որպեսզի, մաքրվելով ախտերի գարշությունից, հարության ժամին ինչ-որ բան ունենանք մեր հարություն առած մերկ մարմինները զգեստավորելու, դրանով ծածկելով դրանց ամոթը, որպեսզի կենդանություն և հավիտենական հանգիստ ստանան Երկնային Արքայության մեջ, քանի որ ըստ Սուրբ Գրոց, Քրիստոսը գալու է երկնքից և հարություն է տալու Ադամի ողջ սերունդին, աշխարհի սկզբից ի վեր բոլոր ննջեցյալներին և բաժանելու է նրանց երկու մասի, և որոնք ունեն նրա ու-

րույն նշանը, այսինքն՝ Հոգու կնիքը, նրանց հոգևակելով որպես Իրենը՝ կկանգնեցնի Իր աջ կողմում: Քանզի ասում է՝ Իմ ոչխարները Իմ ձայնը լսում են. (Հովհ., 10, 27), և Ես ճանաչում եմ Իմ ոչխարներին ու ճանաչվում նրանցից (Հովհ., 10, 14): Այդ ժամանակ էլ նրանց մարմինները բարի գործերի համար զգեստավորվում են Աստվածային փառքով, և իրենք էլ կլցվեն այն հոգևոր փառքով, որը դեռևս այստեղ արդեն ունեին իրենց հոգիներում: Եվ այդ կերպ Աստվածային լույսով փառավորվելով և հափշտակվելով ու երկինք տարվելով Տիրոջն ընդառաջ օդում, ըստ գրվածի, սշտապես Տիրոջ հետ կլինենք (Աթես., 4, 17), Նրա հետ թագավորելով անվախճանորեն հավիտյանս հավիտենից: Արդ ջանանք կանխավ ունենալ մեզ վրա Տիրոջ նշանը և կնիքը, քանի որ դատաստանի ժամին, երբ Աստված կկատարի բաժանումը և հավաքված կլինեն երկրի բոլոր սերունդները՝ Ադամն ամբողջությամբ, երբ Հովիվը կկանչի Իր հոտը, այդ ժամ իրենց վրա նշան ունեցողները բոլորը կճանաչեն իրենց Հովիվին, և Հովիվը կճանաչի Իր սեփական կնիքն իրենց վրա ունեցողներին և կհավաքի նրանց բոլոր ժողովուրդներից. կլսեն

Նրա ձայնը յուրայինները և կգնան Նրա հետևից: Երկու մասի կբաժանվի աշխարհը. մի մասը կլինի խավար հոտը, որը կմատնվի հավերժական կրակին, իսկ մյուսը՝ լույսով պարուրված հոտը, կբարձրանա երկնային վիճակի: Արդ, ինչ-որ շահեցիկք մենք մեր հոգիներում, այդ նույնն էլ կշողշողա այն ժամ և փառքով կզգեստավորի մարմինները:

293. Հարուժյան ժամանակ բոլոր անդամները հարուժյուն կառնեն: Աստծո համար դժվարին ոչինչ չկա: Այդպիսին է և Նրա ուխտը: Մարդկային տկարությունը և մարդկային բանականությունը դա կարծես թվում է անհնար: Ինչպես Աստված, վերցնելով փոշին ու հողը, ստեղծեց կարծես թե մի այլ էություն, այսինքն՝ հողին ոչ նման մարմնավոր էություն, և ստեղծեց բնությունների բազում տեսակներ, այն է՝ մագեր, մաշկ, ոսկորներ, ջլեր. և ինչպես կրակի մեջ գցված ասեղը փոխում է գույնը և դառնում է կրակ, մինչդեռ երկաթի բնությունը չի ոչնչանում, այլ մնում է նույնը, այդպես և հարուժյան ժամանակ բոլոր անդամները հարուժյուն կառնեն, և ըստ գրվածի՝ ձեր գլխից մի մազ անգամ չպիտի կորչի (Ղուկ., 21, 18), և ամենը կդառնա լուսեղեն: Ամեն ինչ

ընկղմվելով՝ կվերափոխվի լույսի և կրակի, սակայն չի ապականվի և կրակ չի դառնա այնպես, որ նախկին բնությունը գոյություն չունենա, ինչպես պնդում են ոմանք: Քանի որ Պետրոսը մնում է Պետրոս, Պողոսը՝ Պողոս, Փիլիպոսը՝ Փիլիպոս. յուրաքանչյուրը, լցվելով Հոգով, պահպանում է իր սեփական բնությունը և էությունը: Իսկ երբ պնդում են, որ բնությունը փոխվել է, ապա ուրեմն այլևս Պետրոսը կամ Պողոսը չկա, այլ բոլորի մեջ և ամենուր Աստված է, և գեհեն գնացողները պատիժ չեն զգա, իսկ արքայություն գնացողները՝ բարերարություն:

294. Պատկերացրու մի այգի, որտեղ կան ամեն տեսակ պտղատու ծառեր, այնտեղ կային տանձենի, խնձորենի և խաղողի վազ՝ պտուղներով և տերևներով, բայց և՛ այգին, և՛ բոլոր ծառերն ու տերևները փոխվել են և ստացել մի այլ բնություն և նախկին ամեն ինչ դարձել է լուսեղեն: Այդպես և մարդիկ կփոխվեն հարության ժամանակ, և նրանց անդամները կդառնան սուրբ և լուսեղեն:

295. Ինչպես Տիրոջ մարմինը, երբ Նա բարձրացավ լեռը, փառավորվեց և պայծառակերպվեց Աստվածային փառքի և անհատնում լույսի, այդպես և Սրբերի մարմին-

ները փառավորվում են և դառնում են ճաճանչափայլ: Քանզի, ինչպես Քրիստոսի ներքին փառքը այդ չափով տարածվեց և ճառագում էր Քրիստոսի մարմնի վրա, այդպես էլ Սրբերի ներսում ներկա Քրիստոսի գորությունը այն օրը կհեղվի և կսփռվի նրանց մարմինների վրա, քանի որ նրանք դեռևս այստեղ իրենց մտքով հաղորդ են Քրիստոսի էությանը և Քրիստոսի բնությանը: Քանզի գրված է՝ Աս, որ սրբացնում է, և նրանք, որ սրբացվում են, բոլորն էլ մեկի՛ց են. (Եբր., 2, 11), նաև՝ Եւ ես տվեցի նրանց այն փառքը, որ դու Ինձ տվեցիր (Հովհ., 17, 22): Ինչպես մի կրակով լուցանվում են բազում կանթեղներ, այդպես պարտ է և Սրբերի մարմիններին՝ Քրիստոսի այդ անդամներին, մեկ դառնալ իր՝ Քրիստոսի հետ:

296. Նաև կատարյալները, քանի դեռ մարմնի մեջ են, թեև ազատ են, բայց հոգսերից զերծ չեն և վախի մեջ են, այդ պատճառով էլ նրանց թույլատրվում են փորձություններ: Իսկ երբ հոգին մտնի Սրբերի այն քաղաքը, միայն այդժամ կլինի առանց վշտերի և փորձությունների, քանի որ այնտեղ չկան ոչ հոգսեր, ոչ վշտեր, կամ նեղություններ, կամ ծերություն, կամ սատա-

նաներ, կամ պատերազմներ, այլ այնտեղ կա հանգիստ, ուրախություն, խաղաղություն և փրկություն: Այդտեղ նրանց մեջ է Տերը, Ում անվանում են Փրկիչ, քանի որ փրկում է գերվածներին, անվանում են Բժիշկ, քանի որ տալիս է երկնային և Աստվածային բժշկություն և բուժում է ինչ-որ չափով մարդուն տիրող հոգու կրքերը: Մի խոսքով՝ Հիսուսը թագավոր է և Աստված, իսկ սատանան՝ չարչարող և չար իշխան:

297. Քանի որ ոմանք վաճառում են ունեցվածքը, ազատություն են շնորհում ստրուկներին, կատարում են պատվիրանները, սակայն չեն փափագում այս կյանքում ընդունել Հոգին, ապա այս կերպ ապրելով, մի՞թե նրանք չեն մտնի երկնային Արքայություն: Դա քննարկման նուրբ առարկա է: Քանզի ոմանք պնդում են, որ մեկ Արքայություն է և մեկ գեհեն, իսկ մենք ասում ենք, որ բազում աստիճաններ, տարբերություններ և չափեր կան այդ նույն արքայությունում և այդ նույն գեհենում: Ինչպես բոլոր անդամների մեջ մեկ հոգի է, և վերևում այն գործում է ուղեղում, իսկ ներքևում շարժման մեջ է դնում ոտքերը, այդպես և Աստված է ընդգրկում ողջ արարած-

ներին, և՛ երկնայիններին, և՛ անդունդից էլ վար եղողներին, և ամենուր բովանդակապես արարածների մեջ է, չնայած իր անչափելիությանը և անընդգրկելիությանը՝ Նա նաև դուրս է արարածներից: Այդ պատճառով էլ Աստված Ինքն է լսում մարդկանց և ամեն ինչ տնօրինում իմաստով: Եվ քանի որ ոմանք աղոթում են, չիմանալով ինչ են խնդրում, ուրիշները պաս են պահում, մյուսները ծառայության մեջ են, ապա Աստված՝ արդար Դատավորը, յուրաքանչյուրին պարգևներ է տալիս ըստ նրա հավատի չափի: Քանզի ինչ որ անում են նրանք, անում են Աստծուց երկյուղելով, բայց նրանք ոչ բոլորն են որդիներ, թագավորներ, ժառանգներ:

298. Աշխարհում ոմանք մարդասպաններ են, ուրիշները՝ շնացողներ, մյուսները՝ կողոպտիչներ, իսկ ոմանք էլ հավասարապես բաժանում են իրենց սեփական ունեցվածքն աղքատներին: Տերը նայում է և՛ նրանց, և՛ մյուսներին, և բարիք գործողներին տալիս է հանգիստ և պարգևներ. կա չափի լիություն և չափի սակավություն, և հենց լույսի մեջ և փառքի մեջ էլ կա զանազանություն: Գեհենում և պատժի մեջ կան թունավորողներ, և

ավագակներ, և փոքր բաներում մեղանչածներ: Իսկ ուղքեր պնդում են, որ մեկ է արքայուլթյունը և մեկ է դժոխքը և աստիճաններ չկան, նրանք սխալվում են: Հիմա ինչքան աշխարհիկ մարդիկ կան, որոնք տարված են հանդիսություններով և այլ անառակություններով: Եվ ինչքան էլ դեռ կան հիմա այնպիսիները, որոնք աղոթում են Աստծուն և երկյուղում Նրանից: Աստված նայում է և՛ նրանց, և՛ մյուսներին, և որպես արդար Դատավոր պատրաստում է ոմանց հանգիստ, մյուսներին՝ պատիժ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Մակար Մեծի կյանքի և գրվածքների մասին.....	5
Նախկին լուսավոր վիճակը.....	11
Անկյալի խավար վիճակը.....	18
Տերը փրկության Տնօրինող.....	40
Տիրոջով փրկվելու հասարակամ վճռականության ձևավորումը.....	51
Մաքառումների վիճակը.....	103
Նոգու ներգործությունն ընդունածների վիճակը.....	161
Քրիստոնյաների կատարելության բարձրագույն սարիճակը.....	243
Նանդերձյալ կյանքը.....	261

Թարգմ. ռուսերենից՝
Ա. Գ. Ալեքսանյանի

Խմբագիր՝ Ասողիկ Եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Յ. Նովիաննիսյան